# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

**Առկա ուսուցում 1824 թողարկում**

**Կառավարման ամբիոն**

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

# ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

**«Կառավարում» մասնագիտությամբ կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան հայցելու համար**

**Կրթական ծրագիր՝ «Հանրային կառավարում»**


**Մագիստրանտ՝** Սիրանուշ Մամիկոնի Օհանյան

**Ղեկավար՝** Ավետիս Գևորգի Գևորգյան
տ.գ.թ.

**Ամբիոնի վարիչ՝** Վիլեն Վիկտորի Խաչատրյան
տ.գ.թ., դոցենտ


**Երևան 2020**

## *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

*ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ* .......... *3*

*ԳԼՈՒԽ 1. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ և ՊԱՅՔԱՐԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ* *7*

*1. 1 Աղքատության ընդհանուր բնութագիրը և դրա հաղթահարմանը միտված միջոցառումները* .......... 7

*1.2 Աղքատության դեմ պայքարի միջազգային փորձը և Հայաստանի քայլերը* .......... 29

*ԳԼՈՒԽ 2. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԱՃԻ և ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ* .......... *39*

*2.1 ՀՀ կրթական համակարգի մարտահրավերներն ու հեռանկարները* .......... 39

*2.2 Կրթության դերն ու նշանակությունը հարափև փոփոխվող աշխարհում աղքատության հաղթահարման տեսանկյունից* .......... 56

*2.3 Հայաստանցիների կողմից կրթությունից բավարարվածության, կրթություն-բարեկեցություն կապի գնահատումը, կրթությունից աշխատաշուկա անցնելու դժվարությունները. (սեփական սոցիոլոգիական հարցման արդյունքները)* .......... 68

*ԳԼՈՒԽ 3. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ* .......... *76*

*3.1 Կրթական համակարգի վերլուծությունը սոցիալական զարգացման համատեքստում* .......... 76

*3.2 Կրթությունը՝ որպես անձի բարեկեցության մակարդակի բարձրացման գործիք* 93

*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ* .......... *103*

*ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ* .......... *107*

*ՀԱՎԵԼՎԱԾ* .......... *117*

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աղքատությունը մի մարտահրավեր է, որի հաղթահարմանն են միտված այսօր բազմաթիվ միջոցառումներ, որոնք իրականացվում են բազմաթիվ երկրների և մի շարք կազմակերպությունների կողմից: Աղքատությունն ավելին է, քան կայուն կենսամիջոցներ ապահովելու համար անհրաժեշտ եկամտի և ռեսուրսների պակասը: Աղքատությունը բերում է սովի, թերսնուցման, սոցիալական խտրականության ու մեկուսացման, այնպիսի կենսունակ ծառայությունների սահմանափակ հասանելության, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը և այլ հիմնական ծառայությունները: Աղքատության մեղմման գործում մեծ է մարդկային կապիտալի զարգացման դերը՝ ի դեմս կրթության: Որակյալ կրթությունը բարելավում է մարդկանց կյանքն ու բերում կայուն զարգացման: Կրթությունը բանալի է, որը հնարավորություն է տալիս մարդկությանը ճեղքել աղքատության շղթան ու հասնել բարեկեցության: Կրթությունն օգնում է կրճատել անհավասարությունները, ինչպես նաև հասնել գենդերային հավասարության: Եվ որ ամենից կարևորն է յուրաքանչյուր սոցիալական, ժողովրդավարական պետության համար՝ այն է, որ կրթությունը վճռորոշ դեր ունի մարդկանց միջև հանդուրժողականության ձևավորման հարցում և նպաստում է խաղաղ հասարակությունների ձևավորմանը:

Աղքատությունը (մասնավորապես ծայրահեղ աղքատությունը) մեր երկրում լրջագույն խնդիր է: Ուստի պետք է խթանել կրթության և գիտության զարգացումը, ինչի շնորհիվ է միայն հնարավոր հասնել կայուն ու ներառական զարգացման, աղքատության հաղթահարման ու համընդհանուր բարեկեցության:

**Ուսումնասիրության թեմայի արդիականությունը:** 20-րդ դարի վերջին վերականգնելով իր անկախությունը՝ Հայաստանի Հանրապետությունը դեռևս պահպանում է անցումային ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկությունները, որոնցից առանցքային է երկրում աղքատության բարձր մակարդակը: «Ազգային անվտանգության ռազմավարության» ներքին անվտանգության ռազմավարության մեջ առանձնացված է կյանքի նոր որակի և բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը, որտեղ որպես նպատակներ շարադրված են աղքատության

հաղթահարումը, բնակչության կենսամակարդակի հարաճուն բարձրացումը, սոցիալական արդարության ապահովումը, հասարակության բևեռացման վերացումը, գիտակրթական համակարգի արդիականացումը, կրթության մատչելիությունը, հոգևոր-մշակութային ոլորտների շարունակական զարգացումը: Ազգային անվտանգության համար որպես ներքին սպառնալիքներ են համարվում՝ գիտակրթական համակարգի արդյունավետության ցածր մակարդակը, յուրաքանչյուրի համար մասնագիտական կրթության ոչ լիարժեք մատչելիությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակ ունի մինչև 2023 թվականը վերացնել ծայրահեղ աղքատությունն ու նվազեցնել աղքատությունը: Եվ այս նպատակի իրագործման համար առանցքային են կրթական համակարգի կատարելագործումը՝ մասնավորապես աղքատ բնակչության շրջանում կրթության և աշխատանքի քաջալերումը, ինչպես նաև կրթությունն ու գործարարությունը խթանող ծրագրերի իրականացումը:

**<u>Ուսումնասիրության օբյեկտը և առարկան</u>**: Թեզի շրջանակներում ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում մեր երկրում աղքատությունը և ՀՀ կրթական համակարգը, իսկ առարկա՝ ՀՀ կրթական համակարգի կատարելագործման ուղիները և աղքատության մակարդակն ու դրանց միջև պատճառահետևանքային կապերը:

**<u>Թեզի հետազոտության նպատակը և խնդիրները:</u>** Աղքատությունը, մասնավորապես ծայրահեղ աղքատությունը, լրջագույն խնդիր է, որի առաջ կանգնած է այսօր նաև Հայաստանի Հանրապետությունը: Արդի աշխարհում գնալով ավելի ու ավելի է կարևորվում կրթության դերը՝ որպես աղքատության հաղթահարման գործոն: Աշխատանքի նպատակն է կրթական համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունների վերհանումն ու ներկայացումը՝ աղքատությունը հնարավորինս մեղմելու նպատակով: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգում առկա բացերն ու թերությունները՝ մեր աշխատանքը նպատակ ունի առաջարկելու հնարավոր լուծումներ ու բարեփոխումների ուղղություններ՝ կրթական համակարգում իրականացվելիք՝ ուղղված կրթության մատչելիության և հասանելիության բարձրացմանը, և սոցիալական անհավասարությունների մեղմմանը:

Ուսումնասիրության նպատակի իրագործման ուղղությամբ աշխատանքում առանձնացրել ենք հետևյալ խնդիրները՝

- ✓ Վեր հանել Հայաստանի Հանրապետության աղքատության պատկերն ու դրա առաջացման հիմնական պատճառները:
- ✓ Ներկայացնել ու բնութագրել աղքատության հաղթահարման միջազգային փորձը:
- ✓ Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի ներկա վիճակը:
- ✓ Վերլուծել հնարավոր տարբերակներն ու միջոցները՝ միտված կրթական համակարգի արդիականացմանը:
- ✓ Անցկացնել սոցիալական հարցում՝ հասկանալու, թե որքանո՞վ է մեր երկրում կրթությունը համարվում արդյունավետ:
- ✓ Փորձել գտնել և վերլուծել կրթություն-աղքատություն և աղքատություն-կրթություն պատճառահետևանքային կապը:
- ✓ Ուսումնասիրել վերոնշյալ նպատակին հասնելու համար միջազգային պրակտիկայում իրականացված միջոցառումները:

**<u>Հետազոտության տեղեկատվական, տեսական և մեթոդաբանական հիմքերը:</u>** Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվական նյութերը հավաքագրվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներից, ՀՀ կառավարության կողմից ընդունված ծրագրերից, օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերից, միջազգային կառույցների, հայրենական և արտասահմանյան հեղինակների կողմից աղքատության և կրթության բնագավառում իրականացրած ուսումնասիրություններից:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են գիտական ուսումնասիրման ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մեթոդներ: Աշխատանքում կիրառվել են ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական վերլուծության և այլ մեթոդներ: Անցկացվել է նաև սոցիոլոգիական հարցում, որի արդյունքներն օգնել են առավել ճշգրիտ և օբյեկտիվ եզրակացություններ կատարելու գործում, ինչպես նաև հիմք են հանդիսացել մեր առաջարկությունների կազմման համար՝ ուսումնասիրության ոլորտում բարեփոխումներ կատարելու ուղղությամբ:

**Հետազոտության գիտական նորույթը:**

Հետազոտության գիտական նորույթը կայանում է աղքատություն-կրթություն և կրթություն-աղքատություն պատճառահետևանքային կապերի բացահայտման ու գնահատման, աղքատության և ցածրորակ կրթության սոցիալական վատ հետևանքների բացահայտման և դրանց վերացմանը միտված առաջարկների մեջ:

**Թեզի կազմը և ծավալը:** Թեզը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից հավելվածից: Թեզի ծավալը կազմում է 116 էջ՝ առանց հավելվածի:

Թեզի առաջին գլուխը վերնագրված է «Աղքատության հիմնախնդիրը և պայքարը աղքատության դեմ»: Այս գլխում հիմնականում ներկայացված է աղքատության ընդհանուր բնութագիրը, և թե ինչ միջոցառումներ են միտված դրա հաղթահարմանը: Ինչպես նաև անդրադարձ է կատարվել աղքատության հաղթահարման միջազգային փորձին ու այս ոլորտում Հայաստանի Հանրապետության քայլերին:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Կրթությունը՝ որպես աղքատության հաղթահարման, ներառական աճի և կայուն զարգացման նախապայման»: Այստեղ անդրդարձել ենք ՀՀ կրթական համակարգին, այն մարտահրավերներին որոնք ընկած են ՀՀ կրթական համակարգի առջև, և վերոնշյալի հեռանկարներին: Երկրորդ գլխում ամփոփվում են նաև մեր կողմից կատարված սոցիալական հարցման արդյունքները ու վերլուծվում այս շրջանակներում Հայաստանի բացերն ու քայլերը, որոնք ընկած են մեր կրթական համակարգի կատարելագործման հիմքում: Երրորդ գլուխը վերնագրված է «Կրթական համակարգի փոփոխությունների ազդեցությունը աղքատության մակարդակի վրա»: Այստեղ սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում վերլուծվում է կրթական համակարգի դերը, ինչպես նաև անդրադարձ է կատարվում կրթությանը՝ որպես անձի բարեկեցության ու կայուն զարգացման գործիք: Աշխատանքի վերջում կատարվել է եզրակացություն և առաջ են քաշվել մի շարք առաջարկություններ՝ կապված կրթական համակարգում փոփոխությունների ու բարեփոխումների հետ, որոնք հիմնված են մեր հետազոտության ու կատարած հարցման վրա:

# ԳԼՈՒԽ 1. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ և ՊԱՅՔԱՐԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

## *1. 1 Աղքատության ընդհանուր բնութագիրը և դրա հաղթահարմանը միտված միջոցառումները*

Աղքատություն երևույթը այսօր համաշխարհային հանրության առջև ծառացած մի կարևորագույն հիմնախնդիր է, որը հղի է կործանարար հետևանքներով, և իր անդառնալի ազդեցությունը կարող է ունենալ յուրաքանչյուր երկրի տնտեսության, մշակույթի, սոցիալական հարաբերությունների, քաղաքականության ու այլ ոլորտների վրա: Աղքատության դեմ այսօր պայքարում են ինչպես բազմաթիվ պետություններ, այնպես էլ համաշխարհային կազմակերպություններ, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպությունը (այսուհետ՝ ՄԱԿ), Համաշխարհային բանկը և այլն: Իրենց հերթին աղքատության և հատկապես ծայրահեղ աղքատության հաղթահարման գործում մեծ ավանդ ունեն ՅՈՒՆԻՍԵՖ-ը (UNICEF), Չայլդ Ֆանդը (Child Fund) և այլ համաշխարհային կազմակերպություններ: Հենց այս կազմակերպությունների կողմից էլ մշակվում և իրականացվում են մի շարք ռազմավարական ծրագրեր, որոնք ուղղված են աղքատության կրճատմանը: Մինչ այդ միջոցառումներն ու ծրագրերը մանրամասնորեն ներկայացնելը նախ հասկանանք ու սահմանենք, թե ինչ ասել է աղքատություն, և որն է այդ հասկացության հիմնական բովանդակությունը: Չկա աղքատության միանշանակ սահմանում: Գիտնականները աղքատության երևույթին տվել են բազմաթիվ սահմանումներ: Աղքատության խնդրին անդրադարձել են դեռևս այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Պլատոնը և Արիստոտելը: Պլատոնը գտնում էր, որ ցանկացած հասարակություն բաժանվում է հարուստների և աղքատների: Նա մեկ պետության մեջ տեսնում էր երկու պետությունների գոյություն՝ մեկը հարուստների պետությունն էր, և մյուսը աղքատների: Նա գտնում էր, որ նրանց միջև առկա է թշնամական կապ, ապրելով միմյանց հետ՝ նրանք գործում էին ու դավեր նյութում միմյանց հետ: Արիստոտելը կիսում էր Պլատոնի կարծիքն ու գտնում, որ աղքատությունը հղի է ծանր հետևանքներով: Արիստոտելն էր իր հերթին բաժանում էր հասարակությունը երեք խավի՝ հարուստներ, միջին խավ և աղքատներ: Նրանք

երկուսն էլ գտնում էին, որ պետությունը պետք է հոգ տանի աղքատների մասին, քանի որ աղքատությունը իր հերթին հանգեցնում է ապստամբությունների և հանցագործությունների[1]:

Որպես սոցիալ-տնտեսական երևույթ աղքատությունն առաջին անգամ ուսումնասիրել է Ս.Ռոունտրին դեռևս 20-րդ դարասկզբին, ով նշել է, որ աղքատությունը մարդու հիմնական կարիքների, պահանջմունքների՝ սննդի, հագուստի, բնակարանի, բավարարման հնարավորությունների պակասն է[2]: Իր ուսումնասիրությունը նա կատարեց հայրենի Յորք քաղաքում, որտեղ նա առանձնացրեց աղքատության երկու մակարդակ՝ առաջնային և երկրորդային: Առաջնային աղքատությունը նա համարում էր այն, երբ ընտանիքի եկամտի մակարդակը այնքան ցածր է, որ չի բավականացնում ընտանիքի անդամների ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Երկրորդային աղքատությունը նա համարում էր ավելի բարձր եկամտի մակարդակ, քան առաջնայինում էր առկա, սակայն այն դեռևս բավական չէր աղքատության հետքերն ու հակումները վերացնելու համար:

Աղքատության մեկ այլ սահմանում նշում է, որ աղքատությունն առաջանում է այն ժամանակ, երբ մարդը իր կենսական կարիքները բավարարել չի կարողանում կամ էլ տվյալ հասարակության մեջ բացակայում են հիմնական ապրելակերպի անհրաժեշտ միջոցները[3]:

Այսօր արդեն, աղքատության ժամանակակից սահմանումները աղքատությունը դիտում են որպես բազմաչափ երևույթ: Ինչի վրա էլ մենք առավել կենտրոնանալու ենք մեր հետազոտության շրջանակներում: Աղքատությունը բազմաչափ հիմնախնդիր է, որը դուրս է գալիս տնտեսագիտության շրջանակներից՝ ներառելով նաև սոցիալական, քաղաքական և մշակութային հիմնախնդիրներ: Ըստ Համաշխարհային բանկի աղքատությունը արտահայտվում է որպես՝

---

[1]Տե՛ս Sharon K. Vaughan, Poverty, Justice, and Western Political Thought, Lexington Books, 2009, p. 9
[2]Տե՛ս Медведев Д., Черчилль. Биография. Оратор. Историк. Публицист. Амбициозное начало 1874-1929, Москва 2016, С. 494
[3] Տե՛ս Ишмуратова В. Г. Содержание категории «бедность» в новейшей истории России. «Проблемы современной экономики». Санкт-Петербург, 2010г. С. 75

- հնարավորությունների պակաս, ընդ որում եկամուտների, սպառման և ծախսերի ցածր մակարդակ (որպես կանոն՝ համեմատած ազգային աղքատության գծի հետ),
- արտադրական և անձնական գույքի բացակայություն կամ անբավարարություն,
- սոցիալական կապիտալի ցածր մակարդակ, սոցիալական ծառայությունների ցածր մատչելիություն՝ անհրաժեշտ նվազագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հնարավորություններ,
- անվտանգության ցածր մակարդակ, տարբեր ռիսկերի նկատմամբ պաշտպանվածության ցածր աստիճան՝ աշխատանքի կորուստ, հիվանդություն, բնական աղետներ և այլն,
- ազդեցության ցածր մակարդակ՝ տնտեսական և հասարակական, այդ թվում՝ աղքատների կյանքի վրա ազդեցություն ունեցող կառույցների գործունեությանը մասնակցության, դրանց հետ բանակցելու և դրանց որոշումների վրա ազդելու հնարավորությունների պակաս[4]:

Նշված սահմանումից հասկացվում է, որ աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է[5]:

«Կենսաբանական պահանջմունք» ասելով մենք հասկանում ենք սնունդը, հիգիենայի անհրաժեշտ նվազագույն պահանջմունքների բավարարումը, բնակարանի առկայությունը, սեզոնային հագուստը, ջրի, ջերմության, էլեկտրաէներգիայի նվազագույն սպառման հնարավորությունները: «Սոցիալական պահանջմունք»-ն իր հերթին իրենից ենթադրում է առողջությունը, կրթությունը, աշխատանքը, նվազագույն սոցիալիզացումը՝ մասնավորապես ամուսնություն, մանկածնություն, մահվան հետ առնչվող ծեսեր, դատաիրավական համակարգի հետ առնչություններ: Իսկ արդեն

---

[4] Տե՛ս Macroeconomic Policy and Poverty Reduction,PRSP Sourcebook Chapter 6, April 2, 2001,URL:https://www.imf.org/external/np/prsp/source/2001/eng/chap6.pdf

[5] Տե՛ս «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», ընդունվել է ՀՀ կառավարության կողմից, 08.08.2003թ., N 994-Ն

«հոգևոր-մշակութային» պահանջմունք ասելով հասկանում ենք անհատի հոգևոր-մշակութային առումով հասու լինելու նվազագույն հնարավորությունները: Այդ հնարավորությունների օրինակներ կարող են լինել՝ ավանդական դարձած տոնածիսական կյանքին մասնակցելու նվազագույն հնարավորությունը, կարդալու հնարավորությունը, երաժշտություն լսելու հնարավորությունը և այլն: Համակցելով մարդկային այս երեք պահանջմունքները՝ կարելի է որոշել մարդու աղքատ կամ ոչ աղքատ լինելը: Այսպես միայն սնունդով ու հագուստով ապահովված քաղաքացին, ում համար կրթությունը հասանելի չէ, կամ ով չի մասնակցում հոգևոր-մշակութային կյանքին դեռևս չի կարող համարվել ոչ աղքատ: Աղքատություն ասելով չենք հասկանում միայն գումարի սակավությունը: Աղքատությունն ինտեսիվորեն կենտրոնացնում է մարդու ուշադրությունը ներկայի վրա՝ միանշանակ վնասելով ապագային: Եվ երբ մարդիկ իրենց ուշադրությունը կենտրոնացնում են միայն այն հանգամանքի վրա, թե ինչպես վճարել պարտքերը կամ ապահովել երեխաների անվտանգությունը, այդժամ սկսում են առավել քիչ ուշադրություն դարձնել այնպիսի կարևորագույն ոլորտների ինչպիսիք են կրթությունն ու առողջապահությունը[6]:

Այս սահմանումների ամփոփումը բերում է հետևյալ սահմանմանը՝ «Մարդը համարվում է աղքատ, եթե իր եկամտի մակարդակը ցածր է իր հիմնական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ նվազագույն մակարդակից»[7]:

Նշենք նաև, որ հասարակության մեջ մի շարք հասկացութուններ կան, որոնք առնչվում են հենց աղքատությանը: Աղքատություն հասկացությունը բավական տարողունակ հասկացություն է: Առկա են մի քանի հասկացություններ, որոնք կապված են աղքատություն հասկացության հետ: Դրանցից մեկը հասարակության թերզարգացվածությունն է: Եվ շատ հաճախ աղքատությունը դրսևորվում է որպես թերզարգացվածության արդյունք: Մարդկային զարգացման զեկույցը, որին մենք դեռևս կանդրադառնանք, ուշադրության է արժանացրել այս երկու հասկացություններին՝ աղքատությունը կապելով անհատների հետ, իսկ թերզարգացվածությունն արդեն անհատների համախմբի՝ նույն ինքը հասարակության:

[6]Տե՛ս Word development report 2015, Mind, society, and behavior, Word bank group, Washington, page 81
[7] Տե՛ս The World Bank, Understanding Poverty, URL:https://www.worldbank.org/en/topic/poverty

Այստեղից էլ առաջանում են աղքատության վերաբերյալ բազմաթիվ մոտեցումներ: Դրանցից մեկը աղքատությունը դիտարկում է հասարակության բոլոր շերտերի՝ թե՛ հարուստների, թե՛ աղքատների, արձանագրած առաջընթացի համատեքստում, մյուսը կենտրոնանում է այն հանգամանքի վրա, որ աղքատների դրությունը չի բարելավվում հարուստների արձանագրած առաջընթացի դեպքում, ուստի ուշադրությունը պետք է սևեռել բուն աղքատների վիճակի բարելավման վրա: Նշենք նաև, որ աղքատությունը շատ հաճախ առնչվում է նաև անպաշտպանություն հասկացության հետ: Քանզի շատ հաճախ՝ որոշակի խմբեր կարող են հայտնվել աղքատության մեջ, իրենց անպաշտպան լինելու հանգամանքով պայմանավորված: Եթե աղքատությունը դիտարկենք որպես զրկված լինելու արտահայտություն, ապա անպաշտպանությունը ներքին ու արտաքին որոշակի ցնցումներից ու ռիսկերից անպաշտպանության լինելիությունն է:

Աղքատության պատճառները տարբեր են: Հիմնականում դրանք կարելի է դասակարգել չորս խմբի՝ անհատական, կառուցվածքային, ենթամշակութային, ֆատալիստական (ճակատագրական): Համաձայն աղքատության անհատական պատճառների՝ աղքատության ձևավորման համար պատասխանատվությունն ընկնում է հենց անհատների վրա: Աղքատությունը համարվում է ծուլության, բնավորության թուլության, սխալ ընտրության և մարդկային բնավորության բացասական գծերի արդյունք:

Ըստ կառուցվածքային մոտեցման՝ այն բացատրվում է տնտեսական, քաղաքական, սոցիալական ոչ կատարյալ համակարգի առկայությամբ: Արդեն աղքատության պատասխանատվությունը դրվում է ոչ թե անհատի, այլ հասարակության վրա: Ենթադրվում է, որ գոյություն ունեցող տնտեսական համակարգը աշխատանքով չի ապահովում բոլոր ցանկացողներին: Աղքատության ենթամշակութային մոտեցման համաձայն՝ աղքատությունը ձևավորում է անհատական բնութագրերով օժտված մարդկանց (կախյալ, շահադրդման ցածր մակարդակով, կյանքի ֆատալիստական ըմբռնմամբ), այսինքն՝ հասարակության կարիքավոր անդամները ստեղծում են հատուկ վարքագծային կանոններ, որոնք հնարավորություն են տալիս հարմարվել ոչ բավարար նյութական պայմաններին՝ խորացնելով աղքատության մակարդակը: Աղքատության ֆատալիստական բացատրության

դեպքում դրա պատճառները հանգեցվում են սուբյեկտի կողմից չկարգավորվող և նրա կամքից անկախ գործող պայմաններին[8]: Բարեկեցության ու աղքատության ընկալմանը բավականին խորը վերլուծությամբ հանդիպում ենք Տ.Աճեմօղլու և Ջ.Ա.Ռոբինսոնի «Ինչու՞ են ձախողվում պետությունները» աշխատությունում: Այստեղ մանրամասնորեն ներկայացված է, որ աղքատությունը պայմանավորված է ոչ թե այն աշխարհագրական դիրքով, որտեղ ապրում են մարդիկ, ոչ թե մշակութային պատկանելիությամբ,(այս տեսության ծագումը կապվում է Մաքս Վեբերի անվան հետ) և ոչ էլ անտեղյակության տեսությամբ, որը պնդում է, որ աղքատ երկրներն աղքատ են, որորվհետև դրանցում շուկայի ձախողումներ հաճախ են լինում, քանի որ տնտեսագետներն ու պետական գործիչները սխալ խորհուրդների անսալով չգիտեն՝ ինչպես հաղթահարել դրանք: Աշխատության մեջ նշվում է, որ երկրները շատ հաճախ հայտնվում են աղքատության մեջ, որովհետև նրանց ղեկավարները չգիտեն, թե որ քաղաքականությունը բարեկեցիկ կդարձնի իրենց քաղաքացիներին[9]:

Աղքատություն հասկացության նկարագիրը սահմանելուց հետո, խոսենք նաև աղքատության գնահատման մեթոդաբանության մասին: Առհասարակ աղքատության ուսումնասիրման գիտական մեթոդների պատմությունը սկսում է 19-րդ դարի վերջից: Շվեդ սոցիոլոգ Ս. Ռինդժենը նշում է, որ իրենց զարգացման ընթացքում դրանք երկու փուլ են անցել: Դրանցից առաջինը կենսանվազագույնի կամ բացարձակ աղքատության փուլն է, իսկ երկրորդը հարաբերական աղքատության կամ դիպրիվացիայի փուլը[10]: Բացարձակ աղքատության հայեցակարգի հիմքը համարվում է 20-րդ դարի առաջին կեսին ԱՄՆ-ում և Եվրոպայում կատարված մի շարք ուսումնասիրություններ: Բացարձակ աղքատությունը այն իրավիճակն է, երբ անհատն իր եկամուտներով ի վիճակի չէ բավարարել սննդի, կացարանի, հագուստի, կենցաղային տարրական կարիքները, կամ էլ ի վիճակի է բավարարել միայն այն նվազագույն պահանջները, որոնք անհրաժեշտ են կենսաբանական գոյության

[8] Տե՛ս Ջրբաշյան Տ., Մելիքյան Ն. «Ներդրումային քաղաքականության ուղղվածության հիմնահարցը աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում», Եր. 2002 թ., էջեր 12-13
[9] Տե՛ս Տ.Աճեմօղլի, Ջ.Ա.Ռոբինսոն «Ինչու՞ են ձախողվում պետությունները»,Եր. «Անտարես», 2018թ., էջեր 71-107
[10]Տե՛ս Сычева В. С. Бедность и ее измерение // Социология: методология, методы, математическое моделирование, Москва 2002. С. 178

ապահովման համար: Բնակչության այն հատվածը, որի սպառումը ցածր է աղքատության բացարձակ նկարագրից, նույնացվում է որպես բացարձակ աղքատ: Արդեն 20-րդ դարի երկրորդ կեսին բացարձակ աղքատության հայեցակարգը իր սահմանափակության պատճառով ենթարկվեց լուրջ քննադատությունների: Դրան փոխարինելու եկավ հարաբերական աղքատության հայեցակարգը, ըստ որի՝ աղքատությունը բնորոշվում է ոչ այնքան եկամտի կամ ընտանիքում տնտեսական ռեսուրսների քանակով, որքան կյանքի որակի ընդհանուր մակարդակով: Հարաբերական աղքատությունը ցույց է տալիս, թե որքան աղքատ է մարդը՝ համեմատած այլ անձանց հետ: Այն աղքատությունը չափում է նաև արժանապատիվ ու բարեկեցիկ կյանքի չափանիշներով[11]: Այդ չափանիշներին մենք հետազոտության ընթացքում դեռ կանդրադառնանք:

Հարաբերական աղքատությունը և բացարձակ աղքատությունը տարբեր հասկացություններ են: Հարաբերական աղքատության մակարդակն արտացոլում է բնակչության մեջ առկա անհավասարությունը՝ շեշտը դնելով աղքատ և սոցիալապես խոցելի բնակչության վրա: Ընդհանուր առմամբ, հարաբերական աղքատության աճը սովորաբար բնութագրական է այնպիսի իրավիճակի համար, երբ բնակչության աղքատ խմբերի եկամուտների աճի տեմպը զիջում է միջին խմբերի եկամուտների աճի տեմպին: Հարաբերական աղքատություն հասկացությունը հաճախ սուր քննադատության է ենթարկվում, քանի որ հարաբերական աղքատության ցուցանիշը նվազում է նաև այն դեպքերում, երբ տեղի է ունենում ամբողջ բնակչության բացարձակ կենսամակարդակի անկում, և միջին խավերի եկամուտները նվազում են ավելի արագ տեմպով, քան աղքատների եկամուտները (ինչը Եվրոպական Միության շատ երկրներում տեղի ունեցավ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով)[12]:

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն,

[11]Տե՛ս Радионова Л.А. , Социология: Учебно-Методическое Пособие, Харьков, 2006, С. 33
[12]Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018թթ.», էջ 61, URL:file:///C:/Users/Admin/Downloads/poverty_2019_a_2%20(5).pdf

իրավունքներ, ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը: Բնակչության կենսամակարդակի փոփոխության դինամիկան նկարագրվում է նյութական և ոչ նյութական աղքատության տեսանկյունից: Ոչ նյութական աղքատության բնորոշիչներն են՝ վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը: Ոչ նյութական աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունը կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումն է, այն է՝ անվճար ծառայությունների հասցեականության առավել հստակությունը և վճարովի ծառայություններից օգտվելու կարողությունների աճը:

Ինչպես արդենիսկ վերը նշվեց բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը:

Խոսելով Հայաստանի Հանրապետության մասին՝ նշենք, որ աղքատության չափման հիմնական (պաշտոնական) մոտեցումը Հայաստանում համարվում է 2009թ.-ի մեթոդաբանությունից բխող բացարձակ՝ ըստ սպառման աղքատությունը: Նշված համատեքստում, համաձայն Համաշխարհային բանկի սահմանման, բացարձակ աղքատությունը՝ տնային տնտեսությունների որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է:

Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ագրեգացված ցուցանիշը: Միջազգային փորձից ելնելով, ընդունված է, որ սպառումը եկամտի համեմատ ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում բարեկեցության մակարդակի վերաբերյալ, քանզի տնային տնտեսության սպառման ագրեգատը սովորաբար ավելի ճշգրիտ տեղեկատվություն է պարունակում և այդքան էլ

զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը, հատկապես ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում: Եկամուտների մասին տեղեկատվությունը պակաս վստահելի է, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից, ինչպես նաև, եկամուտների որոշ տեսակների բնորոշ է սեզոնայնության նշանակալիությունը: Ի՞նչ բաղկացուցիչներ է ներառում սպառման ագրեգացված ցուցանիշը՝

- ✓ սպառված պարենային եւ ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից եւ այլ աղբյուրներից ստացված օգնությունը
- ✓ երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

Հայաստանում նյութական աղքատությունը գնահատելու համար օգտագործվում է բացարձակ աղքատության հայեցակարգը: Հայաստանի բնակչությունն, ըստ աղքատության կարգավիճակի, բաժանվում է աղքատ եւ ոչ աղքատ տնային տնտեսությունների: Աղքատներն իրենց հերթին ներառում են՝ չափավոր աղքատներ եւ նրանց թվում՝ ծայրահեղ աղքատներ: Հայաստանում աղքատությունը սկսել է գնահատվել սկսած 1996 թվականից: Սկսած 2009 թվականից՝ Հայաստանում օգտագործվում է Համաշխարհային բանկի վերանայված՝ թվով երրորդ մեթոդաբանությունը: Աղքատ են համարվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին գծից: Չափավոր կամ շատ աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին գծից: Իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից:

Մեր հետազոտության մեջ առանցքային է ոչ նյութական աղքատության ուսումնասիրությունը, որի բնորոշիչներն են համարվում վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը: Ոչ նյութական աղքատության

հաղթահարման հիմնական ուղղությունը կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումն է, այն է՝ անվճար ծառայությունների հասցեականության առավել հստակությունը և վճարովի ծառայություններից օգտվելու կարողությունների աճը:

Խոսելով Հայաստանի Հանրապետությունում աղքատության մակարդակի մասին՝ նշենք, որ 2018 թվականի դրությամբ հանրապետությունում աղքատության մակարդակը կազմել է 23.5%՝ 2017թ.-ի համեմատ արձանագրելով աղքատության մակարդակի նվազում 2.2 տոկոսային կետով: Սա նշանակում է, որ երկրի բնակչության մոտ ամեն չորրորդը ամսական 42 621 ՀՀ դրամ վերին աղքատության գծից ցածր է գտնվել[13]:

Որո՞նք են մեր երկրում աղքատության անկումը պայմանավորող գործոնները: Ամենից կարևոր գործոնը երկրում 2018 թվականի տնտեսական աճն էր: Համաձայն «Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱՀՀ 2008)» միջազգային ստանդարտի Հայաստանի տնտեսությունը 2013թ.-ին աճեց նախորդ տարվա նկատմամբ 3.3%-ով, 2014թ.-ին 2013թ-ի նկատմամբ՝ 3.6%-ով, 2015թ.-ին 2014թ-ի նկատմամբ՝ 3.2 %-ով, 2016թ.-ին 2015թ-ի նկատմամբ՝ 0.2 %- ով, 2017թ.-ին՝ նախորդ տարվա նկատմամբ՝ 7.5 %-ով, իսկ 2018թ.-ին՝ նախորդ տարվա նկատմամբ՝ 5.2%-ով: 2008թ.-ի հետֆինանսական ճգնաժամի տվյալների հետ համեմատելով միայն 2017թ.-ի տնտեսական աճը եղել է ավելի բարձր, քան 2018թ.-ի աճը (7.5% 5.2%-ի համեմատ)[14]: Աղքատության մակարդակի անկման մասին խոսենք նաև ըստ գյուղական և քաղաքային միջավայրների: 2008-2018թթ.-ին աղքատության մակարդակի անկումը քաղաքային և գյուղական բնակավայրերում կազմել է համապատասխանաբար 2.7 և 6.2 տոկոսային կետ: Մայրաքաղաք Երևանում ըստ տարածաշրջանների աղքատության մակարդակն ամենացածրն է համարվում, համապատասխանաբար՝ 19.9%, ավելին այն 1.5 անգամ ցածր է, քան Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում: 2008-2018թթ.-ին ծայրահեղ աղքատության մակարդակի անկումը

---

[13] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018թթ.», էջ 39, URL:file:///C:/Users/Admin/Downloads/poverty_2019_a_2%20(5).pdf

[14] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018թթ.», էջ 44, URL:file:///C:/Users/Admin/Downloads/poverty_2019_a_2%20(5).pdf

քաղաքային բնակավայրերում կազմել է 0.9 տոկոսային կետ, իսկ գյուղական բնակավայրերում՝ 0.3 տոկոսային կետ: Ըստ տարածաշրջանների ծայրահեղ աղքատության մակարդակն ամենացածրն է գյուղական բնակավայրերում (0.9%), իսկ ամենաբարձրն է՝ այլ քաղաքային բնակավայրերում է (1.1%): 2018թ.-ին ծայրահեղ աղքատությունը Երևանում (1.0%) զիջել է 2008թ.-ի մակարդակին՝ 1.1%, Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում՝ ծայրահեղ աղքատության մակարդակն ավելի քան 2.5 անգամ զիջել է 2008թ.-ի մակարդակը, իսկ գյուղական բնակավայրերում այն զիջել է 0.3 տոկոսային կետով: Նշենք, որ 2018 թվականի տվյալների դրությամբ ծայրահեղ աղքատ բնակչության մեծամասնությունը քաղաքաբնակներ են, և նրանց տոկոսային կշիռը կազմում է 64.7%:

Ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունը բաժանվում է տասը մարզի և մայրաքաղաք Երևանը[15]: Ուստի ամփոփ ներկայացնենք աղքատության հիմնական ցուցանիշները 2018թ.-ին՝ ըստ մարզերի և քաղաք Երևանի՝ օգտվելով Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏԱՏ) վերլուծություններից: 2018թ.-ին աղքատության մակարդակները տարբերվում են ըստ մարզերի և ք.Երևանի: Միջին հանրապետականից բարձր են ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի և Արմավիրի մարզերի ցուցանիշները, ընդ որում Շիրակի մարզում բնակչության 42%-ն ապրում է աղքատության գծից ցածր[16]: 2018թ.-ին աղքատության մակարդակի ցուցանիշները գերազանցել են 2008թ.-ի ցուցանիշներին Արմավիրի և Տավուշի մարզերում: Նույն ժամանակաշրջանում աղքատության մակարդակի ցուցանիշները նվազել են 2008թ.-ի ցուցանիշների համեմատ, ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ բոլոր այլ մարզերում և ք.Երևանում: 2008-2018թթ. նվազել է նաև ծայրահեղ աղքատության մակարդակը, ինչպես ամբողջ երկրի մակարդակով, այնպես էլ բոլոր մարզերում: Բացառություն են կազմում միայն Լոռու և Արմավիրի մարզերը: Ընդ որում մարզերից

---

[15] Տե՛ս «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից,07.11.1995թ.,ՀՕ-18

[16] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018թթ.», էջ 44, URL:file:///C:/Users/Admin/Downloads/poverty_2019_a_2%20(5).pdf

հինգում ծայրահեղ աղքատության մակարդակը գնահատվում է զրո: Այդ մարզերն են՝ Արագածոտնի մարզը, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի և Սյունիքի մարզերը:

Անդրադառնանք այն միջոցառումներին, որոնք միտված են աղքատության հաղթահարմանը: Այսօր աղքատության հաղթահարմանն են ուղղված միջազգային այնպիսի կազմակերպությունների գործողություններ, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպությունը, Համաշխարհային Բանկը և այլն: Ինչպես ՄԱԿ-ի մինչև 2015 թվականը սահմանված հազարամյակի զարգացման 8 նպատակներից առաջինը ծայրահեղ աղքատության և սովի վերացումն էր, այնպես էլ 2015-2030 թթ. կայուն զարգացման 17 նպատակներից առաջինը աղքատության վերացումն է: Խոսելով աղքատության մասին բազմաթիվ զեկույցներում՝ այդթվում ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ «Վերջ տալ ծայրահեղ աղքատությանը», «Աշխարհի երեխաների վիճակը», «Հազարամյակի զարգացման նպատակների զեկույցը» (UNICEF, Ending Extreme Poverty, UNICEF, The State of The World's Children, Millennium Development Goals Report) նշվում է, որ աղքատությունը մի երևույթ է, որի դեպքում անձը կամ համայնքը չունեն ֆինանսական ռեսուրսներ և պայմաններ նվազագույն կենսամակարդակի համար: Աղքատություն ասելով հասկանում ենք այն, որ զբաղվածությունից եկամտի մակարդակն այնքան ցածր է, որ մարդու հիմնական կարիքները չեն կարող բավարարվել[17]: Այն սահմանում է աղքատության նվազագույն մակարդակը, կամ միջազգային աղքատության մակարդակը, որն է օրական 1,90 դոլարից ցածր ապրուստը: Աղքատության մեջ գտնվող մարդիկ և ընտանիքները կարող են ապրել առանց պատշաճ կացարանների, մաքուր ջրի, առողջ սննդի և բժշկական օգնության: Յուրաքանչյուր ազգ կարող է ունենալ իր շեմը, որը որոշում է, թե իր ժողովուրդի քանի՞ տոկոսն է ապրում աղքատության մեջ:

Երբ մենք մտածում ենք աղքատության մասին, մենք սովորաբար մտածում ենք տնտեսության մասին: Առավել պատկերավոր ներկայացնելիս կարելի է ասել, որ իրականում աղքատությունն ունի դեմք: Այն աղջիկ է, որը ստիպված է եղել ամուսնանալ, քանի որ իր ընտանիքը չի կարողացել աջակցել նրան, հոգալ նրա կարիքներն ու ապահովվել կրթությամբ: Մի մայր, ով չի կարող դեղամիջոց գնել իր

---

[17] Տե՛ս UNICEF, The State of The World's Children 2016, A fair chance for every child, page 72

երեխայի կյանքը փրկելու համար: Մի տղա, որն ուղարկվում է աշխատելու, այլ ոչ թե դպրոցում ուսանելու[18]:

Այնուամենայնիվ, աղքատությունը կարող է և պետք է լինի հաղթահարելի: Աղքատության հաղթահարմանը ուղիները փնտրելիս տարբեր կազմակերպությունները փորձում են գտնել բոլոր հնարավոր ճանապարհները: Դրա համար պետք է ստեղծվեն նոր ու ավելի շատ աշխատատեղեր, բարձրացվի նվազագույն աշխատավարձը, կատարվեն ներդրումներ երեխաների բարեկեցության ու կրթության ապահովման համար:

2015թ. սեպտեմբերին աշխարհի ավելի քան 150 երկրների առաջնորդներ, ՄԱԿ-ի Նյու Յորքի կենտրոնական գրասենյակում մասնակցեցին ՄԱԿ-ի Կայուն զարգացման գագաթնաժողովին՝ պաշտոնապես ընդունելու կայուն զարգացման նոր հավակնոտ օրակարգը: ՄԱԿ-ի 193 անդամ պետություններ համաձայնության եկան «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» խորագրով փաստաթղթի շուրջ, որի մեջ ներառված են հռչակագիրը, կայուն զարգացման 17 նպատակներն ու 169 թիրախները, նպատակների իրականացման միջոցների ու վերանայված գլոբալ համագործակցությանը վերաբերող բաժինը, ինչպես նաև դիտարկման ու հետագա գործողությունների ծրագրային շրջանակը:

1992 թվականին Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրոյում կայացած ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման խորհրդաժողովից (Երկրի գագաթնաժողով) ի վեր աշխարհը բացահայտեց մարդկային բարեկեցության հասնելու մի նոր ճանապարհ՝ կայուն զարգացումը: Կայուն զարգացման հայեցակարգը, որ ներկայացված է Օրակարգ 21-ում, բնորոշվում է որպես զարգացում, որ բավարարում է ներկայի պահանջները՝ առանց վնաս հասցնելու ապագա սերունդների իրենց սեփական կարիքները հոգալու կարողությանը[19]:

Կայուն զարգացման նոր օրակարգը հիմնված է 2002թ. Կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողովի, 2010թ. Հազարամյակի զարգացման

---

[18] Տե՛ս What is Poverty? The Definitions of Poverty, URL:https://www.compassionuk.org/blogs/poverty-101-what-ispoverty/fbclid=IwAR0KmBlINIXGTMAdZGRDV7gJo5Mr9goTX1VaPprFrzSkJnbsIyXP9akpabs

[19] Տե՛ս United Nations Armenia, Sustainable Development Goals, URL:http://un.am/en/p/sustainabledevelopmentgoals

նպատակների, 2012թ. ՄԱԿ-ի Կայուն զարգացման խորհրդաժողովի (Ռիո+20) արդյունքների ու ամբողջ աշխարհի մարդկանց տեսակետների վրա:

Ռիո+20-ի «Ապագան, որ մենք ենք ուզում» ելքային փաստաթղթի մեջ ՄԱԿ-ի անդամ պետությունները հանաձայնեցին ստեղծել բաց աշխատանքային խումբ՝ մշակելու կայուն զարգացման մի շարք նպատակներ: Բաց աշխատանքային խումբ ստեղծելու առաջարկը, որը հաստատվեց 2014թ. հուլիսին, կազմում է Կայուն զարգացման օրակարգ 2030 -ի առանցքը:

Թվարկենք Կայուն զարգացման 17 նպատակները՝

1. Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով
2. Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը
3. Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից
4. Ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ
5. Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին
6. Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն
7. Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն
8. Խթանել համապարփակ և կայուն տնտեսական աճ, զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար
9. Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը
10. Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև
11. Քաղաքները դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն
12. Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ

13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ

14. Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը

15. Անտառների կայուն կառավարում, անապատացման դեմ պայքար, հողերի դեգրադացման դադարեցում և շրջադարձում, կենսաբազմազանության կորստի կասեցում

16. Խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը

17. Ակտիվացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման[20]:

Առանցքային նշանակություն ունի առաջին նպատակը՝ ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով, ինչի իրականացմանն էլ, արդարև, ածանցված են մնացյալ 16 նպատակները: Նշենք, որ ՄԱԿ-ի տվյալներով 1990 թ.-ից ի վեր ծայրահեղ աղքատության մակարդակը ավելի քան կիսով չափ նվազել է: Թեպետ սա նշանակալից ձեռքբերում է, սակայն զարգացող տարածաշրջաններում դեռևս յուրաքանչյուր հինգ մարդուց մեկն ապրում է օրական 1, 25 դոլարից քիչ գումարով, իսկ միլիոնավոր մարդկանց օրական վաստակը դրանից փոքր չափով է ավելի[21]: Բացի դրանից, շատ մարդկանց սպառնում է կրկին աղքատության մեջ հայտնվելու վտանգը: Աղքատությունն ավելին է, քան կայուն կենսամիջոցներ ապահովելու համար անհրաժեշտ եկամտի և ռեսուրսների պակասը: Աղքատության դրսևորումներից են սովը և թերսնուցումը, կրթության և այլ հիմնական ծառայությունների սահմանափակ հասանելիությունը, սոցիալական խտրականությունը և մեկուսացումը, ինչպես նաև որոշումների կայացմանը մասնակցության հնարավորության բացակայությունը: Տնտեսական աճը պետք է լինի ներառական՝ ապահովելու կայուն աշխատատեղեր և խթանելու հավասարությունը: Այսօր 700 մլն մարդ ապրում է ծայրահեղ աղքատության մեջ: Ընդ որում օրական 1, 90 դոլարից

---

[20] Տե՛ս United Nations, Sustainable Development Goals,URL:https://www.un.org/sustainabledevelopment/sustainable-development-goals/

[21] Տե՛ս United Nations Armenia, Sustainable Development Goal 1.,End Poverty In All Its Forms Everywhere,URL:http://un.am/en/p/sustainable-development-goal-1

պակաս գումարով ապրող մարդկանց ճնշող մեծամասնությունն ապրում է Հարավային Ասիայում ու Ենթասահարյան Աֆրիկայում, և նրանք կազմում են ծայրահեղ աղքատ մարդկանց համաշխարհային ընդհանուր թվի 70%-ը[22]: Բավական մեծ է աշխարհում աղքատության մեջ բնակվող երեխաների թիվը՝ ընդ որում աշխարհի ամենահարուստ երկրներում ապրող երեխաների 30 մլն-ը համարվում է աղքատ: Հայաստանի վերաբերյալ տվյալներ ներկայացնելիս՝ նշենք, որ Հայաստանում երեխաների 64 տոկոսը խոցելի է աղքատության 2 և ավելի չափելի դրսևորման ուղղությամբ: Ըստ առկա տվյալների՝ գյուղական բնակավայրերում նման խոցելիությունը հասնում է 82 տոկոսի, մինչդեռ քաղաքային բնակավայրերում այն կազմում է 53 տոկոս: Ազգային մակարդակում երեխաների միայն 12 տոկոսն է, որ չի կրում աղքատության տարբեր դրսևորումների ազդեցությունը: Ընդ որում, գյուղական բնակավայրերում ապրող երեխաների դեպքում այս ցուցանիշը կազմում է 3 տոկոս, մինչդեռ քաղաքային բնակավայրերում երեխաների 18 տոկոսն է, որ չի կրում աղքատության տարբեր դրսևորումների ազդեցությունը: Նման երեխաները խոցելի են աղքատության միաժամանակ 3 չափման ուղղությամբ[23]:

Ցածր միջին եկամուտ ունեցող երկրներում, ներառյալ Չինաստանը, Հնդկաստանը, Ինդոնեզիան և Նիգերիան, բնակվում է ամբողջ աշխարհի աղքատ մարդկանց մոտ կեսը: Այնուամենայնիվ, այս խնդիրն առկա է նաև զարգացած երկրներում: Աղքատությունն ունի բազմաթիվ չափումներ, սակայն դրա պատճառների թվում են գործազրկությունը, սոցիալական մեկուսացումը և բնակչության որոշակի հատվածի բարձր խոցելիությունը աղետների, հիվանդությունների և այլ երևույթների նկատմամբ, որոնք նրանց թույլ չեն տալիս արտադրողական լինել: Ընդ որում՝ աշխատանք ունենալը դեռևս չի երաշխավորում պատշաճ ապրուստ: Փաստորեն, ամբողջ աշխարհում զբաղված աշխատողների 8 տոկոսը և նրանց ընտանիքները ապրում էին ծայրահեղ աղքատության մեջ 2018 թվականին: Ամբողջ աշխարհում, 25-ից 34 տարեկան 122 կանայք ապրում են ծայրահեղ աղքատության մեջ՝ նույն

---

[22] Տե՛ս World Bank Blogs,Half of the world’s poor live in just 5 countries,URL:https://blogs.worldbank.org/opendata/half-world-s-poorlivejust5countriesfbclid=IwAR0CFsWZZecv70NKjeBqJIjuiGuG8fEy5_q64BDfIQv4M1nbi6vgJ89orGU

[23] Տե՛ս ՅՈՒՆԻՍԵՖ, «Մանկականաղքատությունը Հայաստանում»,2016թ., էջ 18

տարիքային խմբի յուրաքանչյուր 100 տղամարդու համար[24]: Ամբողջ աշխարհում 2018-ին ծննդաբերած կանանց միայն 41% -ն է ստացել մայրության դրամական արտոնություններ: Պետք է նշել նաև, որ աղքատության բարձր մակարդակը հաճախ հանդիպում է փոքր, թույլ և կոնֆլիկտի ենթարկված երկրներում:

Լինելով անցումային պետություն՝ աղքատության հիմնախնդրին՝ որպես համահայաստանյան խնդրի Հայաստանը բախվեց 1990-ականների կեսին: Չնայած այս հանգամանքին աղքատությունը բնորոշ էր Հայաստանին նաև խորհրդային տարիներին: ԽՍՀՄ վերջին շրջանում Հայաստանում աղքատությունը կազմում էր 18-20%[25]:Մեր երկրում աղքատության մակարդակի բարձրացմանը, ցավոք, նպաստեց 1988 թվականի երկրաշարժը, ինչի հետևանքով աղետյալի վիճակում հայտնվեցին ավելի քան 400 000 մարդիկ: Հաջորդ հանգամանքը Ադրբեջանի հետ պատերազմն էր՝ Ղարաբաղյան շարժումը, որը սկսվեց դեռևս 1988 թվականի փետրվարին և մեծ թափ ստանալով երրորդ հանրապետության հռչակման տարում՝ 1991թ., շարունակվեց մինչև 1994 թվականը: Պատերազմի հետևանքով տեղահանվեց և այլ բնակավարեր տեղափոխվեց սահմանամերձ տարածքների բնակչության մի զգալի հատվածը՝ շուրջ 70, 000 մարդ: Պատերազմը բերեց երկրի շրջափակման՝ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: 1991- 1995 թվականները Հայաստանի համար ամենից ճգնաժամային տարիներն էին: Այդ տարիներին բնակչության մեջ աղքատության գծից ցածր եկամուտ ունեցողների թիվը կազմել է շուրջ 70-80%: Այսպես փաստացի բնակչության հիմնական մասը հազիվ էր լուծում իր գոյատևման հետ կապված խնդիրները: Այս շրջանում հետխորհրդային պետությունների համար դարձավ վճռորոշ շրջան, երբ տնտեսությունը սոցիալիստական պլանային տնտեսությունից պետք է անցում կատարեր ազատ շուկայական տնտեսության: Այս գործընթացը բերեց խորը բացասական սոցիալական հետևանքների[26]: 1994-ից 1995 թվականներին սկսվեցին

---

[24]Տե՛ս Turning Promises into Action,Gender Equality in the 2030 Agenda For Sustainable Development, URL:https://www.undp.org/content/dam/argentina/Publications/G%c3%a9nero/PNUDArgent-LAC-FactSheet.pdf

[25] Տե՛ս «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», ընդունվել է ՀՀ կառավարության կողմից, 08.08.2003թ., N 994-Ն

[26] Տե՛ս Ա. Թադևոսյան, «Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում», Երևան, 2018թ., էջ 9

աղքատության վերաբերյալ հետազոտությունները: Հիմնական հետազոտության ենթակա հարցերն էին՝ աղքատության առաջացման պատճառները, հասարակական շերտավորման գործընթացները, մարդկանց կողմից միմյանց փոխանցվող օգնությունները, սոցիալական ոլորտում վարվող քաղաքականությունները: 2003 թվականի մարտի 20-ին ՀՀ Կառավարությունը ընդունեց որոշում ուժի մեջ մտցնել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը: Սա այն եզակի ծրագրերից էր, որ ուներ լայն մասնակցային բնույթ: Ծրագիրը նպատակ ուներ բարձր տեմպերով հարատև տնտեսական աճի ապահովման, ինչպես նաև սոցիալական պաշտպանության արդյունավետ քաղաքականության իրականացման: Ռազմավարության մշակմանը զուգահեռ աշխուժացան նաև աղքատությանը նվիրված հետազոտությունների անցկացումը: Աղքատության տեսանկյունների մի շարք վերլուծություններ կատարվեցին: Դրանք վերաբերում էին աղքատության համակարգային պատճառներին (Թադևոսյան 2001, Թադևոսյան 2003), աշխատաշուկայի ու զբաղվածության խնդիրներին, տարածքային և տեղական ինքնակառավարման (Օրդյան և Մանուկյան 2001), գյուղական աղքատության առանձնահատկություններին (Գաբրիելյան 2001), աղքատության ու մարդու իրավունքների փոխկապվածության հիմնահարցերին (Մարգարյան 2001), աղքատության հաղթահարման գործում գիտակրթական և մշակութային քաղաքականության դերին (Մանասյան, Աբգարյան 2002), աղքատության հաղթահարման գործում ներդրումային քաղաքականության ուղղվածության հիմնահարցին (Ջրբաշյան, Մելիքյան 2002) և այլն:

2001 թվականի դրությամբ աղքատությունը երկրում կազմում էր 50 տոկոս: Միևնույն ժամանակ, շատ աղքատ բնակչության թվաքանակը 2005 թվականի դրությամբ նախատեսվում էր հասցնել 14.2 տոկոս, 2010 թ.՝ 10.6 տոկոս, իսկ 2015 թ.՝ 4 տոկոս: 2001 թվականի դրությամբ շատ աղքատ բնակիչների թիվը Հայաստանում կազմում էր 16 տոկոս: Երկրում աղքատության հաղթահարման և անհավասարության կրճատման հիմնովին լուծումը մեծապես պայմանավորված էր լինելու տնտեսական աճով: Տնտեսական աճն էլ իր հերթին երկարաժամկետ հեռանկարում պետք է հանգեցներ զբաղվածության և, այդպիսով, բնակչության եկամուտների հիմնական

աղբյուրի՝ աշխատանքի վաձատրության ծավալների ավելացմանը և, միաժամանակ, լինելով պետական եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրը՝ ընդլայնելու եկամուտների վերաբաշխման պետության հնարավորությունները: Ծրագրում առանձին գլուխ էր նվիրված մարդկային կապիտալի զարգացմանը՝ մասնավորապես որակյալ կրթության ապահովմանը: Որակյալ կրթության ապահովում ու դրա մատչելիության բարձրացումը միջին և երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է համարվում: Եվ հենց այս բնագավառի հետագա զարգացումն էլ դիտվում էր որպես տնտեսության առաջընթացի առաջնային գերակայություն[27]: 2004 թվականից ԱՀՌԾ-ն մշակման փուլից մտավ իրագործման փուլ: Առաջին երեք տարում աղքատությունը հնարավոր եղավ ցուցանիշների մակարդակում կրճատել 13.6%-ով, նվազեցնելով այն 40.1%-ից մինչև 26.4%-ի: Արդեն 2007 թվականին ուժի մեջ մտավ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի վերանայված տարբերակը՝ ԱՀՌԾ-2: Համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ)» , ԱՀՌԾ փաստաթուղթը պետք է վերանայվի երկու տարին մեկ անգամ՝ հիմք ընդունելով ԱՀՌԾ ցուցանիշների և միջոցառումների մոնիտորինգի և գնահատման արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացրած առաջարկությունները գործընթացի բարելավման ուղղությամբ: ԱՀՌԾ վերանայման գործընթացը սկսվել էր դեռևս 2006 թվականին, իսկ դրա կազմակերպման և իրականացման սկզբունքները 2006 թվականի մայիսի 19-ին՝ ԱՀՌԾ համակարգող խորհրդի նիստում: Ըստ այդմ՝ ԱՀՌԾ վերանայման մասնակցային գործընթացի հիմնական նպատակն էր սահմանվել հանրության իրական և նպատակային մասնակցության ապահովումը, որպեսզի հասարակության առաջարկությունները և մոտեցումները առավելագույնս արտացոլվեն ԱՀՌԾ վերանայված տարբերակում:

ԱՀՌԾ-ի համակարգող խորհրդի կողմից ԱՀՌԾ-ի վերանայված փաստաթուղթը քննարկվել և հավանության էր արժանացել 2008 թ. սեպտեմբերի 10-ի նիստում, որին

[27] Տե՛ս «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», ընդունվել է ՀՀ կառավարության կողմից, 08.08.2003թ., N 994-Ն

մասնակցում էին ԱՀՌԾ-ի համակարգող խորհրդի, ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբի և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միաժամանակ, նիստի ընթացքում որոշում էր կայացվել փաստաթուղթը վերանվանել Կայուն զարգացման ծրագիր՝ հաշվի առնելով, որ այն բովանդակությամբ և կառուցվածքով որոշակիորեն տարբերվում էր նախորդից, ուներ ավելի լայն ընդգրկում և, ըստ էության, երկրի սոցալ-տնտեսական զարգացման ծրագիր էր: Սակայն, 2008-2011 թթ. այս քաղաքականությունը ցույց տվեց, թե որքան խոցելի է այն, երբ վրա հասած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքում աղքատության ծավալները նորից շեշտակիորեն աճեցին՝ հասնելով 35%-ի[28]: Անկումն այն աստիճան մեծ էր, որ այդպես էլ չհաջողվեց գործարկել ԱՀՌԾ-2 անվանումը ստացած Կայուն զարգացման ծրագիրը, ինչը այդպես էլ մինչև վերջ մնաց ընդամենը թղթի վրա գրված ծրագիր (ԿԶԾ 2008): Դրանից հետո, երկար ժամանակ աղքատության հիմնախնդիրը մոռացության մատնվեց և կառավարությունը դրա նվազեցմանն ուղղված որևէ նշանակալի քայլեր չէր իրականացնում: Պատահական չէ, որ աղքատության ցուցանիշները, մինչև 2014 թվականը տատանվել են 35.8%-ից 32%-ի սահմանները: Եվ միայն 2015 թվականին, երբ աղքատության ցուցանիշները հանրայնացվեցին լրագրողների կողմից, ՀՀ վիճակագրական վարչությունը հաջորդ տարիներին սկսեց ցուցադրել աղքատության դանդաղ նվազող միտում:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում գործում է 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ): Արդեն այս ծրագրով սկսվեց կարևորություն տրվել մի շարք առանցքային հարցերի: Ճիշտ է աղքատությունը չի հռչակվում որպես ՀԶԾ հիմնական նպատակներից մեկը, սակայն երկար ընդմիջումից և երկրում աղքատության բարձր ցուցանիշը երկար ժամանակ անտեսվելուց հետո այն բարձրացվեց կառավարության կողմից, որպես կառավարության կողմից կարևորվող հիմնախնդիր: Ծրագիրը իր մեջ ներառում է այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են տարածքային համաչափ զարգացում, սոցիալական պաշտպանություն, աղքատություն և անհավասարություն, մարդկային

---

[28] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2011թթ»., էջ 38,URL: https://www.armstat.am/file/article/poverty_2012a_2.pdf

կապիտալի զարգացում, բնապահպանություն, հանրային կառավարման արդիական համակարգի ձևավորում և ամրապնդում, բյուջետային շրջանակ, մակրոտնտեսական շրջանակ: Թեմայի ուսումնասիրության շրջանակներում մասնավորապես կանդրադառնանք աղքատությանն ու մարդկային կապիտալի զարգացմանը՝ ի դեմս կրթության:

Բնակչության բարեկեցության աճը և աղքատության հաղթահարումը երկրի մարդկային կապիտալի զարգացման գրավականներից են, ինչպես նաև ՀԶԾ նպատակներից: Այսպիսով, 2012 թ. դրությամբ աղքատ է եղել բնակչության 32.4%-ը, իսկ ծայրահեղ աղքատ՝ 2.8%-ը: Անհավասարության Ջինիի գործակիցն աճել է մինչև 0.372-ի: Առաջ եկած նոր միտումները, ինչպես նաև աղքատության ու անհավասարության դինամիկան վկայում են, որ տնտեսական ու սոցիալական քաղաքականությունները պետք է տնտեսական աճն ու վերաբաշխումը ավելի նպատակայնորեն ուղղեն աղքատ խավերի եկամուտների ուղղակի ու անուղղակի աճին և, այդպիսով՝ աղքատության ու անհավասարության կրճատմանը: Ծրագիրը միևնույն ժամանակ նպատակադրում է տարածքային սոցիալ-տնտեսական համաչափ զարգացման ու աղքատության անհամաչափություններին ուղղված քաղաքականությունների մշակումը: Սոցիալական արդարության տեսանկյունից հիմնախնդիր է համարվում եկամուտների բևեռացվածությունը: Աղքատության հիմնախնդրի մեղմման ուղղությամբ ծրագիրը նախատեսում է նաև ՓՄՁ (փոքր և միջին ձեռնարկատիրության) ոլորտի զարգացմանն ուղղակի աջակցությունը, ինչպես նաև զբաղվածության խթանումը այնպիսի ոլորտներում, որոնք խոստանում են հարաբերականորեն ավելի բարձր աշխատավարձի մակարդակ (օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, վերամշակող արդյունաբերություն)[29]: Կառավարության կողմից անցկացվող ծրագրերին և դրանց արդյունավետությանը հետազոտության շրջանակներում մենք դեռ կանդրադառնանք:

Այսպիսով աղքատությունը իր հնարավոր աղետալի հետևանքներով առկա է բոլոր երկրներում՝ թե՛ զարգացող, թե՛ զարգացած: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ

[29] Տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման, «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ծրագիր», էջ 114-116

աղքատության նվազեցման խնդիրը ունի համամարդկային նշանակություն աշխաhի շատ երկրներում մշակվում են դրա դեմ պայքարի ռազմավարական ծրագրեր: Ինչպես վերը շարադրվեց, Հայաստանի Հանրապետությունը ևս անմասն չէ այս գործընթացին: Աղքատությունն ինքնին համապարփակ հիմնախնդիր է և ունի քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալական, կազմակերպա-կառավարչական և հոգեբանական ասպեկտներ: Այս երևույթը առնչվում է մարդկանց կենսագործունեության բոլոր ոլորտներին, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության աստիճանին, մարդկային զարգացման հիմնահարցին, հասարակական կյանքի ժողովրդավարացմանը, քաղաքացիական հասարակության ստեղծմանն ու առհասարակ մարդու, ընտանիքի, համայնքի, պետության ու հասարակության առջև կանգնած խնդիրների համալիրին:

### *1.2 Աղքատության դեմ պայքարի միջազգային փորձը և Հայաստանի քայլերը*

Այսօր ամբողջ աշխարհի առաջ ծառացած է մի մարտահրավեր, որի անունն է աղքատություն: Աշխարհի ջանքերը ամենից առաջ միտված են ծայրահեղ աղքատության իսպառ վերացմանը: Աղքատության միջազգային փորձը ներկայացնելիս մեր ուշադրության կենտրոնում է հայտնվել Բազմաչափ աղքատության համաթիվը (Global multidimensional poverty index): Բազմաչափ աղքատության համաթիվը օգտագործում է մի շարք ցուցիչներ՝ բնակչության աղքատության ամփոփ ցուցանիշը ներկայացնելու համար, որում որքան բարձր է ցուցանիշը այնքան տվյալ երկրում բարձր է աղքատության մակարդակը: Այս համաթիվը զարգացվել է 2010 թվականին, Օքսֆորդի աղքատության և մարդկային զարգացման նախաձեռնության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից: Այս համաթիվը բնակչության աղքատության մակարդակը որոշելու համար օգտագործում է առողջության, կրթության և կենսամակարդակի ցուցանիշները: Համաթիվը եկավ փոխարինելու Մարդկային աղքատության համաթվին: Մարդկային աղքատության համաթվի հիմնական նպատակն էր վերջ տալ աղքատությանն իր բոլոր դրսևորումներով, և առաջին անգամ այն ներկայացվեց 1997 թվականին՝ ՄԱԿ-ի կողմից մշակված մարդկային զարգացման համաթիվը լրացնելու համար: Բազմաչափ աղքատության ցուցանիշները սովորաբար օգտագործում են տնային տնտեսությունները՝ որպես իրենց վերլուծության միավորներ: Բազմաչափ աղքատության համաթվի վերլուծաբանները գտնում են, որ այս համաթիվը տալիս է հնարավորություն աղքատության մեջ ապրող մարդկանց համապարփակ պատկերը ստեղծելու համար: Այն նաև հնարավորություն է տալիս կատարել համեմատություններ ինչպես երկրների կտրվածքով, այնպես էլ տարածաշրջանների և աշխարհի: Այն նաև հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություններ երկրների ներսում՝ ըստ էթնիկական խմբերի, գյուղական և քաղաքային միջավայրի[30]: Բազմաչափ աղքատության համաթիվն օգտագործում է երեք հիմնական չափումներ՝ առողջություն, կրթություն, կենսամակարդակ:

---

[30] Տե՛ս United Nations Development Programme,New data challenges traditional notions of ‘rich’ and ‘poor’,URL:http://hdr.undp.org/sites/default/files/2019_mpi_press_release_en.pdf




Գծ.1 Բազմաչափ աղքատության համաթվի կառուցվածքը

Սրանք Մարդկային զարգացման համաթվի հայելին են: Թվերը և վերլուծությունը թարմացվում են տարին առնվազն մեկ անգամ՝ օգտագործելով նոր հրապարակված տվյալներ: Բազմաչափ աղքատության համաթվում ընդգրկված ավելի քան 100 երկրներում 1.3 մլրդ. մարդկանց 23/1%-ը աղքատ է: Բացի այդ բազմաչափ աղքատության ցուցանիշները տատանվում են զարգացող տարածաշրջաններում՝ Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում 1.1%, իսկ Ենթասահարական Աֆրիկայում մինչև 57.5%: Ենթասահարական Աֆրիկայում ցուցանիշը տարբեր երկրներում տատանվում է՝ 6.3% Հարավային Աֆրիկայում մինչև 91.9% Հարավային Սուդանում: Իսկ երկրների ներսում ցուցանիշը տատանվում է նաև ենթաշրջաններում[31]:

Բազմաչափ աղքատության համաթիվը (այսուհետ՝ ԲԱՀ-ը) աղքատության ցուցանիշի և ինտենսիվության արդյունք է. երկուսն էլ շատ կարևոր կողմեր են: Ցանկացած ինտեսնիվության իջեցում, նվազեցնում է ԲԱՀ-ը (նույնիսկ եթե ցուցանիշը մնում է անփոփոխ) և ցույց է տալիս աղքատությունից դուրս գալու առաջընթացը: Ամենաաղքատ երկրները ցուցաբերում են ոչ միայն աղքատության ավելի բարձր ցուցանիշ, այլև ավելի բարձր ինտենսիվութուն: Աղքատության ցուցանիշը Պակիստանում և Մյանմարում կազմում է 38.3%, բայց ինտենսիվությունը զգալիորեն

[31] Տե՛ս Global Multidimensional Poverty Index 2019, Illuminating Inequalities, Printed in the US, 2019, p. 1

ավելի բարձր է Պակիստանում 51.7%, Մյանմարում 45.9%: Մեկ այլ բացարձակ հակադրություն է Նիգերիան՝ ցուցանիշը 51.4%, իսկ ինտենսիվությունը 56.6%, Մալավիում ցուցանիշը 52.6%, իսկ ինտենսիվությունը 46.2%[32]:

Տարանջատելով համաշխարհային ԲԱՀ-ը ըստ տարիքային խմբերի՝ նշենք, որ երեխաները կրում են ամենամեծ բեռը: Մինչև 18 տարեկան երեխաները կրում են աղքատության ամենամեծ բեռը: Մինչև 10 տարեկան 2 մլդ երեխաներից 1.1 մլդը ապրում են ԲԱՀ-ում ընդգրկված 101 երկրներում: Աղքատ մարդկանց կեսը երեխաներ են, իսկ մեկ երրորդը մինչև 10 տարեկան երեխաներ: 1.3 մլդ աղքատներից 663մլնը երեխաներ են, իսկ 428 մլնը մինչև 10 տարեկան երեխաներ (32.3%): 6 չափահաս մարդուց մեկը աղքատ է, 3 երեխաներից մեկի համեմատությամբ: ԲԱՀ-ում ընդգրկված երկրներում չափահասների 17.5%-ը աղքատ են, երեխաների շրջանում աղքատության ցուցանիշը 33.84% է: Աղքատ երեխաների 85%-ը ապրում է Հարավային Ասիայում և Արևադարձային Աֆրիկայում: Ընդ որում, երեխաները ավելի մեծ հավակնություն ունեն աղքատ և զրկված լինելու, քան մեծերը:[33]

Ինչպես նաև ներկայացնենք մի քանի տվյալներ՝ ըստ Բազմաչափ աղքատության համաթվի՝ կապված ամենաաղքատ տարածաշրջանների, ամենաաղքատ երկրների և ամենաաղքատ շրջանների հետ: Դասակարգելով զարգացող շրջանները ԲԱՀ-ի միջին ցուցանիշով, պարզվում է, որ Ենթասահարական Աֆրիկան և Հարավային Ասիան ամենաաղքատն են: Դասակարգելով երկրները ԲԱՀ-ի ցուցանիշներով, պարզվում է, որ ամենաաղքատ 49 երկրներում բնակվում են այնքան բազմաչափ աղքատ մարդիկ, որքան Ենթասահարական Աֆրիկայում և Հարավային Ասիայում: Այս 49 երկրները տարածված են զարգացող բոլոր տարածաշրջաններում, բացի Եվրոպայից և Կենտրոնական Ասիայից: Դասակարգելով ենթաազգային տարածաշրջանները ԲԱՀ-ի ցուցանիշներով՝ պարզվում է, որ 675 ենթաազգային շրջաններում, որոնք գտնվում են զարգացող բոլոր տարածաշրջանների 65 երկրներում՝ բացառությամբ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի, բնակվում են այնքան աղքատ մարդիկ, որքան

[32] Տե՛ս Global Multidimensional Poverty Index 2019, Illuminating Inequalities, Printed in the US, 2019, pp.3-5
[33] Տե՛ս Global Multidimensional Poverty Index 2019, Illuminating Inequalities, Printed in the US, 2019, pp.6-8

ենթասահարական Աֆրիկայում և Հարավային Ասիայում միասին: Առանց տարանջատման երկրների միջև այս ապշեցուցիչ անհավասարությունը չի նկատվում[34]:

Ինչպես նշեցինք ներկայումս համաշխարհային պրակտիկայում գործում է աղքատության չափման առավել կատարելագործված ցուցանիշների համակարգ: Համաթիվը դիտում է այն հանգամանքը, որ աղքատությունը զուտ նյութական պահանջմունքները չեն. աղքատությունը վերաբերում է նաև մարդկային զարգացման համար կարևոր կարիքների բավարարման անկարողությանը: Այդիսկ պատճառով օգտագործում ենք բազմաչափ աղքատություն հասկացությունը: Բազմաչափ աղքատության հասկացությունը կարևորում է աղքատների ոչ միայն նյութական նվազագույն կարիքների բավարարումը, այլև՝ զրկանքների հաղթահարումն ու արժանավայել կյանքի ապահովումը մարդկային զարգացման համար անհրաժեշտ կարիքների բավարարման տեսանկյունից:

Խոսելով Հայաստանի մասին նշենք, որ Հայաստանում բազմաչափ աղքատության ձևավորման վրա ազդում են հիմնականում կրթության և առողջապահության ինդիկատորները: Ըստ Աղասի Թադևոսյանի «Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում» (Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրի դիտարկման հիման վրա) հետազոտության ընդհանուր աղքատության մեջ առողջապահության ոլորտում առկա զրկանքների ծավալը կազմում է 87.8%: Հաշվի առնենք այն հանգամանքը, որ տոկոսային առումով կրթության հետ կապված զրկանքները համեմատած առողջապահության համեմատ առավել ցածր են: Սակայն կրթությունը ևս բավական էական գործոն է ՝ ընտանիքում աղքատության վերարտադրության վրա ազդող: Հարցը կայանում է նրանում, որ մեր հանրապետությունում ոչ միշտ են մարդիկ որակյալ կրթության ոչ մատչելիությունը համարում զրկանք: Այս մասին առավել մանրամասնորեն կխոսենք վերջին գլխում: Այնուամենայնիվ համաշխարհային պրակտիկան բերեց այն համոզմանը, որ իրականում ոչ որակյալ կրթությունը, կրթական անորակ հաստատություններում մշակութային կապիտալի զարգացման հնարավորությունների ծայրահեղ սահմանափակությունը, աղքատ ընտանիքների

---

[34] Տե՛ս Global Multidimensional Poverty Index 2019, Illuminating Inequalities, Printed in the US, 2019, p. 4

երեխաների միջավայրում ծնողներից աղքատությունը ժառանգելու հիմնական պատճառներից մեկն է[35]: Հարցման ամենավերջին տվյալները, որոնք հրապարակայնորեն հասանելի էին Հայաստանի ԲԱՀ գնահատման համար, վերաբերում են 2015-2016 թվականներին: Հայաստանում բնակչության 0.2%-ը (5 հազար մարդ) բազմաչափ աղքատ է, իսկ լրացուցիչ 2,7 %-ը դասակարգվում է որպես խոցելի բազմաչափ աղքատության համար (80 հազար մարդ): Զրկանքների ինտենսիվությունը Հայաստանում կազմում է 36.2%[36]:

Այս հատվածում ցանկանում ենք վերլուծել Բանգլադեշում աղքատության հաղթահարման հիմնական ուղիները, թե ինչպես Բանգլադեշը դարձավ աշխարհի ամենաարագ զարգացող պետություններից մեկը, և սկսած 2010 թվականից աղքատությունը հաղթահարվել է ավելի քան ութ միլիոն մարդու կողմից:

Ինչպես շատ զարգացող երկրներում, Բանգլադեշում ևս աղքատությունը եղել է տագնապալի սոցիալական խնդիր: Անկախացումից անմիջապես հետո բնակչության մոտ 82%-ը ապրում էր աղքատության գծից ներքև[37]: Այնուամենայնիվ, սկսած 1990-ականներից տնտեսական բարեփոխումները և առևտրի ազատականացումը, 2000-ականների սկզբից ի վեր արագացված տնտեսական աճը ի վերջո առաջընթաց ապահովեցին Բանգլադեշի համար աղքատության կրճատման խնդրում: Աղքատության հաղթահարման գործում նկատելի առաջընթացը ճանաչվել է միջազգային հաստատությունների կողմից: Համաշխարհային բանկի տվյալներով՝ 2000 թվականից ի վեր Բանգլադեշից ավելի քան 33 միլիոն մարդ հաղթահարել է աղքատությունը: Բանգլադեշի աղքատության մակարդակը իջել է 1972-ին 82% -ից, 2010-ին ՝18.5%, 2016-ին՝ 13.8%, 2018-ին ՝8, 3%, իսկ 2020-ին՝ 4% -ից ցածր: Ընդ որում, հաշվի առնելով աղքատության նվազեցման ներկայիս տեմպը՝ Բանգլադեշում կանխատեսվում է մինչև 2021 թվականը ամբողջությամբ վերացնել ծայրահեղ աղքատությունը: Այս առումով Բանգլադեշը կլինի առաջին պետությունը Հարավային Ասիայում: Բանգլադեշում ապրում է 165.183.104 մարդ: Այս պահին նրանցից ծայրահեղ

[35] Տե՛ս Աղասի Թադևոսյանի «Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում», էջ 11
[36] Տե՛ս Human Development Report 2019, Inequalities in Human Development in the 21st Century, Briefing note for countries on the 2019 Human Development Report, Armenia, page 7
[37] Տե՛ս SAWAB, Poverty Alleviation Program, URL:https://sawabbd.org/story/poverty-alleviation-program/

աղքատ է 7.067.240, ինչը կազմում է ամբողջ բնակչության 4%-ը: Ծայրահեղ աղքատների թիվը անհամեմատելի մեծ է գյուղական տարածքներում՝ 5.998.134, իսկ քաղաքային միջավայրում համեմատաբար ավելի քիչ թիվ է կազմում՝ 1.069.106[38]:

Մինչև 2030 թվականը Բանգլադեշը հավակնում է լինել աշխարհի 24-րդ խոշոր տնտեսությունը: Հաշվի առնելով այն աննախադեպ աճը, որ կրում է Բանգլադեշի տնտեսությունը՝ սպասվում է, որ մինչև 2021 թվականը այն կվերափոխվի թվային տնտեսության, իսկ մինչև 2041 թվականը գիտելիքահենք տնտեսության: Այսօր Բանգլադեշի տնտեսությունը գրանցում է ավելի արագ աճ, քան Հնդկաստանինը: Ընդամենը տասը տարում մեկ շնչին ընկնող եկամուտը եռապատկվել է: Իսկ որո՞նք են Բանգլադեշում այսպիսի զարգացումների նախապայմանները: Դիտարկենք չորս վճռորոշ գործոններ:

Նախևառաջ Բանգլադեշը հագուստի արտադրությամբ երկրորդն է Չինաստանից հետո: Հագուստի արտահանումը այս երկրից ամեն տարի աճում է մոտավորապես 16 տոկոսով: Հաջորդ գործոնը երիտասարդ աշխատուժի առկայությունն է: Բանգլադեշը բնակչության թվով 8-րդն է աշխարհում և որ ամենակարևորն է բնակչության կեսը 25 տարեկանից ցածր է: Երիտասարդները առավել արագ են հարմարվում նոր տեխնոլոգիաներին: Հաջորդ գործոնը թվային հզորությունն է: Բանգլադեշն ունի 600 000 ՏՏ ոլորտի մասնագետներ, ինչը ամենամեծ թիվն է ամբողջ աշխարհում: Սա նաև օգնում է ավելի շատ բանգլադեշցիների միանալ ֆորմալ տնտեսությանը: Քանի որ ավելի ու ավելի շատ մարդիկ են մուտք գործում բանկային հաշիվներ առցանց: Ամենից կարևոր գործոններից մեկը, որը օգնում է այս պետությանը ունենալ աճ տնտեսությունում ու հաղթահարել աղքատությունը, շարժումն է դեպի գիտելիքահենք հասարակություն: Կանխատեսվում է, որ տնտեսական աճը այս տարի Բանգլադեշում կկազմի ութ տոկոս: Բանգլադեշը նպատակ ունի առաջիկա քսան տարիներին դասակարգվել որպես զարգացած երկիր:

Այնուամենայնիվ բացի մեծ տնտեսական պոտենիցիալը, Բանգլադեշը նաև ունի լրջագույն մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարվեն: Ցուցակի ամենավերևում կլիմայի փոփոխություններն են, քանի որ բնակչության ավելի քան մեկ երրորդը

[38] Տե՛ս World Poverty Clock, URL:https://worldpoverty.io/map

հայտնվել է անտուն մնալու վտանգի առաջ, ինչի պատճառն է ծովի մակարդակի բարձրացումը:

Մեր ուսումնասիրության արդյունքում անչափ կարևորվում է այն, որ Բանգլադեշում առաջնայնություն է տրվում մարդկային կապիտալի զարգացմանը: Կառավարությունը ցանկանում է, որ Բանգլադեշը դարպաս դառնա թվային աշխարհի համար և նախաձեռնի բազմաթիվ նախաձեռնություններ, միջոցառումներ՝ զարգացնելու հմտություններով հագեցած և թվային պատրաստ տաղանդների լողավազան: Բանգլադեշի կրթական համակարգը յուրաքանչյուր տարի պատրաստում է 500 000 շրջանավարտ: Եվ շնորհիվ մի շարք ուսուցողական ծրագրերի ներդրման, անցած տարվա ընթացքում վերապատրաստվել են ավելի քան 65,000 տեղեկատվական տեխնոլոգիաների հասանելի ծառայությունների (IT / ITeS) մասնագետներ[39]: Համաձայն Օքսֆորդի համացանցային հաստատության (the Oxford Internet Institute) Բանգլադեշը երկրորդն է աշխարհում՝ ամենաշատ առցանց աշխատողների թվով: Հմտությունները ավելի խորացնելու համար ստեղծվել են մասնագիտացված լաբորատորիաներ հանրապետության բոլոր 130 համալսարաններում: Կատարվում են նաև մի շարք ներդրումներ՝ տեխնոլոգիական կենտրոններում՝ համաշխարհային այնպիսի գործընկերների հետ, ինչպիսիք են Այ-Բի-Էմ-ը (International Business Machines Corporation): Մեծ ուշադրություն է դարձվում զարգացող տեխնոլոգիաների վերապատրաստմանը (the Internet of Things, blockchain, Artificial Intelligence, Big Data and analytics)[40]:

Էլեկտրոնային կառավարումը հաջորդ քայլն է թվային Բանգլադեշի շարժիչը առաջ տանելու: Կառավարությունն ակտիվորեն հետապնդում է նպատակ՝ մինչև 2023 թվականը բոլոր պետական պորտալների, ինչպիսիք են անձնագրային հայտերը և վիզայի դիմումները, թվայնացումը: 2014-ին մշակվեց Ազգային պորտալը, որն այժմ

---

[39] Տե՛ս Palak, Z. A., State for Information and Communication Technology, Ministry of Post, & Information Technology. (n.d.). By 2030, Bangladesh will be the 24th largest economy. Here's how ICT is driving that growth. Retrieved from URL:https://www.weforum.org/agenda/2019/10/bangladesh-ict-development-economic-growth?utm_source=Facebook Videos&utm_medium=Facebook Videos&utm_campaign=Facebook Video Blogs

[40] Տե՛ս Oxford Internet Institute,University of Oxford,Where are online workers located? The international division of digital gig work,URL:https://www.oii.ox.ac.uk/blog/where-are-online-workers-located-the-international-division-of-digital-gig-work/

ունի ավելի քան 45,000 կայքեր և տարբեր պետական գերատեսչությունների ծառայություններ: Մշակվել են ավելի քան 5000 թվային կենտրոններ ամբողջ երկրում՝ օգնելու քաղաքացիներին տրամադրել զանազան թվային ծառայություններ:

Ստեղծվել է Թվային ծառայության արագացուցիչ՝ բոլոր նախարարությունների էլեկտրոնային ծառայությունները արագացնելու և հեշտացնելու համար, և քաղաքացիներին տրվել են ավելի քան 100 միլիոն թվային նույնականացումներ, ինչը աշխարհի ամենաբարձր ցուցանիշներից մեկն է համարվում: Ծառայությունները մշակված են այնպես, որպեսզի ապահովվի համապատասխանություն բնակչության բոլոր խմբերի համար՝ այն հատվածը, որը աճում է տեխնոլոգիական զարգացմանը զուգընթաց, «թվային աղապտորներ», և փոքրամասնությունը, որը հեռու է տեխնոլոգիաներից: Բանգլադեշում թվային կառավարման մասշտաբները հսկայական ազդեցություն են ունենում ազգի վերափոխման վրա:

Բանգլադեշում առանձնահատուկ կարևորություն է տրվում տեղեկատվա-հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) արդյունաբերության խթանմանը: Բանգլադեշի ուժեղ և արագ զարգացող ՏՀՏ արդյունաբերությունը թվային փոխակերպմանը աջակցող հաջորդ ոլորտն է: Հաճախորդները սպասարկվում են մի շարք ոլորտներում, ներառյալ ֆինանսական ծառայություններ, հեռահաղորդակցություն և առողջապահություն: Իրականացվող բոլոր միջոցառումներն ու ծրագրերը հանդիպում են կառավարության աջակցությանը:

Բանգլադեշում արձանագրվել է ՀՆԱ-ի գրեթե ութ տոկոս աճ և այն համարվում է աշխարհում ամենաարագ զարգացող տնտեսություններից մեկը: Բանգլադեշը համաշխարհային տնտեսական ֆորումի ներառական զարգացման ինդեքսում 34-րդն է՝ առաջ անցնելով շատ երկրներից[41], և մինչև 2030 թվականը կանխատեսվում է, որ այն կլինի աշխարհի 24-րդ խոշորագույն տնտեսությունը:

Անդրադառնալով Հայաստանին ներկայացնենք մի քանի միջոցառումներ, որոնք իրականացվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ վերացնելու աղքատությունը՝ մասնավորապես ծայրահեղ աղքատությունը:

[41] Տե՛ս The Inclusive Development Index 2018 Summary and Data Highlights, World Economic Forum, page 2 http://www3.weforum.org/docs/WEF_Forum_IncGrwth_2018.pdf

2017 թվականի տվյալներով՝ Հայաստանում բնակչության 25.7%-ն աղքատ էր, իսկ 1.4 %-ը՝ ծայրահեղ աղքատ: Այլ կերպ ասած՝ աղքատ էր 766 հազար մարդ: Իսկ ծայրահեղ աղքատ համարվող 42 հազար մարդու ամսական եկամուտը չէր գերազանցում 24,000 դրամը: Երեխաների 2.1%-ն ապրում էր ծայրահեղ աղքատության, իսկ 30.8%-ն՝ աղքատության մեջ: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի տվյալներով՝ Հայաստանում ապրող յուրաքանչյուր երեք երեխայից մեկը (28%) և՛ աղքատ է, և՛ զրկված բարեկեցիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններից՝ առողջ սնուցում, կրթություն, բնակարանային պայմաններ, հանգստի և ժամանցի հնարավորություններ և այլն: Այս երեխաները մեր հասարակության ամենախոցելի խումբն են: Ուստի 2017 թվականին Վորլդ Վիժնը (World Vision) սոցիալական աշխատանքին զուգահեռ կիրառել սկսեց նաև «Աղքատության փուլային հաղթահարման ծրագիրը», որը աղքատության հաղթահարման համար առաջարկում է կայուն լուծումներ: Այս մոտեցմամբ Վորլդ Վիժնը աշխատում է այն ընտանիքների հետ, որտեղ եկամուտը օրական 1.5 ԱՄՆ դոլարից պակաս է: Այս մոտեցումը ենթադրում է իրար հաջորդող, բազմասեկտորալ միջամտություններ, որոնք օգնում են ծայրահեղ աղքատ ընտանիքին դուրս գալ աղքատությունից: Վորլդ Վիժնի աջակցությունը ներառում է՝

- ✓ սոցիալական աշխատանք ընտանիքների հետ,
- ✓ գումարային աջակցություն՝ ամենաhրատապ կարիքները հոգալու համար,
- ✓ ընտանիքի անդամների մասնագիտական վերապատրաստումներ,
- ✓ ծնողավարական հմտությունների ուսուցում,
- ✓ երեխաների առողջ սնուցման և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների տրամադրում,
- ✓ աջակցություն աշխատանք գտնելու հարցում:

2019թ.-ին Վորլդ Վիժն Հայաստանը և «Իմ քայլը» հիմնադրամը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ, սկսել են աշխատանքներ իրականացնել 18 ծայրահեղ աղքատ ընտանիքների հետ՝ կիրառելով «Աղքատության փուլային հաղթահարում» ծրագիրը, ինչի արդյունքում այսօր բարելավվել է այդ ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը, լուծվել են մի շարք առողջական և

կենցաղային խնդիրներ, բայց անչափ կարևոր է այս ամենի հոգեբանական սեկտորը՝ այս ընտանիքները վերականգնել են հավատը սեփական ուժերի նկատմամբ: Ըստ Վորլդ Վիժնի ներկայիս ուսումնասիրությունների՝ սոցիալական աշխատանքի և «Աղքատության փուլային հաղթահարման ծրագրի» կիրառման արդյունքում՝

- ✓ ծրագրին մասնակցող ընտանիքների 48%-ը հաղթահարել է ծայրահեղ աղքատությունը,
- ✓ ընտանիքների 90%-ի մոտ աճել է տարեկան եկամուտը,
- ✓ երեխաների 77%-ի առողջական վիճակը բարելավվել է,
- ✓ ընտանիքների 82%-ում բարելավվել է կյանքի որակը[42]:

Հաշվի առնելով այս ծրագրի արդյունավետությունն ու հաջողված փորձը, 2019 թվականի նոյեմբերին՝ ՀՀ կառավարության նիստում որոշում ընդունվեց, որ ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 1000 ընտանիք ևս կդառնա նպաստառուների համար կայուն եկամտի ստեղծմանն ուղղված համակարգ շահառու: Նախատեսվում է, որ ծրագրի շրջանակներում անասնապահությամբ զբաղվելու համար տրամադրվող աջակցությունը (բնաիրային՝ անասնագլխաքանակի տեսքով) կտրամադրվի ընտանիքներին՝ ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքը 12 ամիս պահպանելու հետ զուգահեռաբար[43]:

Այսպիսով այս հատվածում փորձեցինք հասկանալ, թե ինչ ասել է աղքատություն, որո՞նք են աղքատության բնորոշումները, ինչպե՞ս են այսօր պայքարում աղքատության դեմ: Ի՞նչ ծրագրեր են այսօր իրականացվում աշխարհում, և ի՞նչ ծրագրեր է իրականացնում Հայաստանի Հանրապետությունը: Մեր ուշադրության կենտրոնում է հայտնվել բազմաչափ աղքատությունը, քանի որ այն չափելու համար, որպես ցուցիչ օգտագործվում է կրթությունը: Արդենիսկ երևան է գալիս կրթություն ֆակտորի կարևորությունը: Հաջորդիվ կփորձենք հասկանալ կրթության դերն ու նշանակությունը առհասարակ ու հատկապես աղքատության հաղթահարման համատեքստում:

---

[42] Տե՛ս World Vision Armenia,Աղքատության փուլային հաղթահարում,URL:https://www.wvi.org/hy/publications/brochure/armenia/agkatowtyan-powlayin-hagtaharowm

[43] Տե՛ս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, URL:http://www.mlsa.am/?p=22979

# ԳԼՈՒԽ 2. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԱՃԻ և ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

## 2.1 ՀՀ կրթական համակարգի մարտահրավերներն ու հեռանկարները

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար: Բոլոր ժամանակներում կրթությունը կարևոր տեղ ու դեր է ունեցել: Փոխվել են ժամանակները, կրթության որակը ավելի է կատարելագործվել, հետևաբար էլ ավելի է բարձրացել նրա դերը: Առանց կրթության պատկերացնել կյանքը մեր ժամանակներում բավական դժվար է: Կրթությունը ունի հզոր դրական ազդեցություն հասարակության և առհասարակ մարդկության համար: Կրթության միջոցով մարդը կատարելագործվում է և ձգտում կատարելության: Բոլոր ժամանակներում մեծ մտածողները մարդու գլխավոր հարստությունը համարել են կրթությունը: Հաշվի առնելով այն գիտատեխնիկական աննախադեպ աճը, որը կրում է 21-րդ դարը՝ առաջանում է անհրաժեշտություն սովորողների կողմից տեղեկատվության յուրացման, կուտակման և վերլուծության համար: Ուստի կրթությունը պետք է առաջին հերթին ապահովի գիտելիքի յուրացումը, ինչպես նաև յուրացված գիտելիքի վերլուծությունը և սովորողների կողմից պրակտիկայում դրանց կիրառումը: Կրթությունը արդյունավետ է, եթե բարձր է կրթության որակը: Ուստի փորձենք բացահայտել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի կառուցվածքը, մարտահրավերներն ու հեռանկարները:

Կրթությունը գիտելիքների, հմտությունների, արժեքների, ավանդույթների, սովորությունների ձեռքբերումն է[44]: Կազմակերպման տեսանկյունից կրթությունը ձևակերպվում է ֆորմալ և ոչ ֆորմալ ձևերով, և ցանկացած փորձ, որը ֆորմալ ազդեցություն կարող է ունենալ մարդու մտածելակերպի, զգացմունքների և վարվելակերպի վրա, համարվում է կրթական: Կրթության դերն էապես արժևորվել է դեռևս մեր թվարկությունից առաջ, երբ Պլատոնը հիմնադրեց Աթենքի ակադեմիան,

---

[44] Տե՛ս Грехнев В. С.,Философия и общество. Ценностные основания процессов образования и образованности людей в современном обществе, Выпуск №3(59)/2010,стр.41

որը Եվրոպայում բարձրագույն կրթություն ստանալու առաջին ինստիտուտն է համարվում[45]: Որպես ինտելեկտուալ ակունք մեծ է Հունաստանի դերը: Դեռևս մեր թվարկությունից առաջ 330 թվականին հաստատված Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը, Աթենքից հետո Հին Հունաստանի ինտելեկտուալ ակունքն էր: Հենց Ալեքսանդրիայում մեր թվարկությունից առաջ երրորդ դարում հիմնադրվեց Ալեքսանդրիայի գրադարանը[46]: Կրթության դերը մեծապես արժևորվում էր նաև Չինաստանում, ընդ որում դեռևս մեր թվարկությունից առաջ վեցերորդ դարում: Երկրի ամենաազդեցիկ փիլիսոփան էր Կոնֆուցիոսը, որը Չինաստանի Լուի նահանգից էր:Նրա կրթական մոտեցումը դեռևս շարունակում է ազդեցություն ունենալ թե՛ Չինաստանի հասարակության վրա, թե՛ հարևան երկրների, ինչպիսիք են Ճապոնիան, Վիետնամը, Կորեան: Կոնֆուցիոսն ուներ կրթության մասին լավ մշակված թեորեմ, որն ուներ համարժեք բառ, այն է՝ Նաուատլում: Սա իրենից ենթադրում է «մարդուն մեծացնելու և կրթելու արվեստը»[47], կամ «մարդկանց ուղղորդելու և դաստիարակելու արվեստը»: Սա համարվում էր կրթության հայեցակարգային ձևակերպում, ըստ որի՝ կրթությունը սկսվում է տանը, այնուհետև ստանում ֆորմալ բնույթ, այն է դպրոց հաճախելը, այնուհետև ամրապնդվում է համայնքում ապրելով: Հատկանշական է այն, որ ըստ պատմաբանների՝ կրթությունը պարտադիր էր բոլորի համար՝ անկախ սեռային ու սոցիալական պատկանելությունից: Առանձնացվում էր նաև «մարդուն իմաստություն տալու գործընթացը»[48]: Այս մտապատկերներն ընդգծում են կրթական փորձի մի հավաքական խումբ, որը ծագել է անցյալի փորձառությունը և մտավոր ժառանգությունը հաղորդակցման շնորհիվ հաջորդ սերնդին փոխանցելով, որի նպատակն էր անհատական զարգացումը և իր՝ հասարակության մի մասը կազմելը:

Բազմաթիվ պետություններում Սահմանադրորեն և օրենսդրական ակտերով երաշխավորվում է յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը: Կրթության

[45] Տե՛ս Encyclopedia Britannica/Plato, URL:https://www.britannica.com/biography/Plato
[46] Տե՛ս Encyclopedia Britannica/Library of Alexandria, URL:https://www.britannica.com/topic/Library-of-Alexandria
[47] Տե՛ս Colin Ernesto , "Indigenous Education through Dance and Ceremony": A Mexica Palimpsest: New York: Palgrave Macmillan:2014, 65p.
[48] Տե՛ս León-Portilla Miguel, "Aztec Thought and Culture: A Study of the Ancient Nahuatl Mind" Norman: University of Oklahoma Press:1963, 134–135p.

իրավունքը ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության կողմից[49]: Յուրաքանչյուր պետության կայուն ու բարեկեցիկ առաջխաղացման հիմքը կրթությունն է: Հայաստանում ևս կրթական ոլորտը անչափ կարևորվում է, թե՛ որպես երկրի կայուն զարգացման, թե՛ մարդկային կապիտալի զարգացման, թե՛ ազգի վերարտադրության նախապայմաններից մեկը: Իսկ մարդկային զարգացման քաղաքականության հիմնական գերակայություններից են կրթության որակի, մատչելիության, արդյունավետության ապահովումը: Կրթությունը մեծ դեր ունի լուծելու և կայունացնելու պետության ռազմավարական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կայուն տնտեսական զարգացումը, աղքատության հաղթահարումը, ազգային անվտանգությունը, ժողովրդավարական հասարակության ստեղծումը, և գիտելիքահեն հասարակության կայացումը:

Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Մասնավորապես ՀՀ Սահմանադրության Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները վերտառությամբ 2-րդ գլխում՝ 38-րդ հոդվածը սահմանում է.

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք[50]:

Ինչպես ամրագրված է Սահմանադրությամբ՝ յուրաքանչյուրը կարող է ստանալ անվճար միջնակարգ կրթություն: Ընդ որում միջնակարգ կրթությունը հանրապետությունում ունի պարտադիր բնույթ: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո՝ յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է շարունակել կրթությունը, ունի իրավունք՝

---

[49] Տե՛ս United Nations instruments, International Instruments - Right to Education., 2014, Article 26,URL:https://www.right-to-education.org/sites/right-to education.org/files/resourceattachments/RTE_International_Instruments_Right_to_Education_2014.pdf

[50] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է Հանրաքվեի միջոցով, 06.12.2015թ.,հոդված 38

օրենքով սահմանված դեպքերում և կարգով, ստանալ անվճար կրթություն՝ մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում:

«Կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար[51]: Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով: Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ: Իրավական դաշտի կարգավորմանը անդրադառնալիս՝ նշենք, որ կրթության բնագավառը մեր երկրում կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով: Կրթության բնագավառում ՀՀ օրենսդրությունը խնդիրներն են՝ իրացնել ՀՀ բոլոր քաղաքացիների Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը, ինչպես նաև իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, կրթության համակարգի գործառնության և զարգացման համար իրավական երաշխիքների և մեխանիզմների ստեղծումը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանումը և փոխհարաբերությունների իրավական

---

[51] Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն

կարգավորումը[52]:

«Կրթության մասին» ՀՀ օրենքում ամասնավորապես ասված է, որ Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը: Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան[53]: Վերջին հաստատված կրթության զարգացման պետական ծրագիրը եղել է 2011-2015թթ. կրթության զարգացման պետական ծրագիրը, որը սակայն հիմա չի գործում: Այս պահին նախարարությունը մշակում է մինչեւ 2030 թվականի զարգացման նոր ծրագիրը, որը նաեւ ռազմավարություն են անվանում, ինչը սակայն դեռևս ընթացքի փուլում է և հրապարակային չէ:

Այժմ ամփոփ ներկայացնենք Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը:

Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է: Որո՞նք են կրթական պետական

[52]Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն,հոդված 2

[53]Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն, հոդված 4

չափորոշիչները: Այն մեջբերված է ՀՀ «Կրթության մասին» օրենքում: Հայաստանի Հանրապետությունում սահմանվում և հրապարակվում են պետական կրթական չափորոշիչներ, որոնք շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմքն են՝ անկախ նրանց ստացած կրթության ձևից և ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևից[54]: Կրթական ծրագիրը իր հերթին սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը:

Հայաստանի կրթական համակարգը ներառում է.

- նախադպրոցական կրթությունը
- ընդհանուր միջնակարգ կրթությունը՝ կազմված տարրական, միջին կամ հիմնական և ավագ դպրոցից,
- նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը,
- հետբուհական կրթությունը,
- մասնագետների վերաորակավորման և որակավորման բարձրացման հաստատությունները
- գնահատման և կրթական ծառայություններ առաջարկող հաստատությունները:

Հանրապետությունում գործում է նաև ոչ պետական ուսումնական հաստատությունների համակարգ՝ նախադպրոցական հաստատություններ, դպրոցներ, վարժարաններ, ԲՈՒՀ-եր և այլն, որոնք ոչ միայն ապահովում են կրթության համակարգում կրթական ծառայությունների շուկայի գոյությունը, այլև էական ներդրում ունեն կրթության համակարգի զարգացման գործում:

Ըստ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ նախադպրոցական կրթությունը տարրական ընդհանուր կրթությանը նախապատրաստող, նախադպրոցական կրթական ծրագրով իրականացվող կրթությունն է:

Նախադպրոցական կրթության նպատակներն են՝

[54] Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն, հոդված 9

ա) երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը.

բ) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը.

գ) դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը[55]:

Գլխավոր դերը՝ նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման հարցում պատկանում է ընտանիքին: Պետությունն իր հերթին ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ հանրակրթությունը անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որն իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ կրթության հիմնական և լրացուցիչ ծրագրերով: Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը[56]:

Նշենք, որ միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում: ՀՀ-ում միջնակարգ կրթության տևողությունն է 12 տարի: Եռաստիճան համակարգը ներառում է՝

- ✓ տարրական դպրոց՝ 1-4-րդ դասարաններ
- ✓ միջին դպրոց՝ 5-9-րդ դասարաններ
- ✓ ավագ դպրոց՝ 10-12-րդ դասարաններ[57]:

Մասնագիտական ուսումնական հաստատություններն իրականացնում են «Կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված, կրթական տարբեր մակարդակներին բավարարող կրթական ծրագրեր՝ նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական որակավորմամբ կադրեր պատրաստելու նպատակով:

---

[55] Տե՛ս «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 15.11.2005թ.,ՀՕ-236-Ն, հոդված 6

[56] Տե՛ս «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից,10.07.2009թ.,ՀՕ-236-Ն,հոդված 5

[57]Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն, հոդված 18

Ըստ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ արհեստագործական կրթություն է համարվում առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա արհեստագործական կրթական ծրագրերի իրականացումը, բացառությամբ վարպետային ուսուցման: Իսկ միջին մասնագիտական կրթությունն է՝ առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում[58]:

Ըստ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ բարձրագույն մասնագիտական կրթություն է ամարվում առնվազն միջնակարգ կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթությունը[59]: Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը: Հայաստանի Հանրապետությունում գործում են բարձրագույն ուսումնական հաստատությունների տարատեսակներ: Մասնավորապես՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա:

Հայաստանի Հանրապետությունում տրվում են բարձրագույն կրթության հետևյալ աստիճանները՝

- ✓ բակալավր
- ✓ դիպլոմավորված մասնագետ
- ✓ մագիստրոս[60]:

Հետբուհական մասնագիտական կրթության նպատակը բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումն է: Հետբուհական

---

[58]Տե՛ս «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 15.11.2005թ.,ՀՕ-236-Ն., հոդված 3

[59]Տե՛ս «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 14.12.2004թ.,ՀՕ-62-Ն, հոդված 3

[60]Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն ,հոդված 24

մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով[61]:

Ուսուցման լեզվի մասին խոսելիս նշենք, որ ըստ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է: Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ: Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետությունում խուլերի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացվում են հայերեն ժեստերի լեզվով[62]:

Հայաստանի Հանրապետությունը, համագործակցելով սոցիալական գործընկերների հետ՝ ապահովում է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան, ինչպես նաև երաշխավորում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության համակարգի համաչափ գործարկումն ու արդյունքների ճանաչումը: Օրենքը նաև սահմանում է, թե ինչ է իրենից ներկայացնում ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ կրթությունը: Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի ՝

- ✓ ֆորմալ կրթություն է համարվում հանրակրթական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակը կամ ամբողջությունը, որն իրականացվում է համապատասխան ուսումնական

[61]Տե՛ս «Կրթության մասին»ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն,հոդված 25

[62]Տե՛ս «Լեզվի մասին» ՀՀ օրենք,ընդունվել է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 30.03.1993թ., Հ.Ն-0773-I., հոդված 2

հաստատության (հաստատությունների) կողմից և հանգեցնում տվյալ մակարդակի որակավորման աստիճանի շնորհման և դիպլոմավորման:

✓ ոչ ֆորմալ կրթություն(ուսուցում) է համարվում կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

✓ ինֆորմալ կրթությունն արդեն անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ տարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներն են, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի[63]:

Ինչպես վերը նշվեց Հայաստանի Հանրապետությունը ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մեր հանրապետությունում միջնակարգ կրթությունը ունի անվճար և պարտադիր բնույթ: Միջնակարգ կրթության հասանելիության ու անվճարության սկզբունքները յուրաքանչյուր զարգացող պետության համար էական նշանակություն ունեն: Մեր երկրում անվճար է միջնակարգ կրթությունը, սակայն վճարովի են դասագրքերը, շատ դպրոցներում սնունդը, արտադասարանական միջոցառումները, ինչը իրականում խոցելի է դարձնում աղքատ բնակչությանը՝

[63]Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն,հոդված 3

կրթության հասանելիության տեսանկյունից: Այսինքն այն երեխաները, ովքեր չունեն գումար վճարելու դասագրքերի համար, չեն ունենում դասագրքեր, ինչն էլ իր հերթին դժվարացնում է դասապրոցեսին մասնակցությունը, և բերում է երեխայի կրթության խաթարմանը: Ուստի միջնակարգ կրթության անվճարության սկզբունքին զուգահեռ պետությունը խնդիր ունի նաև միջոցներ տրամադրելու երեխաների դասագրքերի ու սնունդի ծախսն ամբողջությամբ իր վրա վերցնելու համար: Անվճար սնունդի հետ կապված ծրագրեր մեր հանրապետությունում արդենիսկ իրականացվում են, որոնց կանդրադառնանք ստորև: Այնուամենայիվ, 2011 թվականի մարդահամարի տվյալները ցույց են տալիս, որ մեր հանրապետությունում գրեթե ողջ բնակչությունը գրագետ է: Ըստ մարդահամարի՝ գրաճանաչ չէ միայն բնակչության 0.3 տոկոսը[64]: Հիմնական կրթությունը մատչելի է և նրան մասնակցությունը դիտվում է և՛ աղքատների, և՛ ոչ աղքատների տեսանկյունից: Սակայն աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության ընդգրկվածությունը հիմնականում ցածր է միջնակարգ կրթության բարձր դասարաններում և բարձրագույն կրթական հաստատություններում: Բարձրագույն կրթությունը մեր երկրում դեռևս մնում է բարձր ծախսեր պահանջող, այդիսկ պատճառով միջնակարգ կրթությունից հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչությունը հիմնականում դուրս է մնում կրթական համակարգից: Ուստի մեր հանրապետությունում մեծ է անհրաժեշտությունը քայլեր իրականացնելու բարձրագույն կրթության մատչելիության և աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության ընդգրկվածությունը բարձրագույն կրթության մեջ մեծացնելու գործում:

Անդրադառնանք նաև կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներին: Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային

[64]Տե՛ս «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե», «Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը», Երեւան, 2018թ.: էջ 173

արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.

2) կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.

3) կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.

4) միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.

5) սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը.

6) ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը.

7) ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը.

8) պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.

9) ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը[65]:

Այստեղ ևս մեր ուշադրությունն ենք հրավիրում մատչելիության ու հասանելության սկզբունքներին: Յուրաքանչյուր առողջ և զարգացած հասարակության հիմքը կրթությունն է: Կրթությունը նաև մասնակցությունը կարևոր խթանող գործոն է քաղաքացիական մշակույթի և ժողովրդավարական քաղաքականության գործընթացներում: Կրթության ոլորտի բարեփոխումները Հայաստանում սկսվել են դեռևս Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում: Չնայած իրականացված մի շարք բարեփոխումներ հնարավորություն տվեցին կայունացնել իրավիճակն ու ստեղծել նախադրյալներ զարգացման համար, այնուամենայնիվ կրթության համակարգը դեռևս հեռու է իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից: Այսօր առաջ են եկել նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան: Բարեփոխումների շոշափելի և հասարակության կողմից արժևորվող

[65]Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն,հոդված 5

ձեռքբերումների բացակայության պատճառով կրթության համակարգը հայտնվել է մի իրավիճակում, երբ խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, վտանգված է վստահությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ: Միաժամանակ, թե՛ հասարակական գիտակցության, թե՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: ՀՀ կառավարության 2019 թվականի N 65-Ա որոշմամբ հաստատված կառավարության ծրագրում՝ Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի վերտառությամբ գլխում անդրադարձ է կատարվել կրթությանը և գիտությանը: ՀՀ կառավարության համար գերակա խնդիր է համարվում կրթության և գիտության զարգացումը, ինչի շնորհիվ էլ միայն մեր երկրում հնարավոր է հասնել կայուն ու ներառական զարգացման, ինչպես նաև համընդհանուր բարեկեցության: Ըստ ՀՀ կառավարության ծրագրի՝ դպրոցները պետք է վերածվեն զարգացման կենտրոնների՝ նպաստելով համայնքի սոցիալ-մշակութային կյանքի վերածննդին, դառնալով համայնքի համար բաց, ազատ ստեղծագործական կենտրոններ[66]: Առանցքային են համարվում կրթության բովանդակության արդիականացումը՝ ուղղված սովորողների ճանաչողական, անձնային և միջանձնային հմտությունների զարգացմանը, դասավանդողների կարողությունների զարգացումը, մասնագիտության հեղինակության և սոցիալական ապահովության մակարդակի բարձրացումը, անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը, ինչպես նաև կրթություն-գիտություն-աշխատաշուկա կապի ամրապնդումը:

Որպեսզի լավ աշխատի կրթական համակարգը, անհրաժեշտ է, որ լավ աշխատեն նաև նրա մեխանիզմները: Այսինքն այն, որ ունենք այսօր ՀՀ-ում կրթական համակարգ այն մեզ համար կարևորագույն ձեռքբերում է, սակայն որպեսզի կրթական

[66]Տե՛ս «ՀՀ կառավարության ծրագիր»՝ հաստատված ՀՀ կառավարության 08.02.2019թ. №65-Ա որոշմամբ, էջ 31

համակարգը լինի արդյունավետ և համահունչ միջազգային կրթական հարթակին պետք է արդյունավետ աշխատեն նաև նրա մեխանիզմները: Այդ մեխանիզմներն այս պարագայում թե՛ մանկապարտեզներն են, թե՛ դպրոցները և թե՛ բուհական համակարգը: Եվ այս մեխանիզմների արդյունավետ աշխատանքն է, որ հանգեցնում է համակարգի անխափան ու արդյունավետ աշխատանքին: Սակայն այս ամենի հետ մեկտեղ մեր կրթական համակարգի առաջ ընկած են մարտահրավերներ: Սրանցից գլխավորը կրթության որակի բարձրացումն է: Կրթության բարձր որակը հնարավորություն կտա լինել աշխարհում մրցունակ, քանզի մեկ բան է ունենալ ուղղակի կրթական համակարգ, մեկ բան է ունենալ կրթական համակարգ, որը կտա հնարավորություն երկրում մրցունակ քաղաքացիներ ձևավորել: Հանրակրթության մասին խոսելիս հասկանում ենք, որ այն պետք է լինի ազգային: Ուղղակի վերցնել այլ երկրների հաջողված փորձերը ու ներդնել չենք կարող, քանի որ խոսքը հայկական կրթության մասին է: Խոսքը միայն չի վերաբերում հայոց լեզվին: Սակայն լեզուն նույնպես կարևոր պայման է, քանի որ պետությունն իր առջև դնում է նպատակ ձևավորելու ՀՀ քաղաքացի: Այս առումով առանցքային է ազգային կրթակարգի ձևավորումը:

ՀՀ կրթական համակարգի առջև ընկած մարտահրավերներից է այն, որ այն մասնագիտությունները, որոնք այսօր կան կրթական ծրագրերում մեծամասամբ հին են: Ուստի հարատև փոփոխվող աշխարհում մրցունակ լինելու համար անհրաժեշտ է քայլել ժամանակին համընթաց: ՀՀ կառավարության ծրագրերում գերակայություն պետք է սահմանվի առարկաների զարգացման ուղղությամբ: Կրթական համակարգի արդյունավետության համար մի շարք խնդիրների արդյունավետ լուծումներ տալու համար Կառավարությունը իր առջև դրել է մի շարք ծրագրային նպատակներ, որոնք ներկայացնում ենք ստորև: Հանրակրթության ոլորտում Կառավարության ծրագրային նպատակներն են՝

- ✓ բարձրացնել նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության աստիճանը բոլոր համայնքներում՝ մինչև 2023 թվականը 3 տարեկանից բարձր երեխաների ընդգրկվածությունը հասցնելով 70 տոկոսի.
- ✓ ներդնել դպրոցական կառավարման բարելավված համակարգ. -

ներդնել փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների կրթության կազմակերպման արդյունավետ մոդելներ.

- ✓ ապահովել բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին կայուն դպրոցական սննդով.
- ✓ անցնել համընդհանուր ներառական հանրակրթությանը հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում մինչև 2023 թվականը.
- ✓ նոր բովանդակություն հաղորդել 12-ամյա կրթությանը՝ վերանայել չափորոշիչները, ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը՝ խթանելով քննական մտածողությունը, նորարարությունը և վերլուծական ու ստեղծագործական հմտությունները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով քաղաքացիական, ֆինանսական և ձեռնարկատիրական կրթությանը: Վերանայել ԳՏՃՄ (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) առարկաների և օտար լեզուների բովանդակությունը, դասավանդման մոտեցումները:

Մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումները միտված են լինելու՝

- ✓ կրթական ծրագրերի արդիականացմանը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին.
- ✓ նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատություններում կրթության և ուսուցման որակը բարձրացնելու համար գործատուների ակտիվ ներգրավմամբ ներդնել և ընդլայնել դուալ կրթական համակարգը՝ հաշվի առնելով տարածքային զարգացման գերակայությունները:

Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները միտված են լինելու՝

- ✓ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության և ակադեմիական ազատությունների ընդլայնմանը, արդյունավետ կառավարման, հավասարակշռված հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների ինստիտուցիոնալ հենքի ստեղծմանը.
- ✓ բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավմանը,

բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի շարունակական մեծացմանը.

- ✓ կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայմանը՝ ուղղելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխան.
- ✓ ուսանողի անհատական կրթական հետագծի ապահովմանը՝ կրթական ծրագրերի ճկուն կառուցվածքի ներմուծմամբ.
- ✓ բարձրագույն կրթության միջազգայնացմանը, շարժունության հնարավորությունների ընդլայնմանը.
- ✓ եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ուղղությունների և սկզբունքների իրականացմանը.
- ✓ բարձրագույն կրթության ֆինանսավորման աստիճանական ավելացմանը, ֆինանսավորման ծավալների ընդլայնմանը՝ զուգընթաց վերանայելով ուսումնական հաստատություններին տրամադրվող ֆինանսական միջոցների սկզբունքները, ֆինանսական աջակցության հասցեականությունը, նպատակայնությունը, ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության ցուցանիշները[67]:

Նշենք նաև, որ Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ծրագրի Մարդկային կապիտալի զարգացում վերտառությամբ ութերորդ գլխում առողջապահության, գիտության, մշակույթի կողքին առանձնացված է նաև կարևորագույն գերակայություն համարվող կրթությունը: Ծրագրում առաջնային խնդիրներ են կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, դրանց համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, մատչելի/հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար: Այդ խնդիրների լուծման համար երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում: Պայմանավորված

[67]Տե՛ս «ՀՀ կառավարության ծրագիր»՝ հաստատված ՀՀ կառավարության 08.02.2019թ. №65-Ա որոշմամբ,էջեր 32-34

կրթության բնագավառում բարեփոխումների հաջող իրականացման պահանջներով, ԿԶԾ-ով նախատեսվում էր հետևողականորեն ավելացնել կրթության ոլորտում պետական ծախսերը թե՛ անվանական մեծությամբ և թե՛ ՀՆԱ-ի նկատմամբ: Նկատի ունենալով ոլորտի կարևորությունը և իրականացվող բարեփոխումների ընթացքը, անհրաժեշտ է մեծացնել պետական հոգածությունը համակարգի նկատմամբ՝ ավելացնելով կրթության ոլորտին ուղղվող պետական ծախսերը: Ըստ որում, պետք է նկատի ունենալ նաև ժողովրդագրական ցուցանիշների միտումները, որոնք ակնհայտորեն ուղղված են կրթահամակարգի շահառուների թվաքանակի նշանակալի անկմանը: Այս նկատառումներով, համախմբված բյուջեի՝ կրթության ոլորտին ուղղվող ծախսերը պետք է աճեն:

Այսպիսով Հայաստանի կրթության զարգացման հեռանկարը դիտարկվում է երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման ներքոնշյալ հիմնական նպատակադրումների համատեքստում՝

- ✓ ապահովել կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների իրականացումը
- ✓ աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում
- ✓ կայուն տնտեսական աճի և մրցունակության ապահովում
- ✓ հայապահպանություն
- ✓ միջազգային և տարածաշրջանային համագործակցություն[68]:

Ուսումնասիրելով կրթության կարևորությունն ու դերը՝ ակնհայտ է դառնում դրա առանցքային ու էական լինելը անձի բարեկեցության գործում: Իրենց հերթին ուսումնասիրելով ՀՀ կրթական համակարգը, կրթական համակարգում առկա բացերը, կրթական համակարգի հեռանկարներն ու մարտահրավերները, ակներև է, որ մեր հանրապետությունում կրթության որակի բարելավման ուղղությամբ աշխատանքները պետք է լինեն շարունակական և պետք է ավելացվեն այն ֆինանսական միջոցները, որոնք ուղղվում են կրթության ոլորտի կազմակերպմանը: Կրթության դերի բարձրացումը, ինչպես նաև ուշադրության կենտրոնացումը կրթություն-աշխատաշուկա համապատասխանությանը, կտա հնարավորություն հաղթահարելու աղքատությունն ու ապահովելու բարեկեցություն:

---

[68]Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ.-ի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջեր 134-144

## *2.2 Կրթության դերն ու նշանակությունը հարափոփոխվող աշխարհում աղքատության հաղթահարման տեսանկյունից*

Արդենիսկ առաջին գլխում անդրադարձ է կատարվել ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին: Նպատակներից առաջինը աղքատության հաղթահարումն էր, որին մենք անդրադարձանք: Այս գլխում կներկայացվի արդեն չորրորդ նպատակը, որն է՝ ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ: Որակյալ կրթությունը համարվում է մարդկանց կենսամակարդակի բարելավման և կայուն զարգացման հիմք: Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ մեծ առաջընթաց է արձանագրվել բոլոր մակարդակներում կրթության հասանելիության և դպրոցներում ընդգրկվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ, հատկապես՝ կանանց ու աղջիկների համար[69]: Գրագիտության հիմնական հմտությունները զգալիորեն բարելավվել են, սակայն անհրաժեշտ են ավելի համարձակ ջանքեր՝ համընդհանուր կրթական նպատակների նվաճման ուղղությամբ ավելի մեծ առաջընթացի համար: Օրինակ՝ աշխարհը հասել է աղջիկների և տղաների հավասարության տարրական կրթության մեջ, սակայն սակավաթիվ երկրներ են հասել այդ թիրախին կրթական բոլոր մակարդակներում: Այնուամենայնիվ, չնայած այն հանգամանքին, որ զարգացող երկրներում տարրական կրթության մեջ ներգրավվածությունը հասել է 91%-ի՝ 57 մլն երեխա զրկված է դպրոց հաճախելու հնարավորությունից: Ուստի նպատակն է ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել հնարավորություններ՝ ողջ կյանքի ընթացքում ուսման համար: Արդի աշխարհում գնալով ավելի է կարևորվում կրթությունն ու դրա ընձեռած հնարավորությունները: Կրթությունն այն բանալին է, որը թույլ կտա հասնել Կայուն զարգացման մի շարք այլ նպատակների: Երբ մարդիկ հնարավորություն ունեն ստանալու որակյալ կրթություն, նրանք կարող են ճեղքել աղքատության շղթան: Հետևաբար, կրթությունն օգնում է կրճատել անհավասարությունները և հասնել գենդերային հավասարության: Այն նաև մեծացնում է մարդկանց՝ ավելի առողջ և կայուն կյանքով ապրելու հնարավորությունը: Կրթությունը նաև վճռորոշ դեր ունի

---

[69]Տե՛ս UN official page, Sustainable Development Goals, 4. Quality Education URL:https://www.un.org/sustainabledevelopment/education/

մարդկանց միջև հանդուրժողականության խրախուսման հարցում և նպաստում է ավելի խաղաղ հասարակությունների ձևավորմանը: Այո՛, կրթության միջոցով մարդիկ կարող են ունենալ ավելի բարենպաստ կյանք ու ձեռք բերել ավելի լավ աշխատանք: Կրթությունը նվազեցնում է անհավասարությունը: 1985-2000 թթ. 114 երկրների տվյալները ցույց են տալիս, որ կրթության մեկ հավելյալ տարին Ջինիի գործակիցը նվազեցնում է 1, 4 տոկոսային կետով: Ինչպես նշեցինք, զարգացող երկրներում ներգրավվածությունը տարրական կրթության մեջ հասել է ընդհուպ մինչև 91%-ի: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Վիճակագրության ինստիտուտի (UIS տվյալների կենտրոն) տվյալների՝ 2000-2012 թթ. ընթացքում դպրոց չհաճախող՝ տարրական դպրոցի տարիքի երեխաների քանակը Ենթասահարյան Աֆրիկայում 40%-ից նվազել է մինչև 20%, իսկ Հարավային Ասիայում 20%-ից նվազել է մինչև 6%: Սակայն կան երկրներ, որտեղ այսօր մարդիկ պայքարում են կրթության հասանելիության համար: Դպրոցում չընդգրկված երեխաների կեսից ավելին ապրում է Ենթասահարյան Աֆրիկայում՝ այն դարձնելով դպրոց չհաճախող երեխաների ամենամեծ քանակն ունեցող տարածաշրջանն աշխարհում: Այս տարածաշրջանն ունի շատ երիտասարդ բնակչություն, ուստի մինչ 2030 թ. 3-15 տարեկան 444 մլն երեխայի համար պետք է ապահովի հիմնական կրթություն: Այդ թիվը 2, 6 անգամ ավելի է ներկայումս ընդգրկվածների քանակից: Անգամ 21-րդ դարում դեռևս կան այնպիսի խմբեր, որոնց համար կրթությունն առավել դժվար հասանելի է: Եվ այդ խմբերից մեկն են կանայք և աղջիկները: Զարգացող տարածաշրջաններում երկրների մոտ 1/3-ը տարրական կրթության մեջ չի հասել գենդերային հավասարության: Ենթասահարյան Աֆրիկայում, Օվկիանիայում և Արևմտյան Ասիայում աղջիկները թե՛ տարրական, թե՛ միջնակարգ դպրոց հաճախելու հարցում դեռևս բախվում են խոչընդոտների: Կրթության այս անբարենպաստ վիճակի հետևանքով երիտասարդ կանայք չեն կարողանում աշխատաշուկայում հմտություններ ձեռք բերել և ունեն սահմանափակ հնարավորություններ[70]: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ աշխարհը խնդիր ունի հասնելու գենդերային հավասարության, և որ շատ հաճախ կանայք ու աղջիկները

[70] Տե՛ս UN, Quality Education: Why It Matters, URL:https://www.un.org/sustainabledevelopment/wp-content/uploads/2017/02/4.pdf

տուժում են՝ հատկապես այնպիսի կարևոր ոլորտներում, որոնցից մեկ էլ կրթությունն է: Կրթությունը նաև գենդերային հավասարության հասնելու համար է բանալի:

Արդի աշխարհում բավականին կարևորվում է լրացուցիչ և շարունակական կրթության դերը: Մարդիկ ողջ կյանքի ընթացքում պետք է շարունակ սովորեն, փոխանցեն իրենց գիտելիքներն ու սովորեն մեկը մյուսից: Գիտելիքի ու հմտությունների շարունակական կատարելագործումը էական է կյանքի պայմանների ու կենսամակարդակի բարելավման գործում: «Կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է հարատև կրթությունը, ըստ որի՝ հարատև կրթությունը՝ անձի ամբողջ կյանքի ընթացքում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասնակցության միջոցով ձեռք բերած ուսումնառության արդյունքներն են, որոնցով անհատը ձևավորում կամ կատարելագործում է իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը: Օրենքում տրված է նաև լրացուցիչ կրթության սահմանումը, համաձայն որի՝ լրացուցիչ կրթությունը լրացուցիչ կրթական ծրագրով իրականացվող ոչ ֆորմալ ուսումնառություն է, որի առավելագույն տևողությունը կարող է լինել մինչև հինգ ամիս[71]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայքում տեղադրված են այն երկրները, որոնք ունեն օրենքներ, ռազմավարություններ, պլաններ՝ կապված ցկյանս ուսումնառության հետ: Այդ երկրներից են՝ Ավստրիան իր «Ցկյանս ուսումնառության ռազմավարությամբ» (2011թ.), Բուլղարիան իր «Ցկյանս ուսումնառության ազգային ռազմավարությամբ» (2013թ.), Գերմանիան՝ «Դաշնային կառավարության հայեցակարգը՝ ցկյանս ուսումնառության մասին» (2008թ.), Ճապոնիայի՝ «Կրթության խթանման հիմնական պլանը» (2008թ.), Թուրքիայի՝ «Թուրքիայի հաջողության շարժիչ ուժը. Ցկյանս ուսումնառության քաղաքականություն» (2006թ.) և այլն[72]: Հայաստանում 2009 թվականի հոկտեմբերի 15-ին ուժի մեջ մտավ «Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության հայեցակարգին հավանություն տալու մասին» N 43 որոշումը: Միջազգային պրակտիկայում ցկյանս ուսումնառությունը սահմանվում է, որպես

---

[71]Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք,ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 14.04.1999թ., ՀՕ-297-Ն,հոդված 3:

[72] UNESCO, Collection of Lifelong Learning Policies and Strategies,URL:https://uil.unesco.org/lifelong-learning/lifelong-learning-policies

«կյանքի ընթացքում եղած ուսումնական բոլոր գործողությունների ամբողջություն, որը նպատակ ունի կատարելագործել գիտելիքը, հմտություններն ու կարողությունները՝ անձնական, քաղաքացիական, սոցիալական և (կամ) աշխատանքային հեռանկարների համար»: Ցկյանս ուսումնառության իրականացման եղանակներն են՝ ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ ուսումնառության եղանակները: Հատկանշական է այն հանգամանքը, որ ուսումնառության բոլոր եղանակները՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ, պետք է համարվեն հավասարապես կարևոր: Կարևոր է այն հանգամանքը, որ պետք է ճանաչել և ընդունել այն, որ անձանց ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության գործունեությունը կարևոր նշանակություն ունի անբարենպաստ պայմաններում գտնվող խմբերին ներառելու, ինչպես նաև ֆորմալ կրթություն չունեցողներին խրախուսելու համար: Կրթական համակարգն և՛ որպես գերակայության, և՛ ֆինանսավորման տեսանկյունից պետք է հավասարակշռված լինի բոլոր չորս բաղադրիչներում՝ հիմնական, լրացուցիչ մասնագիտական, լրացուցիչ ոչ մասնագիտական, ինքնակրթություն, ինչպես նաև դրանց իրականացման եղանակներում՝ ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ: Ի վերջո ցկյանս ուսումնառությունը բերում է այնպիսի կարևորագույն գործառույթների իրականացման, ինչպիսիք են հասարակական գործունեության մեջ զանգվածների արդյունավետ մասնակցության ընդլայնումը, անձի բազմակողմանի համամշակութային զարգացումը, հիմնական կրթության կամ կրթության գործող համակարգի արդիականացումը, սերունդների միջև կրթական և մշակութային տարբերությունների նվազեցումը, ինքնակրթության սկզբունքների ուսուցումը և ինքնակրթության ունակությունների ձևավորումը, վերապատրաստման, որակավորման բարձրացման և վերաորակավորման դասընթացների կազմակերպումը, նորագույն տեխնոլոգիաների ուսուցումը[73]:

Ինչը վերաբերում է ոչ ֆորմալ կրթությանը, ոչ ֆորմալ կրթությունը կարևոր դեր է խաղում այն երեխաների ու մեծահասահասկների կրթության գործում, ովքեր չեն ունեցել դպրոց հաճախելու հնարավորություն: Ոչ պետական հաստատությունները, որոնք զբաղվում են կրթությամբ և անձի զարգացմամբ, հիմնականում իրականացնում

[73] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության հայեցակարգին հավանություն տալու մասին, 15.10.2009 N 43

են ոչ ֆորմալ կրթություն: Եթե ֆորմալ կրթությունը հիմնականում ուղղված է մարդկանց մտավոր ունակությունների զարգացմանը, էրուդիցիայի խորացմանը, վերլուծական մտածողության զարգացմանը՝ բավականաչափ գիտելիքներ ու դրանց հետ աշխատելու գործիքներ տրամադրելով, ապա ոչ ֆորմալ կրթությունն ուղղված է հիմնականում արժեքների, մոտեցումների, վարվելակերպի ձևավորմանը: Ոչ ֆորմալ կրթությունը տարբեր գիտնականների կողմից տարբեր մեկնաբանությունների է արժանացել: Իր «Ոչ ֆորմալ կրթությունը զարգացող հասարակությունների համար» ուսումնասիրության մեջ ավստրիալցի լեզվաբան Զիվանդոնեն կրթության այս ձևը սահմանում է որպես «մարդկանց կարիքներն ու հետաքրքրությունները գնահատելու եղանակ կամ գործընթաց, նրանց հետ հաղորդակցվելու, ինչպես նաև նրանց մասնակցությունը խթանելու՝ ձեռք բերելու նոր հմտություններ ու կարողություններ, որոնք կբարելավեն իրենց կյանքի որակը»[74]:

Այս կրթական ինստիտուտը հիմնականում հիմնված է երկու կառույցների՝ Եվրամիության և Եվրախորհրդի շրջանակներում: Ոչ ֆորմալ կրթությանն այսօր նպաստում է ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Ոչ ֆորմալ կրթությունը հիմնականում տարբերվում է ֆորմալ կրթությունից հետևյալով.

- ուսուցում ըստ անհրաժեշտության և կարիքի,
- կապը պրակտիկայի հետ,
- ճկուն կրթական ծրագրերը, դասացուցակը և իրականացման վայրի ընտրությունը:

Առանցքային է այնպիսի դասընթացների դերը, որոնց կմասնակցեն հաշմանդամություն ունեցող մարդիկ: Սա քայլ է նման մարդկանց համար դեպի հասարակություն, դեպի ինտեգրում: Կրթության այս տեսակը մեծ հնարավորություն է հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավման համար: Ոչ ֆորմալ կրթության տարբերակներ են նաև միջազգային փոխանակման ծրագրերը: Այս ծրագրերը Հայաստանում այդքան էլ շատ չեն: Սակայն կան ծրագրեր ու կազմակերպություններ, որոնք օգնում են երիտասարդներին իրականացնելու միջմշակութային փոխանակություններ: Հիմնական ծրագրերից, որը բաց է

[74]Տե՛ս Ramon C. Cabag, "Nonformal Education", pub. at Quezon city, 1999,page 2

Հայաստանի համար Եվրամիության ծրագիրն է 2004-2007 թթ. այն կոչվում էր «Երիտասարդություն», 2007-2013 թթ. երկրորդ հրատարակությունը լույս տեսավ, որը կոչվում էր «Երիտասարդությունը շարժման մեջ» և 2014-ից նոր հրատարակություն է լույս տեսել, որը կոչվում է «Erasmus+»: Այս ծրագիրը հիմնականում խթանում է այն երիտասարդների շարժունակությունն ու մասնակցությունը, որոնք համեմատաբար քիչ հնարավորություններ ունեն: Եվ խոսքը միայն չի վերաբերում հաշմանդամություն ունեցող անձանց: Շատ հաճախ այդ հնարավորությունների պակասը կարող է կապված լինել սոցիալական, լեզվական, աշխարհագրական գործոնների հետ: Հայաստանում կա անհրաժեշտություն ավելացնելու ոչ ֆորմալ կրթության ծրագրերի թիվը նաև աղքատ բնակչության շրջանում: Որպեսզի այսպիսով մարդիկ կարողանան ավելացնել իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ փորձելով բարձրացնել իրենց կյանքի որակը: Սակայն մեր երկրում ոչ ֆորմալ կրթության հետ կապված կա մեկ այլ խնդիր: Այն է հասարակության տեղեկացվածության պակասը՝ կապված այս կրթաձևի հետ: Ուստի անհրաժեշտ է նախևառաջ հասարակության իրազեկության աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում՝ ոչ ֆորմալ կրթության համակարգի զարգացման մատչելիության բարձրացման և տարածման համար:

Խոսելով լրացուցիչ կրթության մասին, նշենք, որ լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են քաղաքացիների և հասարակության կրթական պահանջմունքների բավարարման նպատակով: Մասնագիտական կրթության յուրաքանչյուր մակարդակի շրջանակում լրացուցիչ կրթության հիմնական խնդիրն անձի մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացումն է: Լրացուցիչ կրթությունն իրականացվում է հանրակրթական, մասնագիտական և լրացուցիչ կրթության ուսումնական հաստատություններում, ինչպես նաև անհատական մանկավարժական գործունեության միջոցով, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2015 թվականի սեպտեմբերի 10-ի Կառավարության որոշմամբ ընդունվել է «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման եվ իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ եվ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման եվ ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշումը: Այն մասնավորապես սահմանում է լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը: Ոչ ֆորմալ

և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը: Սույն որոշման խնդիրն է համարվում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության համակարգն անձանց և աշխատաշուկայի կարիքներին համաչափ գործարկելու և արդյունքները ճանաչելու գործընթացի պետական երաշխիքներն ապահովելը[75]: Այնուամենայնիվ, լրացուցիչ և շարունակական կրթության համար հիմնախնդիր է համարվում օրենսդրական դաշտի կարգավորումը: Հիմնախնդիրներ են նաև լրացուցիչ կրթության համակարգի բարեփոխումները, աշխատաշուկայի և մասնագիտական կրթության համակարգի միջև արդյունավետ համագործակցության բացակայությունը: Այս առումով մեր պետությունը ունի մի շարք անելիքներ, քանի որ մեր հասարակությունում ոչ ֆորմալ և լրացուցիչ կրթության դերն այնքան էլ պարզորոշ չէ, և հասարակության շատ հատվածներ կրթությունը հասկանում են միայն ֆորմալ ասպեկտով: Կարևորվում է նաև ոչ ֆորմալ և լրացուցիչ կրթության միջոցով՝ այս համակարգում առկա խնդիրների լուծմամբ հասնել շարունակական կրթության ապահովման, գիտելիքի կարևորության վերաբերյալ հասարակության գիտակցության բարձրացման, Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի ամրապնդման համար:

Կրթության՝ որպես աղքատության հաղթահարման գործոն, կարևորության մասին խոսվում է նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքների մեջ առանձնանում է բարեկեցությունը, քանզի Հայաստանի Հանրապետությունը ձգտում է կայուն զարգացման միջոցով բնակչության համար ապահովել կյանքի բարձր որակ: Ամենից ուշագրավ է այն, որ պետության համար որպես ներքին սպառնալիք է դիտվում գիտակրթական համակարգի ցածր արդյունավետությունը: Կրթությունը ավանդաբար մեծ դեր ունի Հայաստանում և գիտակրթական համակարգի կառավարման անարդյունավետությունը, միջազգային ներգրավվածության ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև յուրաքանչյուրի համար մասնագիտական կրթության ոչ լիարժեք մատչելիությունը սպառնալիքներ են ազգային

[75] Տե՛ս «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման եվ իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ եվ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման եվ ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշում, գլուխ 1-ին, կետ 2-րդ

անվտանգության համար[76]: Երկրում բարեկեցություն հաստատելու և աղքատությունը հաղթահարելու հարցում ամենից կարևոր նպատակների թվին են դասվում բնակչության սոցիալական պահանջմունքների բավարարումը, սոցիալական ենթակառուցվածքների ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը: Կարևոր խնդիր է այսօր համարվում «ուղեղների արտահոսքի» կանխումը: Այսինքն ստեղծել սոցիալ-տնտեսական այնպիսի միջավայր, որպեսզի մարդիկ, ովքեր կարող են իրենց գիտելիքներով նպաստ բերել մեր երկրին ու դրա զարգացմանը, ավելի լավ կյանքի փնտրտուքներով ու մասնագիտական գնահատվածության պակասի պատճառով չլքեն երկիրը: Հայաստանի Հանրապետությունը կարևորում է նաև տնտեսության և հասարակության կայուն զարգացման համար անհրաժեշտ մասնագիտական աշխատուժի, մասնավորապես՝ գիտական և գիտամանկավարժական ներուժի վերարտադրությունը, Հայաստանի մտավոր ներուժի զորացմանը միտված հեռանկարային պետական քաղաքականության իրականացումը, գիտակրթական համակարգի վերակառուցումը և համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին, ուսուցման առաջատար տեխնոլոգիաների ներդրումը, հայոց լեզվի՝ որպես հայ ազգի լեզվամտածողության հենքի և Հայաստանի Հանրապետության պետական լեզվի դերի բարձրացումը, մտավոր սեփականության արդյունավետ պաշտպանությունը: Թե՛ հասարակական գիտակցության, թե՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում է, և շարունակում է դրսևորվել որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևորագույն գործոն:

Կրթության բնագավառի գերխնդիրն է համարվում կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը եւ քաղաքացիների՝ իրենց ձգտումներին եւ ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Խոսելով մատչելիության մասին նշենք, որ կրթության համակարգի հիմնական բնութագրիչներից են համարվում

---

[76] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», ընդունվել է ՀՀ նախագահի կողմից, 07.02.2007թ., ՆՀ-37-Ն

կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշները: Դրանից ելնելով կարելի է դատել, թե այս կամ այն սոցիալական խմբի համար որքանո՞վ են մատչելի կրթական ծառայությունները:

Անդրադառնանք նաև ներառական աճին ու նրանում կրթության կարևորությանը: Յուրաքանչյուր կայուն և զարգացող պետության կյանքում մեծ է ներառական տնտեսության և ներառական աճի դերը: Տնտեսապես զարգացած երկրների կազմակերպության (OECD) կայքում նշված է. «Ներառական աճը այն տնտեսական աճն է, որն արդարացի բաշխվում է հասարակությունում և հնարավորություններ ստեղծում բոլորի համար»[77]: Համաշխարհային բանկի խմբի՝ Հայաստանի վերաբերյալ հետազոտություններից մեկում ավելի պարզ բացատրություն է տրվում՝ «աճի գործընթաց, որի ժամանակ տնտեսական մասնակիցներին տրվում են հավասար հնարավորություններ, և բոլորը շահում են»[78]: Ներառական է համարվում այն տնտեսությունը, որը հնարավորինս շատ մարդկանց համար ստեղծում է բարեկեցիկ կյանքի հնարավորություններ: Ներառական տնտեսությանը բնորոշ են մի քանի հատկանիշներ, որոնցից կառանձնացնենք մասնակցայնությունը, հավասար հնարավորությունները: Մասնակցայնության առումով մարդիկ մասնակցում են տնտեսական կյանքին թե՛ որպես աշխատող, թե՛ որպես գործարար, թե՛ որպես սպառող: Այս դեպքում տնտեսական համակարգը թույլատրում է առանց բարդությունների գտնել աշխատանք: Ինչը վերաբերում է հավասար հնարավորություններին, ներառական աճի շնորհիվ հասարակության առավել խոցելի խմբերի համար դառնում են հասանելի բարեկեցության հասնելու ուղիները: Նրանց հասանելի են հանրային ծառայությունները, մասնավորապես առողջապահությունը, կրթությունը:Ներառական աճի կարևորագույն տարրերից են ներդրումները մարդկային կապիտալում՝ մասնավորապես կրթության, առողջապահության ոլորտներում, աշխատատեղերի ստեղծումը, մասնակցայնության խթանումը, սոցիալական պաշտպանությունն ու խտրականության վերացումը: Ըստ Համաշխարհային

[77] Տե՛ս OECD official page, Inclusive growth, URL:https://www.oecd.org/inclusive-growth/#inequality-puts-our-world-at-risk
[78] Տե՛ս World Bank official page, Inclusive Growth vs. Household Finance: A False Choice, URL:https://cgap.org/blog/inclusive-growth-vs-household-finance-false-choice

տնտեսական ֆորումի ներառական զարգացման ինդեքսի՝ Նորվեգիան աշխարհի ամենաներառական տնտեսությամբ երկիրն է: Նորվեգիային հաջորդում են Իսլանդիան, Լյուքսեմբուրգը, Շվեյցարիան, Դանիան[79]: Զարգացող երկրների ցանկում Հայաստանը 45-րդն է 74 երկրների շարքում: Հայաստանից առաջ են իր բոլոր հարևանները՝ Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան, Իրանը:

Ներառական ոլորտի վերլուծությունը բազմաոլորտային է, սակայն գրեթե բոլոր բաղադրիչներում հանդիպում ենք կրթության դերին ու ազդեցությանը: Ներառական աճը բնութագրող հիմնական ցուցանիշներից են բնակչության եկամուտների անհավասարությունը և աղքատությունը[80]: ՀՆԱ-ի նվազումը բերում է աղքատության բարձրացման, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում տնտեսական աճի վրա, իսկ տնտեսական աճի նվազումը հանգեցնում է զբաղվածության կրճատման[81]: Առհասարակ, ներդրումների հետգնման տեսանկյունից կրթությունն ունի ամենամեծ տեսակարար կշիռը. որոշ հետազոտությունների համաձայն, ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների համար կրթական ներդրումների հետգնումը կազմում է 9-10 տոկոս, եթե ուսումնառության ավարտին սովորողներն ունենում են պահանջվող հմտությունները:




Գծ.3 Հմտությունների և աշխատաշուկայի պահանջների անհամապատասխանությունը

79 Տե՛ս World Economic Forum,The Inclusive Development Index 2018, Summary and Data Highlights, page 3,URL: http://www3.weforum.org/docs/WEF_Forum_IncGrwth_2018.pdf

80 Տե՛ս International Monetary Fund, Country Report No. 17/227, p. 2,URL: file:///C:/Users/Admin/Downloads/cr17227%20(2).pdf

81 Տե՛ս International Monetary Fund, Country Report No. 17/227, p.7,URL: file:///C:/Users/Admin/Downloads/cr17227%20(2).pdf

Գծապատկերից երևում է, որ Հայաստանում գործատուների 80 տոկոսից ավելին բախվել է աշխատանք փնտրողների հմտությունների անհամապատասխանությանը բարձրագույն հմտությունների, իսկ շուրջ 70 տոկոսը՝ միջին և ցածր հմտությունների պահանջներին: Ներառական աճի ապահովման համատեքստում կարևորվում է նաև աշխատուժի հմտությունների անընդհատ զարգացումն ու կատարելագործումը: Սակայն ստորև բերված գծապատկերից երևում է, որ Հայաստանում կազմակերպությունների միայն 30 տոկոսն է իր հիմնական (լրիվ դրույքով) աշխատակիցների համար ապահովում շարունական կրթություն: Կրթության դրական ազդեցությունն ավելացնելու համար կարևոր նշանակություն ունի նաև նախադպրոցական կրթությունը:




*Source: Skills not just diplomas, World Bank.*

Գծ.4 Կազմակերպություններ, որոնք աշխատակիցների համար վերապատրաստման ծրագրեր են իրականացնում

Մարդկային կապիտալի ինդեքսում Հայաստանը 2018 թվականին զբաղեցնում է 78-րդ տեղը՝ 0.57 միավորով (առավելագույնը 1 է), ինչը նշանակում է, որ 2018 թվականին ծնված երեխայի հետագա աշխատանքային պոտենցիալը, ինչպես նաև ազդեցությունը ներառական աճի վրա 57 տոկոս է: Որակյալ մասնագիտական կրթությունը ևս էական նշանակություն ունի բարձր հմտությունների կիրառման տեսանկյունից: Կրթության արդյունքում ձեռք բերված հմտությունների, հետևապես նաև ներառական աճի վրա ազդեցության տեսանկյունից մեր երկրի հիմնական բացը հմտությունների անհամապատասխանությունն է աշխատաշուկայի պահանջներին,

ինչն արտացոլված է Գլոբալ տաղանդի մրցունակության ինդեքսի հետևյալ ցուցանիշներում՝

- ✓ Միջնակարգ կրթությանը համապատասխանող հմտություններ՝ 40.2 տոկոս,
- ✓ Մասնագիտական կրթությանը համապատասխանող հմտություններ՝ 29.4 տոկոս,
- ✓ Կրթության համապատասխանությունը տնտեսությանը՝ 40.8 տոկոս[82]:

Այսպիսով թե՛ կայուն զարգացման ծրագրերում, թե՛ աղքատության հաղթահարման ռազմվարություններում, թե՛ ներառական աճի վերլուծություններում հանդիպում ենք այնպիսի կարևոր մի բաղադրիչի, ինչպիսին է կրթությունը: Կրթության դերի բարձրացման, կրթական համակարգի արդիականացման ու կրթության որակի բարելավման շնորհիվ ուղղակիորեն հնարավոր է բարձրացնել բնակչության կենսամակարդակն ու ճեղքել այնպիսի արատավոր երևույթի շղթան, ինչպիսին է աղքատությունը:

---

[82] Տե՛ս The Global Talent Competitiveness Index 2019,Entrepreneurial Talent and Global Competitiveness,p. 94, URL:http://www.iberglobal.com/files/2019-1/GTCI-2019-Report.pdf

## *2.3 Հայաստանցիների կողմից կրթությունից բավարարվածության, կրթություն-բարեկեցություն կապի գնահատումը, կրթությունից աշխատաշուկա անցնելու դժվարությունները. (սեփական սոցիոլոգիական հարցման արդյունքները)*

Այսպիսով անմիջականորեն երևում է կրթության և բարեկեցիկ կյանքի ուղղակի կապը, և այս հետազոտությամբ պարզ է դառնում, թե որքան մեծ է մեր ստացած կրթության դերը մեր կյանքի որակի և բարեկեցության մակարդակի վրա: Կրթություն-բարեկեցություն կապը գտնելու համար կարևոր է նաև կատարել հետազոտություն, որոնք հետագայում հիմք կդառնան կրթության ոլորտի պլանավորման, կրթություն-աշխատաշուկա կապի, կրթության կազմակերպման գործում: Անցկացվել է սոցիալական հարցում՝ բնակչության շրջանում՝ առցանց տարբերակով: Հարցմանը մասնակցել են ավելի քան 300 քաղաքացիներ(թեզի շրջանակներում դիտարկվող հարցերը տե՛ս Հավելված N 1): Հարցման ընթացքում մեր հետազոտության նպատակն էր համարվում իրականացնել մեր հանրապետությունում կրթության արդյունավետության գնահատում, ինչպես նաև պարզել, թե որքանո՞վ է կրթության դերը գնահատվում մեր հասարակության շրջանում: Հարցվածների մեծամասնությունը կազմել են երիտասարդները՝ 18-30 տարեկան անձիք, թե՛ գյուղական, թե՛ քաղաքային համայնքներից:

Մեր գնահատման հիմնական օբյեկտը/թիրախը համարվում է կրթությունը՝ երիտասարդության նկատմամբ հատուկ շեշտադրությամբ՝ հասկանալու, թե որքանո՞վ է օգնում մերօրյա կրթությունը երիտասարդներին գտնել աշխատանք՝ սեփական մասնագիտությամբ ու լինել մրցունակ աշխատաշուկայում: Գրագիտության համաթիվը Հայաստանում համարվում է բարձր՝ 99.4 տոկոս[83]: Եվ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից կրթությունը, ինչպես վերը նշել ենք, հռչակված է որպես երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահպանման և վերարտադրման նախապայման: Նշենք, որ Հայաստանի բնակչությունը համարվում

---

[83] Տե՛ս The World Bank, Literacy rate, adult total (% of people ages 15 and above) - Armenia, URL:https://data.worldbank.org/indicator/SE.ADT.LITR.ZS?locations=AM

է կրթված, ի դեպ, կանայք փոքր-ինչ ավելի կրթված են, քան տղամարդիկ: Այնուամենայնիվ, կա ինտեգրվածության ու հասանելիության հետընթաց Հայաստանում: Նշենք նաև, որ 2018թ.-ին կրթության համար նախատեսված պետական ֆինանսավորումը նվազել է (վերջին տվյալները վերաբերվում են 2018թ.-ին, 2019 թվականի տարեկան հաշվետվությունը դեռ ամփոփման փուլում է և պետք է հաստատվի Ազգային ժողովի կողմից), այն կազմել է շուրջ 121.6 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի շուրջ 2.2%, ինչը բավական ցածր ցուցանիշ է համեմատած ԵՄ երկրներում կրթության վրա կատարվող ծախսերի հետ, որոնք կազմում են ՀՆԱ-ի 7-10%[84]:

Հարցվածների մեծամասնությունը ունեցել է բարձրագույն կրթություն, մնացյալ հատվածը միջնակարգ:[85] Հատկանշական է այն, որ հարցվածներից ոչ մեկ չի նշել կրթություն չունեմ, ինչը ևս մեկ անգամ խոսում է այն մասին, որ ՀՀ բնակչության ճնշող մեծամասնությունը գրագետ է:

**Դիագրամ 1. Նշեք Ձեր կրթություն:**




Հարցվածների 86%-ը նշել է, որ աշխատում է, իսկ 14%-ը՝ չի աշխատում:[86]

---

[84] Տե՛ս OECD,Country Note,Sweden,URL:http://www.oecd.org/education/Sweden-EAG2014-Country-Note.pdf
[85] Տե՛ս Դիագրամ 1.
[86] Տե՛ս Դիագրամ 2.

**Դիագրամ 2. Աշխատու՞մ եք:**




Այն հարցին, թե որքա՞ն է կազմում հարցվածների աշխատավարձը 45.4%-ը նշել է 68-200 հզ հհ դրամ, 36.9%-ը 200 հզ հհ դրամ և ավելի, իսկ 17.7%-ը մինչև 68 հզ հհ դրամ:[87]

**Դիագրամ 3. Նշեք Ձեր ամսական աշխատավարձի չափը:**




Ընդ որում այն հարցին, թե արդյո՞ք հարցվածներին բավարարում է իրենց աշխատավարձը 53.6%-ը նշել է մասամբ, 33.8%-ը՝ ոչ, չի բավարարում և միայն 12.6%-ն է նշել՝ այո, լիովին:

[87] Տե՛ս Դիագրամ 3.

**Դիագրամ 4. Ձեր աշխատավարձը Ձեզ բավարարում է:**




Փաստորեն հարցվածների չնչին տոկոսին է բավարարում իր աշխատավարձը, և հարց է ծագում, թե մնացյալ մասը, որքանո՞վ է մոտիվացված իր աշխատանքի մեջ:[88] Մասնագիտությամբ աշխատելու վերաբերյալ հարցին գրեթե կեսը պատասխանել է ոչ՝ մոտ 47.8%:[89] Այսինքն այստեղ ունենք գրեթե միմյանց հավասար հարաբերակցություն: Հարց է ծագում. մարդիկ իրենք են որոշում չաշխատել իրենց մասնագիտությամբ, թե բախվում են խնդիրների արդեն աշխատաշուկայում:

**Դիագրամ 5. Արդյո՞ք աշխատում եք Ձեր մասնագիտությամբ:**




[88] Տե՛ս Դիագրամ 4.
[89] Տե՛ս Դիագրամ 5.

Այդ իսկ պատճառով ձևակերպվել է հետևյալ հարցը. «Որքանո՞վ եք Ձեր մասնագիտությամբ աշխատանք փնտրելիս բախվել դժվարությունների՝ մասնագիտության պահանջվածությամբ պայմանավորված»: 45.5%-ը նշել է, որ բավականին դժվար է եղել: Իսկ 48.3%-ը նշել է, որ չի բախվել:[90] Բավական մեծ ցուցանիշ է մասնագիտությամբ աշխատանք փնտրելու և չգտնելու առումով, քանի որ անձը որոշակի ժամանակահատվածում ծախսում է նյութական միջոցներ, ստանում կրթություն, և հետագայում այդ միջոցների ծախսումը չի համարվում արդարացված:

**Դիագրամ 6. Որքանո՞վ եք Ձեր մասնագիտությամբ աշխատանք փնտրելիս բախվել դժվարությունների՝ մասնագիտության պահանջվածությամբ պայմանավորված:**




Սրան համապատասխան առաջադրվել է հետևյալ հարցը՝ «Արդյո՞ք Ձեր կատարած ներդրումները կրթություն ստանալիս՝ այսօր արդարացված եք համարում»: Լիովին արդարացված են համարել մասնակիցների միայն 31%-ը: 57%-ը արդարացված է համարել միայն մասամբ: Իսկ 12%-ը ընդհանրապես չի համարել արդարացված:[91] Մեր գնահատմամբ, սա մեծ թիվ է: Եվ իսկապես այսօր խնդիր կա մեր կրթական համակարգում՝ կապված կրթություն-աշխատաշուկա համապատասխանության մեջ:

---

[90] Տե՛ս Դիագրամ 6.
[91] Տե՛ս Դիագրամ 7.

**Դիագրամ 7. Արդյո՞ք Ձեր կատարած ներդրումները կրթություն ստանալիս՝ այսօր արդարացված եք համարում:**




Կատարվել է այսպիսի հարցադրում. «Արդյո՞ք կարծում եք, որ առանց կրթության կարող եք մրցունակ լինել շուկայում»՝ 75.1%-ը պատասխանել է ոչ, իսկ 20.8%-ը՝ այո:[92]

**Դիագրամ 8.Արդյո՞ք կարծում եք, որ առանց կրթության կարող եք մրցունակ լինել շուկայում:**




Եղել են նաև հարցվածների կողմից ավելացված պատասխաններ.

✓ Կան մասնագիտություններ, որոնց պարագայում հնարավոր չէ

---

[92] Տե՛ս Դիագրամ 8.

- ✓ Կախված մասնագիտությունից և հմտություններից
- ✓ Դա մի փոքր հարաբերական է, հնարավոր է կրթությունից զատ լինեն այլ հատկություններ, որոնք մարդուն շուկայում կդարձնեն էլ ավելի մրցունակ
- ✓ Բիզնեսում այո
- ✓ Արհեստով այո
- ✓ Եթե ինքնուս կարող եք տիրապետել ինչ որ մի մասնագիտության այո իհարկե բացառությամբ բժշկության
- ✓ Մասնավոր բիզնեսի դեպքում՝ հնարավոր է:

Ուսումնասիրելով հարցվածների պատասխանները՝ ևս մեկ անգամ հասկանում ենք, որ մեր հասարակությունը կրթություն ասելով հասկանում է միայն բարձրագույն կրթությունը, և քիչ է տեղեկացված միջին մասնագիտական կրթության ու առհասարակ ոչ ֆորմալ կրթության մասին: Ուստի կա անհրաժեշտություն բարձրացնել հասարակությունում տեղեկացվածությունը ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ: Այն հարցին, թե արդյո՞ք կարծում եք, որ ավելի լավ կրթության ու ավելի բարձր կրթական մակարդակ ունենալու դեպքում ավելի շատ եկամուտներ կունենայիք՝ 60.8%-ը պատասխանել է այո, վստահ եմ: 35.8%-ը պատասխանել է՝ ոչ, չեմ կարծում:[93] Հարցվածները տվել են նաև իրենց պատասխանները, որոնցից կառանձնացնենք հետևյալը. «եկամուտը ոչ միշտ է կապված կրթության հետ» և «ունեմ մագիստրոսի կրթական աստիճան, ստացել եմ լավ և արդյունավետ կրթություն: Կրթության ոլորտում աշխատելով՝ չես կարող լավ եկամուտ, որքան էլ լավ գիտելիքներ ունենաս»: Այս պատասխաններից պարզ է դառնում, որ մեր հանրապետությունը խնդիր ունի մեծացնելու գիտությամբ զբաղվողներին տրվող աշխատավարձերը, որպեսզի մարդիկ մոտիվացվեն զբաղվելու գիտակրթական գործունեությամբ և երկրի զարգացմամբ: Ինչպես նաև պետք է բարձրացվի նրանց դերն ու հեղինակությունը հասարակությունում, քանի որ մեր երկրում կա կարծիք, որ գիտակրթական գործունեությամբ զբաղվող մարդիկ հիմնականում ստանում են ցածր

[93] Տե՛ս Դիագրամ 9.

աշխատավարձ և ունեն առավել քիչ հնարավորություններ բարեկեցիկ կյանքի համար:

**Դիագրամ 9. Արդյո՞ք կարծում եք, որ ավելի լավ կրթության ու ավելի բարձր կրթական մակարդակ ունենալու դեպքում ավելի շատ եկամուտներ կունենայիք:**




Կարևոր մի հարցադրում ևս կատարվել է: «Որքանո՞վ է մեր երկրում հասարակությունը կարևորում կրթությունը»: Քանզի միջազգային փորձը ցույց է տալիս, որ գիտելիքահեն հասարակությունը պետության առաջընթացի ու զարգացման գրավականն է: Հարցվածների 83,9%-ը շատ է կարևորում կրթությունը, 14,4%-ը բավականին կարևորում է, իսկ 1,7%-ը չի կարևորում կրթությունը:[94]

**Դիագրամ 10. Որքանո՞վ եք կարևորում կրթությունը:**




[94] Տե՛ս Դիագրամ 10.

# ԳԼՈՒԽ 3. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ

## 3.1 Կրթական համակարգի վերլուծությունը սոցիալական զարգացման համատեքստում

Առաջին երկու գլուխներում արդենիսկ ներկայացրինք կրթության դերը, կրթության ընձեռած հնարավորություններն ու կրթության հեռանկարները: Խոսեցինք նաև այնպիսի բարդ ու բացասական երևույթի մասին, ինչպիսին է աղքատությունը: Աղքատությունը ավելին է, քան ուղղակի դրամական կարիքը: Լինել աղքատ նշանակում է զրկված լինել այնպիսի կարևորագույն կենսապայմաններից, ինչպիսիք են սնունդը, կրթությունը, բնակարանային պայմանները և այլն: Ինչպես տեսանք աշխարհում մեծ է աղքատությունից տառապող երեխաների թիվը: Ուստի լինելով աղքատ՝ երեխաները կորցնում են ոչ միայն իրենց ներկա կյանքի որակը, այլ նաև հետագայում իրենց ներուժը զարգացնելու կարողությունը:

Լավ կրթությունը իրենից ենթադրում է լավ աշխատանք՝ բարձր վարձատրություն, լավ առողջություն և երկար կյանք[95]: Այսինքն կրթությունը բերում է կյանքի որակի բարելավման, ինչը իր հերթին ապահովում է անձի բարեկեցությունը: Իսկ կրթության ծախողումը՝ երկարաժամկետ հեռանկարում, առաջ է բերում սոցիալական և ֆինանսական շատ ավելի բարձր ծախսեր՝ պետության համար[96]: Այս մտքի էությունը կայանում է նրանում, որ նրանք, ովքեր չունեն սոցիալապես կամ տնտեսապես ներառվելու կարողություններ և հմտություններ՝ հետագայում ավելի թանկ են արժենում առողջապահական, զբաղվածության, երեխաների խնամքի և սոցիալական ծառայությունների համակարգերին: Ուստի յուրաքանչյուր պետություն պետք է գիտակցի կրթության կարևորությունը՝ այդպիսով փորձելով նվազեցնել աղքատությունն ու զարկ տալ ներառական աճին:

[95]Տե՛ս Public Papers of the Presidents of the United States,Federal Register Division, National Archives and Records Service, General Services Administration, 2002, p.140
[96]Տե՛ս Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, «Կրթության իրավունքի հասանելիության և հավասարության հիմնախնդիրները ՀՀ հանրակրթության ոլորտում», 2017 թ., էջ 3,URL: http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ_Equity_MainData_PPT.pdf

Ի վերջո մեր հետազոտությամբ փորձենք պարզել աղքատությունն է վատ կրթության պատճառ դառնում, թե՞ վատ կրթությունն է բերում աղքատության:

Աղքատությունը ծնունդն է կաշառակերության, հալածանքների ու վատ կրթության: Ուստի ուշադրությունը սևեռելով հենց կրթություն գործոնի վրա փորձենք գտնել կրթություն և աղքատություն երևույթների պատճառահետևանքային կապը: Նախևառաջ պետք է նշել, որ կրթությունը ուղիղ կապի մեջ է բնակչության բարեկեցության ու «կյանքի որակ» հասկացության հետ: Կրթությունը պետության կողմից մատուցվող պարտադիր ծառայություններից մեկն է, և ինչպես անդրադարձանք կրթության իրավունքը ամրագրված է Միացյալ ազգերի կազմակերպության կողմից: Մեր հանրապետությունում ևս երաշխավորվում է անձի կրթության իրավունքը՝ ընդ որում Սահմանադրությամբ: Կիրթ հասարակությունը պետության զարգացման ու առաջխաղացման հիմքն է: Յուրաքանչյուր անհատի կյանքի որակը որոշվում է որոշակի կենցաղային պայմանների ցուցիչների օգտագործմամբ, դրանք են՝ կրթություն, բժշկական ծառայություններ, աշխատուժ և համարժեք վարձատրություն, ժամանցի կազմակերպում, բնակարանային ապահովվածություն և այլն: Ի՞նչ ասել է կյանքի որակ: Կյանքի որակ արտահայտությունը առաջին անգամ օգտագործվել է տնտեսագետ Ջ.Կ. Գալբրայթի "The Affluent Society" աշխատության մեջ: Նրա ծնունդը կապված է հասարակության զարգացման սկզբունքների վերաարժեքավորման հետ. կյանքի պայմանների քանակական գնահատումը, որը ամփոփվում էր «կյանքի մակարդակ» հասկացության մեջ՝ բավարար չէր. ուստի գիտական շրջանառության մեջ մտավ «կյանքի որակ» հասկացությունը[97]: Մինչև այժմ էլ այն միանշանակ չի մեկնաբանվում, առկա են կյանքի որակի բազմատարբերակային բնորոշումներ: Ընդհանրացնելով դրանք կարելի է հանգել հետևյալ բնորոշմանը՝ կյանքի որակը մարդկանց ինքնապահպանման, ինքնազարգացման, ինքնաարտահայտման, ինքնահաստատման և ինքնակազմակերպման, պահանջմունքների բավարարման որակական մակարդակը, գործունեության բովանդակությունը, որակական որոշակիությունն արտահայտող

[97]Տե՛ս William V. D'Antonio,M. Sasaki, Y. Yonebayashi, Ecology,Society, & The Quality of Social Life,Transaction Publishers,New Brunswick(USA) ans London(UK),1994,p.43

հասկացություն է: Իսկ անձի ինքնազարգացման, ինքնապահպանման, ինքնաարտահայտման ու ինքնահաստատման հիմքում ընկած գործոններից մեկն է կրթությունը: Կյանքի որակի ընկալումն ու գնահատումը կախված են բազմաթիվ գործոններից՝ կապված թե՛ անձի սոցիալական կարգավիճակի, թե նրա սպասելիքների, և թե՛ հասարակության այն մշակութային բնութագրերի հետ, որում նա ապրում է: Կրթության կարևորությունը հասարակության բարեկեցության գործում չի կարող թերագնահատվել: Կրթությունը կարող է լինել ընտանիքների և համայնքների աղքատության ցիկլից դուրս բերելու համար անհրաժեշտ կատալիզատորը[98]: Գիտելիքները սերունդներին հնարավորություն են տալիս երազելու ավելի լավ ապագայի և լիարժեք կրթություն իրականացնելու մասին, ինչը նրանց տալիս է անհրաժեշտ վստահություն ապագայի հանդեպ: Այստեղ նույնպես կարևորվում է շարունակական կրթության գործոնը, քանի որ երբ մեծահասակները սովորում են, նրանք լավագույն օրինակն են դառնում իրենց սերունդների համար, ովքեր ևս ցանկանում են սովորել: Իր բոլոր ձևերով կրթությունը առանցքային է աղքատության շղթան ճեղքելու համար: Երկարաժամկետ առումով աղքատության վերարտադրության լուրջ սպառնալիք են պարունակում անկումային երևույթները սոցիալական ոլորտում մասնավորապես կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում: Այս ասպարեզում նման միտումների առկայությունն ու խորացումն անդրադառնում է սերունդների վրա և խոչընդոտում տնտեսության հեռանկարային զարգացումը: Ինչպես ցույց է տվել համաշխարհային փորձը, աղքատության ճիրաններից ազատվելու ամենաարդյունավետ միջոցը ժամանակի պահանջներին համապատասխանող կրթությունն է[99]: Սակայն անցումային երկրների (որոնցից մեկն էլ համարվում է մեր երկիրը) պարադոքսներից մեկն էլ հենց վերոնշյալ կրթության համար անհրաժեշտ թե՛ հանրային, թե՛ մասնավոր միջոցների սղությունն է: Պետական միջոցների սղությունը, ինչպես նաև բնակչության սոցիալական ծանր վիճակը բացասաբար են անդրադառնում կրթական համակարգի զարգացման ու հասարակության կրթության

[98]Տե՛ս ChildFund International,Poverty and Education, URL:https://www.childfund.org/poverty-and-education/
[99]Տե՛ս Մանասյան Հ., Աբգարյան Ռ. «Գիտակրթական և մշակութային քաղաքականության դերը աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում», Եր.,ՄԻԺԻ-ի հրատարակություն, 2002թ.,էջեր 7-8

սահմանադրորեն պաշտպանված իրավունքի վրա: Այս ամենն էլ իր հերթին անդրադառնում է բնակչության բարեկեցության վրա, քանի որ աշխարհի երկրների փորձն ու բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթական մակարդակն անմիջականորեն կապված է բարեկեցության հետ[100]: Կրթությունը դիտարկենք առողջության ու բարեկեցության տեսանկյունից: Այս առումով պետք է նշել, որ կրթությունը բարելավում է սննդի անվտանգությունն ու նվազեցնում է թերսնուցումը: Երբ մարդիկ սովորում են գյուղատնտեսության նրբությունները, ինչպես նաև հողագործության տեխնիկայի մասին, նրանք ձեռք են բերում հմտություններ աճեցնելու մշակաբույսեր, բանջարեղեններ, որոնք մի կողմից ապահովում են առողջ սնունդ բնակչության համար, մյուս կողմից եկամուտներ գյուղատնտեսությամբ զբաղվողների համար: Զարգացող երկրներում հիվանդության տարածումը հաճախ սրվում է նրանից, որ հանրային գիտելիքների պակաս կա այն մասին, թե ինչպես է այն փոխանցվում: 2014 և 2015 թվականներին Արևմտյան Աֆրիկայի երիտասարդական խմբերը օգնեցին տարածել խոսքը Էբոլա վիրուսի կանխարգելման մասին: Այլ օրինակներ ևս կան՝ կապված Զիկա վիրուսի, ՄԻԱՎ-ի և վերջերս աշխարհը բռնկած Կորոնավիրուսի մասին: Սկսած 2019 թվականի վերջից մինչ հետազոտության իրականացման պահը աշխարհը բռնկել է Թագավարակ (Կորոնավիրուս) կոչվող վարակիչ հիվանդությունը: Այսօր Առողջապահության Համաշխարհային կազմակերպությունը (World Health Organization) և վարակակիր երկրների առողջապահական կազմակերպությունները ակտիվորեն օգտագործում են մեդիա դաշտերը՝ մարդկանց փոխանցելու վարակի կանխարգելման գործողություններն ու իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները: Պատկերացրեք այս գործընթացը մի երկրում, որտեղ կա ցածր կրթամակարդակ, մարդիկ տառաճանաչ չեն և չեն կարողանում օգտվել համակարգչային հմտություններից: Այն, որ մեր հանրապետությունում գրագիտության մակարդակը բարձր է և վարակների կանխարգելմանը միտված միջոցառումները հասանելի են բնակչության մեծամասնությանը, այն դեռ մեզ չի ազատում այնպիսի խնդրից, ինչպիսին է ֆունկցիոնալ անգրագիտությունը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանմամբ ֆունկցիոնալ առումով

[100]Տե՛ս Մանասյան Հ., Աբգարյան Ռ., նույն տեղում, էջ 11

մարդը համարվում է անգրագետ, եթե չի կարողանում մասնակից լինել բոլոր այն գործողություններին, որոնք իր խմբի կամ համայնքի արդյունավետ գործունեության համար գրագիտություն են պահանջում, և կտան նրան հնարավորություն կարդալու, գրելու և հաշվելու հմտություններն օգտագործել հանուն իր և համայնքի զարգացման[101]: Այս պարագայում մեր բնակչության համար խնդիր է այն, որ բնակչության մի ստվար զանգված հակված է վստահելու և ընդունելու ցանկացած տեղեկատվության, որը հայտնվում է համացանցում: Մեզ մոտ դեռ շատ մարդիկ չեն տիրապետում վստահելի աղբյուրներից օգտվելու մշակույթին, ինչը իր հերթին հանգեցնում է անցանկալի հետևանքների: Փաստորեն ևս մեկ անգամ պարզ դարձավ հանրային առողջության ու կրթության միջև առկա կապը: Նույնիսկ ոչ արտակարգ իրավիճակներում կարևոր է կրթությունը հիվանդությունների տարածման կանխարգելման վերաբերյալ: Դեռևս 2011թ.-ին Չայլդ Ֆանդը նախաձեռնել էր ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (United States Agency for International Development) կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ օգնելու քենիացի ընտանիքներին՝ ՄԻԱՎ-ից դուրս ապագա կառուցել կրթության միջոցով, ինչը հանգեցրել է ավելի առողջ երեխաների լույս աշխարհ գալուն և առողջ ընտանիքների ձևավորմանը: Այնպես, որ հիմնավորված է այն մոտեցումը, որ կրթությունը մարդկանց պահում է առողջ[102]: Օգտվելով հետազոտություններից ուսումնասիրենք կրթություն-աղքատություն կապը՝ հատկապես երեխաների շրջանում: Աղքատության հետևանքները երեխաների վրա լայնածավալ են և կարող են հանգեցնել ամբողջ կյանքում պայքարի, հատկապես այն դեպքում, երբ նրանք չեն ստանում լիարժեք կրթություն: Աղքատությունն ու կրթությունը անքաժանելիորեն կապված են, քանի որ աղքատության մեջ ապրող մարդիկ կարող են դադարեցնել դպրոց գնալ, որպեսզի կարողանան աշխատել, ինչը նրանց թողնում է առանց շատ դեպքերում անգամ գրագիտության և թվանշանային հմտությունների, որոնք անհրաժեշտ են իրենց կյանքում հաջողությունների հասնելու համար: Աղքատության մեջ ապրող և կրթություն չստացած սերունդների երեխաներն էլ տարիներ անց մեծամասամբ կանգնում են այս խնդրի առջև՝ քիչ եկամուտներ, քիչ

[101]Տե՛ս UNESCO,Functional literacy,Definition,URL:http://uis.unesco.org/node/334638
[102]Տե՛ս ChildFund International, Helping Kenyan Families Build a Future Beyond HIV, URL:https://www.childfund.org/Content/NewsDetail/2147487936/

տարբերակներ: Շատ երկրներում դպրոցը անվճար է, սակայն անհրաժեշտ է գումար համազգեստի, գրքերի, տրանսպորտի լրացուցիչ ծախսերի համար: Այս խնդրին բախվում են հատկապես գյուղական վայրերում, որտեղ աշակերտները կարող են ժամից ավելի գնալ դպրոց հանրային ավտոբուսով: Մեր հանրապետությունում ևս առկա է այս խնդիրը: Սահմանադրությամբ ամրագրված է յուրաքանչյուրի կրթության իրավունքը, իսկ «Կրթության մասին» ՀՀ օրենքով միջնակարգ կրթության անվճարությունը ու պարտադիրությունը, սակայն շատ հաճախ աղքատ տնային տնտեսությունների երեխաները հայտնվում են այնպիսի իրավիճակում, երբ չունեն միջոցներ վճարելու գրքերի և լրացուցիչ ծախսերի համար: Այս հանգամանքները խաթարում են երեխաների՝ դասապրոցեսին ամբողջությամբ ինտեգրմանը:

Կրթությունն ունի էական նշանակություն իրավունքների պաշտպանության պայքարում՝ հատկապես երեխաների իրավունքների պաշտպանության՝ սովորեցնելով երեխաներին, թե ինչ կարող են և ինչ պետք է ակնկալեն մեծահասակներից, իսկ մեծահասակներին էլ ցույց տալով՝ իրենց երեխաների իրավունքները հարգելու առավելությունները[103]:

Այսօր աշխարհը պայքարում է գենդերային հավասարության և կանանց իրավունքների պաշտպանության համար: ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից հինգերորդը վերաբերվում է դրան և վերնագրված է «Գենդերային հավասարություն.զորացնել բոլոր կանանց և աղջիկներին»: Այսօր կանայք և աղջիկները կազմում են աշխարհի բնակչության կեսը, հ ետևաբար նաև՝ դրա ներուժի կեսը: Սակայն ներկայումս գենդերային անհավասարությունը գոյություն ունի ամենուրեք և արգելակում է սոցիալական առաջընթացը: Գենդերային անհամամասնության առումով աղջիկները նաև բախվում են վաղ ամուսնությունների խնդրին: Վաղ ամուսնանալն ազդում է նաև աղջիկների կրթության վրա: Զարգացող երկրների մոտ մեկ երրորդը տարրական կրթությունում չի հասել գենդերային համամասնության: Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ կանանց և աղջիկների զորացումը կարևորագույն նշանակություն ունի տնտեսական աճի ընդլայնման և սոցիալական զարգացման խթանման հարցում: Կանանց աշխատուժի լիարժեք մասնակցությունը

[103] Տե՛ս Value Education And Education For Human Rights, V.C. Pandey, press 2005, p. 152

կբարձրացնի ազգային աճի մակարդակը, շատ դեպքերում՝ երկնիշ տոկոսային կետերով[104]: Կանանց և աղջիկներին վերարտադրողական առողջապահության և ամուսնության վերաբերյալ նրանց իրավունքների ուսուցումը նրանց հնարավորություն է տալիս որոշումներ կայացնել իրենց կյանքի վերաբերյալ: Վաղ ամուսնությունը և հղիությունը դադարեցնում են կրթությունը կարճ ժամանակահատվածում և հաճախ հանգեցնում են տկար երեխաների, ինչպես նաև ընտանեկան բռնության: Երբ աղջիկներն ավելի երկար են մնում դպրոցում, նրանք ավելի քիչ հավանական է, որ ամուսնանան մինչև 18 տարեկանը և վաղ երեխաներ ունենան, և առավել հավանական է, որ դպրոցը ավարտելուց հետո վարձատրվող աշխատանք կգտնեն: Յուրաքանչյուր տարի վաղ տարիքում ամուսնանում է մոտ 39, 000 անչափահաս աղջիկ, ոմանք՝ 8 կամ 9 տարեկան: Համայնքային կրթությունը բոլորին օգնում է հասկանալ այս պրակտիկայի վնասը: Չայլդ Ֆանդն այսօր գենդերային հարցերով աշխատում է զարգացող երկրների բազմաթիվ աղջիկների և կանանց հետ՝ մոտեցնելով նրանց կրթության ու առողջապահության ոլորտին՝ հնարավորություն ընձեռելով նրանց դառնալու առողջ ու անկախ անհատներ[105]: Այսօր բազմաթիվ կանայք հասել են հաջողությունների բազում ոլորտներում՝ սկսած քաղաքականությունից ընդհուպ մինչև տեղեկատվական տեխնոլոգիաներ, այսպիսով ևս մեկ քայլ մոտենալով գենդերային հավասարությանը: Մեր հանրապետությունում ևս գենդերային հավասարության հարցում ունենք ամրագրված հաջողություններ: Մեր երկրում ևս կրթությունը նպաստում է հայ կանանց հաջողություններին ու առաջխաղացմանը: Հայ կանայք ունենում են հաջողություններ կարիերայում՝ չշեղվելով ավանդույթներից ու պահպանելով հայ կնոջ առաքելությունների իրականացումը տանը՝ որպես ընտանիքի առանցքային մաս: Այնուամենայնիվ, Հայաստանում դեռ հասարակական և քաղաքական կյանքում կնոջ դերն ավելի ցածր է, քան տղամարդունը, ի տարբերություն ընտանիքի, որտեղ կինն ունի առանցքային դեր:

[104]Տե՛ս United Nations,Sustainable Development Goals,Goal 5: Achieve gender equality and empower all women and girls,URL:https://www.un.org/sustainabledevelopment/gender-equality/
[105]Տե՛ս ChildFund International, The Health Impact of Gender Inequality, URL:https://www.childfund.org/Content/NewsDetail/2147489157/

Այսպիսով, վերլուծելով կրթության կարևորությունը սոցիալական կոնտեքստում՝ երևան եկավ կրթության ու առողջության, կրթության ու բարեկեցության, կրթության ու գենդերային հավասարության միջև առկա կապը: Գենդերային հավասարությունը, առողջության պահպանումն ու մարդկանց բարեկեցության ապահովումն այսօր համաշխարհային հասարակության առջև ծառացած խնդիրներ են, որոնց լուծման գործում մեծ է կրթության դերը:

Այս հատվածում ցանկանում ենք վերլուծել Ֆինլանդիայի կրթական համակարգն ու դրա առավելությունները, քանի որ ինչպես հայտնի է Ֆինլանդիայի կրթական համակարգն աշխարհում համարվում է լավագույններից մեկը, եթե ոչ լավագույնը: Ֆինլանդիան բնակչության գրագիտության մակարդակով գրավում է աշխարհում առաջին տեղը: Ֆինլանդիան ամբողջ աշխարհին հայտնի է Յան Սիբելիուսով (ֆինն կոմպոզիտոր, ջութակահար և դիրիժոր), ֆիննական տանգոյով, «Նոկիա» բջջային հեռախոսներով, «Միջազգային ուսանողների գնահատման ծրագրի» (այսուհետ՝ PISA)-ի ստուգատեսում հաջողություններով: Եվ այս հաջողությունները , արդարև, քրտնաջան աշխատանքի արդյունք են: 1960-70-ական թվականներին ֆիննական հասարակությունը ենթարկվեց կառուցվածքային վերափոխումների՝ դառնալով Հյուսիսեվրոպական բարեկեցության պետություն (Nordic Model-հայտնի է նաև Շվեդական մոդել, Հյուսիսեվրոպական սոցիալ-դեմոկրատիա տարբերակները)[106]: Եվ որպես բարեկեցության առանցքային բաղադրիչ միանշանակ դիտվում էր կրթությունը: Պետք է նշել, որ Ֆինլանդիան տնտեսական բարգավաճում ապրեց, որը շարունակվեց մինչև 1980-ականները, սակայն դրան հաջորդեց տնտեսական խորը անկումը, որն ավելին էր, քան 1930-ականների անկումը: Էլեկտրոնիկայի արդյունաբերության, հատկապես «Նոկիա» բջջային հեռախոսային արդյունաբերության հաջողությունները հնարավոր դարձրին բարեկեցության պետության ֆինանսավորումը, չնայած կտրուկ կրճատումներով և վերակառուցման գործընթացներով: 1990-ականներից սկսած մրցակցային այս մոդելը մրցության մեջ մտավ բարեկեցության պետական մոդելի հետ, և այս մրցակցությունը սկսեց ազդել կրթության վրա: Հավասարության և

[106]Տե՛ս Richard R. Verdugo, "Educational Reform in Europe: History, Culture, and Ideology, printed in the USA, Information age publishing 2014, pages 1-3

մասնակցության վրա հիմնված դպրոցական համակարգ, ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր և մեծ հարգանք ու ուշադրություն՝ ուղղված ուսուցիչներին: Սրանք այն առանցքային տարրերն են, որոնք դարձնում են ֆիննական կրթական համակարգը լավագույնն աշխարհում: Վերջին հիսուն տարիների ընթացքում Ֆինլանդիան անցել է բավական ծանր փործությունների միջով և ցանկացած մարտահրավերների արդյունավետ դիմակայումը տեղի է ունեցել հավասար կրթական համակարգի և դպրոցներում բարձրակարգ դասավանդման միջոցով: Ֆինլանդիայի հաջողությունը ինչպես PISA-ում, այնպես էլ շատ այլ ստուգատեսերում միջազգային հետաքրքրություն է առաջացրել ֆիննական դպրոցների և ուսուցիչների կրթության վերաբերյալ: Նշենք, որ վերջերս կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ֆինլանդիան աշխարհի ամենաերջանիկ երկրներից է, քանի որ այստեղ առկա է օդի նվազագույն աղտոտվածություն և կոռուպցիայի ցածր մակարդակ[107]: Եվ ի վերջո ի՞նչն է դարձնում ֆիննական կրթական համակարգը այսքան յուրահատուկ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ Ֆինլանդիան հիմնականում ագրարային հասարակություն էր, և բնակչությունը հիմնականում ապրում էր գյուղական վայրերում: Այնուամենայնիվ, հետպատերազմյան շրջանում երկրում նկատվեց էական փոփոխություններ ինչպես տնտեսության, այնպես էլ բնակչության մեջ: Ֆինլանդիայի բնակչության աճող թվաքանակին զուգահեռ՝ կար պահանջ ավելի լավ կրթական համակարգի՝ ընդ որում բոլոր երեխաների համար մատչելի, անկախ նրանց սոցիալ-տնտեսական ֆոնից կամ որտեղ նրանք ապրել են: 1968-ին խորհրդարանը ընդունեց օրենք՝ կրթության համակարգը բարեփոխելու համար: Յոթից տասնվեց տարեկան երեխաների համար նախատեսված անվճար դպրոցներին փոխարինեցին քերականական և քաղաքացիական դպրոցների երկաստիճան համակարգը: Սկզբնապես, դպրոցական համակարգը վերահսկվում էր կենտրոնական իշխանությունների կողմից, մինչև տեղական ինքնակառավարման մարմիններին և

[107]Տե՛ս Faculty of Educational Sciences/News/Kirsti Lonka: Education lif–ted Fin–land out of poverty, but we need to keep de–vel–op–ing to re–main at the cut–ting edge,URL:https://www.helsinki.fi/en/news/education-news/kirsti-lonka-education-lifted-finland-out-of-poverty-but-we-need-to-keep-developing-to-remain-at-the-cutting-edgegclid=EAIaIQobChMI6oOAti_6AIVzLTtCh0jrgI5EAAYASAAEgITZPD_BwE

ուսուցիչներին լիազորությունների վերջնական փոխանցումը: Բարեփոխումների արդյունքները պարզ են. Ֆինլանդիայում կրթության ստանդարտներն աճել են, նվազել է կրթական անհավասարությունը, և Ֆինլանդիան ունի մրցունակ տնտեսություն՝ հիմնվելով իր կրթված, հմուտ աշխատուժի վրա: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ֆինլանդիան կանգնեց մեծ փոփոխությունների առջև՝ աճող բնակչություն և փոփոխվող տնտեսություն: Հետպատերազմյան տարիներին արագորեն աճում էր Ֆինլանդիայի բնակչությունը, ծննդյան թիվը 1946-1949թթ.-ին տարեկան հասնում էր ավելի քան հարյուր հազարի: Համեմատության համար նշենք, որ 1935-1939թթ.-ին տարեկան ծնունդների թիվը տատանվում էր 69հզ-ից մինչև 78հզ: Գյուղատնտեսությամբ զբաղվող հասարակությունը միանգամից հաջողություններ գրանցեց արդյունաբերության մեջ, ինչպես նաև մեծ էին հաջողությունները փայտի վերամշակումներից մինչև մետաղական արդյունաբերություն: Ավանդաբար տնտեսության մեջ գերակշռում էր փայտամշակող արդյունաբերությունը: Պատերազմից անմիջապես հետո, սակայն, մետաղական արդյունաբերությունը դարձավ գերիշխող շարժիչը: Աճող բնակչությունը, զուգակցվելով ավելի ուժեղ տնտեսության հետ, հանգեցրեց այն ծնողների թվաքանակի ավելացմանը, որոնք ձգտում են բարձրորակ կրթության իրենց երեխաների համար: Դպրոցները լցվեցին սովորողների աննախադեպ թվաքանակով և ընդամենը 15 տարում գրանցվեց սովորողների ավելի քան տասն անգամ աճ: Եթե 1955թ.-ին նրանց թիվը 34 հազար էր, 1970թ.-ին այն դարձավ 324 հազար:Ավելի քան երբևէ, ծնողները ցանկանում էին «բարելավված և ավելի բազմակողմանի հիմնական կրթություն» իրենց երեխաների համար: Թե՛ ուսանողների թվաքանակի աճը, թե՛ կրթության հասանելիության և գիտելիքների ձեռքբերման անհավասարությունները հանգեցրին լուրջ բարեփոխումների անհրաժեշտության: Անհրաժեշտ էր որակյալ կրթություն ապահովել բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական ծագումից կամ այն հանգամանքից՝ որտեղ էին նրանք ապրում[108]:

---

[108]Տե՛ս Centre for Public Impact, A BCG foundation, Education reform in Finland and the comprehensive school system, URL:https://www.centreforpublicimpact.org/case-study/education-policy-in-finland/

Ֆինլանդիայի կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները երկար տարիների քննարկման և ուսումնասիրությունների արդյունք էին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երեք բարեփոխումների հանձնաժողովները հիմք դրեցին հետագա բարեփոխումների համար: 1968 թվականին Խորհրդարանը ընդունեց օրենք՝ վերացնել կրթության երկաստիճան համակարգը, և հիմք դնել նոր՝ կենտրոնականորեն կառավարվող, համապարփակ դպրոցական համակարգին: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին հաջորդող տասնամյակում Ֆինլանդիայի խորհրդարանը ստեղծեց երեք անընդմեջ բարեփոխումների հանձնաժողովներ, որոնցից յուրաքանչյուրը նպատակ ուներ ստեղծել կրթական համակարգ, որը կապահովի հավասար կրթական հնարավորություններ բոլոր ֆինլանդացիների համար: Նոր համակարգը ներդրվեց աստիճանաբար ՝ սկսած 1972թ.-ից՝ Հյուսիսային Ֆինլանդիայից, որը բարեփոխումների պահանջն ամենաշատը զգացող մասն էր և հասավ երկրի մնացած հատվածներին մինչև 1977թ.-ը: Նոր համակարգը մաթեմատիկայի և օտար լեզուների երեք ակադեմիական մակարդակ առաջարկեց՝ հիմնական, միջին և առաջադեմ: Այս բարեփոխումները բերեցին կրթական մի նոր մշակույթի, որը մի կողմից բնութագրվում էր կրթական իշխանությունների և դպրոցների միջև վստահությամբ, մյուս կողմից տեղական վերահսկողությամբ, արհեստավարժությամբ ու ինքնավարությամբ: Այնուամենայնիվ, 2004թ.-ին ուժեղ պետական միջամտություն եղավ, երբ ներդրվեց նոր հիմնական ուսումնական ծրագիր, որը «ամրապնդեց նոր պետական վերահսկողություն՝ նեղացնելով քաղաքապետարանների և դպրոցների լիցենզիան՝ իրենց համապատասխան ուսումնական պլանները պլանավորելու հարցում»:

Հանրակրթության բարեփոխումների հաջողությունը ակնհայտ էր հետագա ուսանողական գերազանց գործունեության և ազգային կրթական արդյունքներից: Այս արդյունքները կարող են վերագրվել մի շարք գործոնների՝ ներառյալ ուսանողների կարիքները բավարարելու համար ուսումնական պլան մշակելու և իրականացման գործում տեղական իշխանությունների և ուսուցիչների դերը, բոլորի որակյալ կրթությունը ապահովելու համար: 1980-ական և 1990-ական թթ.-ին հանրակրթական համակարգում կրթություն ստացած անձինք առավել գրագիտորեն էին գործում, քան

նրանք, ովքեր սովորել էին 1960-ականներին և 1970-ականներին՝ երկաստիճան համակարգում: 2000-ականների սկզբին ֆինլանդացի ուսանողները սկսեցին առանձնահատուկ լավ գնահատականներ ձեռք բերել միջազգային ստուգատեսերում, ինչպիսիք PISA-ն, որը գնահատում է՝ որքանո՞վ են 15-ամյա ուսանողները պարտադիր ուսման ավարտին մոտ, ձեռք են բերել արդյոք հիմնական գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են ժամանակակից հասարակություններում լիարժեք մասնակցության համար: 2000, 2003, 2006 և 2009 թվականներին Ֆինլանդիան գրավեց մաթեմատիկական և գիտական գրագիտության և ընթերցանության գրեթե բոլոր հիմնական դափնիները: Չնայած 2012թ.-ից ի վեր մաթեմատիկական գրագիտության մեջ իր դիրքի փոքր անկում է նկատվել, Ֆինլանդիան դեռևս ընդհանուր առմամբ բարձր տեղ է զբաղեցնում:

1970թ.-ին ֆինլանդացիների միայն 30%-ը ուներ միջնակարգ կրթություն, մինչդեռ 2010թ.-ին այդ թիվը հասավ 80%-ի: Բարեփոխումների դրդապատճառները երկկողմանի էին:Մի կողմից կրթական որակի և մատչելիության բարելավումը կրթական աշխատուժ կստեղծեր ավելի ու ավելի արդյունաբերականացված, հետագրարային տնտեսության համար, մյուս կողմից, պահանջարկ կար ավելի մեծ սոցիալական հավասարության, քանի որ Ֆինլանդիայի հասարակությունը ենթարկվեց զգալի փոփոխությունների: Կրթության համակարգում անհավասարության նվազեցման նպատակը իր գագաթնակետին հասավ 1980-ականների վերջին: Բոլոր ֆինլանդացի երեխաները ստացան նույն հիմնական կրթությունը, և առկա էին իրական հնարավորություններ բոլոր ուսանողների առաջադիմության համար: Բարեփոխումների հաջողության ևս մեկ կարևոր կողմ էր իրավասությունների վերջնական փոխանցումը տեղական ինքնակառավարման մարմիններին և դպրոցներին:

Չնայած ոչ մի հետազոտություն չի հաստատել դրական հարաբերակցությունը կրթության բարելավման և տնտեսական աճի միջև, կարծես թե դրանք փոխշահավետ են եղել: 2001-2004թթ.-ի ընթացքում Ֆինլանդիան «Համաշխարհային տնտեսական ֆորում»-ի կողմից երեք անգամ դասվել է աշխարհում որպես առավել մրցունակ տնտեսություն, որը ենթադրում է, որ երկիրը առանձնանում է մարդկային կապիտալի

շատ բարձր մակարդակով, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների համատարած օգտագործմամբ, և կրթական ու գիտահետազոտական հաստատություններով, որոնք ձևավորվել են են նորարարության և առավելագույն հետազոտության և զարգացման խթանման համար: Ի վերջո, դասավանդումը Ֆինլանդիայում խիստ հարգված կարիերայի ընտրություն է, և այս ոլորտում ավելի շատ դիմորդներ կան, քան մնացյալ մասնագիտություններում: Ֆինլանդիայի ուսուցիչների միության նախագահ Օլի Լուուկկայնենը նշում է, որ այն փաստը, որ ուսուցիչներն ունեն այդքան անկախություն և վայելում են լիակատար հարգանք ժողովրդի կողմից, մեծ ազդեցություն է թողնում երիտասարդների վրա, քանզի իրենք են ընտրում՝ որ ծրագրին են ցանկանում հետևել համալսարաններում: Երբ նրանք ընտրում են ուսուցչի մասնագիտությունը, նրանք լավ գիտեն, որ տիրապետելու են մի մասնագության, որը հանրության շրջանում վայելում է մեծ հարգանք և, որ ունենալու են կարևոր դեր երկրի ապագայի ձևավորման գործում:

Նշենք մի քանի առավելություններ ևս, որոնք բնորոշ են Ֆինլանդիայի կրթական համակարգին: Ֆինլանդիայի կրթության համակարգի հաջողությունը միշտ հիմնվել է համաշխարհային մակարդակի հետազոտությունների վրա հիմնված ուսուցիչների վերապատրաստման վրա: Ամբողջ աշխարհում Հելսինկիի համալսարանը դասվում է աշխարհի լավագույն 100 համալսարանների շարքում: Եթե անգլալեզու համալսարանները բացառենք, ապա Հելսինկիի համալսարանը կդասվի առաջատարների շարքում: Ֆինլանդիայում հատկապես կարևորվում են դասավանդման կարողությունները: Ֆինլանդիայի դպրոցը կառուցվել է հավասարության և աշխարհի լավագույն ուսուցիչների ամուր հիմքի վրա: Եվ սրանք այն արժեքներն են, որոնք Ֆինլանդիան ցանկանում է պահպանել առաջիկայում: Ավանդաբար ուսուցիչները դասավանդում էին միայն դպրոցական առարկաներ: Այսօր, այնուամենայնիվ, կատարվում է անցում ավանդական մեթոդից դեպի ապագա, որտեղ ուսուցիչները ավելի ու ավելի կսովորեցնեն ուսուցման համապարփակ հմտություններ: Արդյունքում, հետագա ուսումը տեղի կունենա բազմաբնույթ առարկայական ծրագրերում, որոնք կենտրոնանում են բարդ երևույթների վրա և զարգացնում սովորողների խնդրի լուծման և մտածողության հմտություններ: Նոր տեխնոլոգիաները

նույնպես ինտեգրվելու են դասավանդման գործընթացում, և ուսումնական միջավայրերը ավելի ու ավելի փոփոխվելու են՝ նպաստելու ուսմանը: Մեր հիշողությունը չի գործում այն սկաների պես, որը տալիս է տրված տեղեկատվությունը: Փոխարենը, մենք եզրակացություններ ենք անում և իմաստներ ենք ստեղծում մեր սովորածի համար: Դպրոցներն արդեն հենվում են նյարդահոգեբանական և կրթական հոգեբանության այս և շատ այլ բացահայտումների վրա: Գործնականում սա նշանակում է, որ դպրոցները սկսել են առաջարկել բազմադիսցիպլինար ուսուցման հայեցակարգեր և համալսարանները՝ բազմաբնույթ աստիճանի ծրագրեր:

Ֆինների պատմությունը, որը բարձրանում է ցնցոտիներից մինչև հարստություն, օրինակ է շատ երկրների համար: Հատկապես աֆրիկյան երկրների, որոնք տառապում են աղքատությունից ու ցածր կրթամակարդակից և ասիական երկրների, որոնց երեխաները գրեթե երկու անգամ ավելի ժամանակ են անցկացնում, քան ֆինն երեխաները, որպեսզի փորձեն հաղթել Ֆինլանդիային վարկանշային աղյուսակումներում[109]: Շատ երկրներում դասավանդման մեթոդների հիմնված են անգիր անելու երևույթի վրա, ինչը բնավ ընդունված չէ ֆիննական կրթական համակարգում: Ֆիննական դպրոցները ձգտում են ակտիվացնել և ներգրավել երեխաներին: Այնուամենայնիվ, համաշխարհային գագաթում իրենց տեղը պահելը, ըստ ֆիների՝ հնարավոր է միայն շարունակական զարգացման, հետազոտությունների և ուսուցման միջոցով: Եվ ֆիննական կառավարությունը ձգտում է ավելի շատ ներդրումներ անել կրթության և առաջատար հետազոտությունների մեջ:

Այսպիսով, ի մի բերելով Ֆինլանդիայի կրթական համակարգը նշենք, որ Ֆինլանդիան բարձր զարգացման հասած արդյունաբերական երկիր է: Համախառն ներքին արդյունքի ամենամյա աճը կազմում է 5, 1%[110]:Կրթական հատկացումները կազմում են համախառն ներքին արդյունքի 6-7 %-ը[111], իսկ պետբյուջեի՝ 10 %-ը: Նույն

---

[109]Տե՛ս Faculty of Educational Sciences/News/Kirsti Lonka: Education lif–ted Fin–land out of poverty, but we need to keep de–vel–op–ing to re–main at the cut–ting edge,URL:https://www.helsinki.fi/en/news/education-news/kirsti-lonka-education-lifted-finland-out-of-poverty-but-we-need-to-keep-developing-to-remain-at-the-cutting-edgegclid=EAIaIQobChMI6oOAti_6AIVzLTtCh0jrgI5EAAYASAAEgITZPD_BwE

[110]Տե՛ս The World Bank,GDP growth (annual %)-Finland,URL:https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=FI&view=chart

[111]Տե՛ս The World Bank,Government expenditure on education, total (% of GDP) - Sri Lanka, Finland,URL:https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?locations=LK-FI

ցուցանիշն ունի նաև հարևան երկիր Շվեդիան և այս երկրները նշված պարամետրերով գրավում են աշխարհում առաջին տեղերը: Ֆինլանդիան իր կրթության վրա ծախսում է տարեկան 5, 5մլրդ եվրո: Մեկ դպրոցականի համար հատկացված տարեկան ծախսերը կազմում են 5, 5հզ եվրո, ուսումնարանների և համալսարանների ուսանողների համար համապատասխանաբար 5, 8 և 8, 1հզ եվրո:

Ֆինլանդիայի կրթական համակարգը հետևյալն է. նախնական նախապատրաստական կրթություն, որի հնարավորությունը տրված է յուրաքանչյուր երեխայի: Այն սկսվում է պարտադիր կրթությունից մեկ տարի շուտ, այսինքն՝ այն ուսումնական տարում, երբ երեխան կդառնա 6 տարեկան: Նախնական պատրաստական կրթությունը կարող է ստանալ դպրոցում կամ մանկապարտեզում, կամ՝ այլ հարմար տեղում: Դա որոշում է քաղաքապետարանը: Պարտադիր կրթությունը երեխան սկսում է այն տարում, երբ լրանում է նրա յոթ տարեկանը և շարունակվում է մինչև 16-17 տարեկան: Պետությունը երաշխավորում է անվճար հիմնական կրթություն: Անվճարության սկբունքը ներառում է՝ կրթություն, դասագրքեր, տետրեր, հիմնական գրասենյակային պարագաներ, դպրոցում սնունդը նույնպես անվճար է[112]: Ուսումնական տարին սկսում է օգոստոսից: 3-րդ դասարանից սկսվում է անգլերենի ուսուցումը, 4-րդ դասարանում երեխան ընտրում է ֆակուլտատիվ օտար լեզու (ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն): 7-րդ դասարանում սկսվում է պարտադիր շվեդերենի ուսուցումը: Այնուհետև սկսվում է կրթության երկրորդ մակարդակը և հիմնական կրթություն ստանալուց հետո սովորողները կանգնում են ընտրության առաջ՝ ստանալ մասնագիտական կրթություն, որից հետո սկսել աշխատել մասնագիտությամբ, թե կրթությունը շարունակել լիցեյում: Բարձրագույն կրթության պարագայում գոյություն ունի երկու զուգահեռ համակարգեր՝ համալսարաններ և պոլիտեխնիկական ինստիտուտներ: Վերջիններս տալիս են պրակտիկ գիտելիք և հմտություններ՝ տարբեր ոլորտներում աշխատելու համար: Պոլիտեխնիկական ինստիտուտների ամենատարածված մասնագիտություններն են տեխնոլոգիաներն և տրանսպորտը, բիզնեսը և կառավարումը, առողջապահությունը և սոցիալական

[112]Տե՛ս Ю. С. Дерябин,Педагогика Школьная ,Финляндия - Один Из Мировых Лидеров В Образовании, С. 76

ոլորտը, մշակույթը, գբոսաշրջությունը, սպասարկման ոլորտը, կրթությունը, բնական ռեսուրսները: Ուսուցումը տևում է 3.5-4 տարի և ներառում է պարտադիր պրակտիկա:

Վերջում ներկայացնենք այն սկզբունքները, որոնք բնորոշ են ֆիննական կրթական համակարգին: Դրանցից առաջինը հավասարության սկզբունքն է, ինչը իր մեջ ներառում է դպրոցների հավասարությունը, բոլոր ուսումնական առարկաների հավասարությունը, ծնողների և աշակերտների հավասարության սկզբունքը, ուսուցիչների հավասարությունը: Ֆինլանդիայում չկան ո՛չ էլիտար, ո՛չ թույլ դպրոցներ:Այս կրթական համակարգում չի խրախուսվում մի առարկայի խորացված ուսուցումը մյուսի հաշվին: Այստեղ չեն մտածում, որ մաթեմատիկան ավելի կարևոր առարկա է, քան, ասենք, նկարչությունը: Թե ովքե՞ր են երեխայի ծնողները, կամ ի՞նչ սոցիալական խավի են պատկանում նրանք, ուսուցիչներն իմանում են ամենավերջում՝ ըստ անհրաժեշտության: Ուսուցիչների հարցերը կամ տեղեկանքները ծնողների աշխատավայրի մասին խստիվ արգելված են: Ֆիններն աշակերտներին չեն տեսակավորում՝ ըստ ընդունակությունների կամ մասնագիտական նախապատվությունների: Չկան նաև, այսպես կոչված, «լավ» և «վատ» աշակերտներ: Խստիվ արգելված է աշակերտներին համեմատել միմյանց հետ: Այստեղ չկան սիրված կամ չսիրված ուսուցիչներ: Ուսուցիչները նույնպես հոգեկան կապվածություն չունեն իրենց դասարանի հետ, չեն առանձնացնում սիրելի և ոչ այնքան ընդունելի աշակերտներին: Համընդհանուր մոտեցումներից ցանկացած շեղում անխուսափելիորեն հասցնում է տվյալ ուսուցչի հետ պայմանագրի խզման: Հաջորդ սկզբունքը անվճարության սկզբունքն է: Բացի բուն ուսուցումից՝ անվճար են նաև ճաշերը, էքսկուրսիաները, թանգարանային և այլ արտադասարանական միջոցառումների հաճախումները, երեխաներին դպրոց բերող-տանող ավտոբուսը, դասագրքերը, գրենական պիտույքները, հաշվիչները և նույնիսկ նոթբուքերն ու պլանշետները: Որևէ պատճառով գումար հավաքել ծնողներից չի կարելի: Հաջորդ սկզբունքն է անհատական մոտեցման սկզբունքը: Յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է ուսուցման և զարգացման անհատական պլան: Դա վերաբերում է օգտագործվող դասագրքերի, վարժությունների բովանդակությանը, դասարանական և տնային աշխատանքների քանակին և դրանց հատկացված ժամանակին, ինչպես նաև

մատուցվող նյութին: Դասի ժամանակ միևնույն դասարանի աշակերտները կարող են կատարել տարբեր առաջադրանքներ: Եվ գնահատվում են նրանք նույնպես՝ ըստ իրենց ունակությունների:Կարևոր սկզբունքներ են նաև պրակտիկության, վստահության, կամավորության սկզբունքները: Ֆինններն ասում են. «Կամ մենք պատրաստում ենք կյանքի համար, կամ քննություն հանձնելու. մենք ընտրում ենք 1-ինը»: Դրա համար էլ ֆիննական դպրոցներում քննություններ չկան, իսկ ստուգողական աշխատանքներն ու ընթացիկ թեստերը թողնված են ուսուցչի հայեցողությանը[113]: Գոյություն ունի միայն 1 պարտադիր ստանդարտ թեստ, որն աշակերտները հանձնում են միջին հանրակրթական դպրոցն ավարտելուց հետո: Ընդ որում, դրա արդյունքներին ուսուցիչները կարևորություն չեն տալիս, արդյունքների համար ոչ մեկի առաջ հաշվետու չեն և աշակերտներին այդ քննությանը հատուկ չեն պատրաստում: Կա վստահություն առաջին հերթին ուսուցիչների և դպրոցում աշխատող այլ անձանց հանդեպ: Չկան ստուգումներ, մեթոդիստներ, սովորեցնողներին սովորեցնել սովորեցնող հանձնախմբեր կրթության վարչություններ և այլն: Երկրում գործում է միասնական կրթական ծրագիր, սակայն այն իրենից ներկայացնում է միայն ընդհանուր մոտեցումների փաթեթ, և յուրաքանչյուր մանկավարժ ուսուցման համար կիրառում է այն մեթոդը, որը հարմար է գտնում: Ինչը վերաբերում է կամավորության սկզբունքին, ապա դրա բովանդակությունը հետևյալն է. սովորում է նա, ով ուզում է սովորել: Ուսուցիչներն աշխատում են աշակերտի մեջ սովորելու նկատմամբ հետաքրքրություն սերմանել, սակայն, եթե չի հաջողվում, ապա անբավարար գնահատականներով չեն պատժում: Նրան ուղղորդում են պրակտիկ մասնագիտություն ստանալու: Եվ վերջին սկզբունքն է ինքնուրույնության սկզբունքը: Ֆինները կարծում են, որ դպրոցը երեխային պետք է սովորեցնի գլխավորը՝ ապագա ինքնուրույն, հաջողակ կյանքի ճանապարհը: Այդ պատճառով էլ այստեղ սովորեցնում են մտածել և ինքնուրույնաբար գիտելիքներ ստանալ: Նոր դասն ուսուցիչը չի բացատրում. ամեն ինչ հանգամանորեն արդեն բացատրված է դասագրքի մեջ: Ուսուցիչը սովորեցնում է՝ ինչպես օգտվել տեղեկատուից, տեքստից, համացանցից,

[113]Տե՛ս Big Think, 10 reasons why Finland's education system is the best, URL:https://bigthink.com/mike-colagrossi/no-standardized-tests-no-private-schools-no-stress-10-reasons-why-finlands-education-system-in-the-best-in-the-world

հաշվիչից և կրթական այլ միջոցներից: Ուսուցիչները չեն խառնվում աշակերտների միջանձնային կոնֆլիկտներին՝ նրանց թույլ տալով հմտանալ խնդիրներն ինքնուրույնաբար հարթելու գործում:

### *3.2 Կրթությունը՝ որպես անձի բարեկեցության մակարդակի բարձրացման գործիք*

Այսօր աշխարհը եկել է այն համոզման, որ տնտեսության զարգացման հիմքը մարդն է և իր հմտությունները: Հաջողության և հարստության սիմվոլները իհարկե միշտ չէ, որ համարվել են գիտելիքը և հմտությունները՝ ավելին եթե նայենք սրանից եռեսուն տարի առաջ, աշխարհի ամենահարուստ մարդիկ նավթային մագնատներն էին: Սակայն երբ հայացք գցենք այսօրվա աշխարհին կտեսնենք, որ հարուստ են նրանք, ովքեր գիտելիքի, գիտության, տեխնոլոգիաների վրա հիմնված գործունեությամբ են զբաղվում: Ի վերջո այսօր տնտեսության զարգացման հիմքը մարդն է, որը ունի գիտելիքներ, որը ունի հմտություններ, տիրապետում է տեխնոլոգիաների: Եվ այս պրոցեսը սկսվում է նախակրթարանից ու շարունակվում դպրոցում, այնուհետ բուհերում, բայց չի ավարտվում անգամ բուհում, քանզի կրթությունը մի գործընթաց է, որը պետք է մարդուն ուղեկցի ամբողջ կյանքում: Հմտությունների մասին խոսելիս անդրադառնանք Դավոսի հետազոտությանը՝ կապված այն հմտությունների հետ, որոնք ժամանակակից աշխարհում անհրաժեշտ են մարդկային կապիտալի առաջընթացի համար: Դավոսի ֆորումը, որը հայտնի է նաև որպես Համաշխարհային տնտեսական համաժողով, անցկացվում է ամեն տարի Շվեյցարիայում ՝ քննարկելու և վերլուծելու միջազգային բնույթի հիմնական խնդիրները: Այս հանդիպմանը մասնակցում են աշխարհի ամենակարևոր առաջնորդները: Ներքևում ներկայացվում են այն տասը հիմնական հմտությունները, որոնք ըստ Դավոսի հետազոտությունների 2020 թվականին կպահանջվեն ընկերությունների կողմից: Այսպիսով ըստ հետազոտությունների՝ չորրորդ արդյունաբերական հեղափոխության մեջ զարգանալու համար պետք է տիրապետել հետևյալ հմտություններին՝

1. Խնդիրների համալիր լուծում
2. Քննադատական մտածողություն
3. Ստեղծարարություն

4. Մարդկային ռեսուրսների կառավարում
5. Փոխգործակցություն մյուսների հետ
6. Հուզական բանականութուն
7. Վերլուծություններ և որոշումների ընդունում
8. Մասնագիտական կողմնորոշում
9. Բանակցություններ
10. Փոփոխություններին ադապտացվելու ճկունություն:[114]

Դավոսի վարկանիշում գերակշռում են արդյունավետությանն առնչվող հմտությունները: Օրինակ՝ «վերլուծություն և որոշումների կայացում» կամ «բարդ խնդիրների լուծում»: Երկու հմտություններն էլ բարձր են գնահատվում մեր ամենօրյա աշխատանքում, քանի որ այսօր և վաղը բիզնեսի հիմնական կարիքներից մեկը որոշումների կայացման գործընթացների կատարելագործումն է: Դրանով իսկ կազմակերպությունները փորձում են նվազեցնել սթրեսը, բարձրացնել արտադրողականությունը և, ի դեպ, կրճատել աշխատողների ծանրաբեռնվածությունը, որպեսզի նրանք կարողանան կենտրոնանալ այն խնդիրների վրա, որոնք իրականում կարևոր են նպատակներին հասնելու համար: Այս տասը հմտությունները միմյանց բավականին փոխկապված են: Ավելին, սրանք միմյանց լրացնում են: Օրինակ՝ մարդկային ռեսուրսների կառավարումը, փոխգործակցությունը մյուսների հետ և մասնագիտական կողմնորոշումը փոխկապակցված հմտություններ են, որոնք օգնում են կատարելագործել ունակությունները՝ հասկանալու, վերլուծելու և ի վերջո ավելի լավ որոշումներ կայացնելու համար: Այս հմտությունների հիմքում ընկած է արդյունավետ որոշումների կայացումը, և բացատրելը մարդկանց՝ ինչու են դրանք նախընտրելի և կարևոր: Մինչ խնդրին լուծում տալը պետք է հասկանալ, թե որտեղից և ինչպես է առաջացել այդ խնդիրը: Հուզական բանականությունը հմտություն է, որը օգնում է թիմի անդամների հետ հարաբերությունները կարգավորել և լուծել հակասությունները: Ինչը վերաբերում է ստեղծարարությանը, այն հնարավորություն է տալիս քննարկել, վերլուծել ու առաջարկել այլընտրանքներ, լուծումներ ու ուրվագծել այն

[114]Տե՛ս 10 Top Soft Skills for 2020: What They Are and How To Train Them, URL:https://www.game-learn.com/top-soft-skills-2020-how-to-train-them/

ձեռքբերումները, որոնց հնարավոր է հասնել: Դավոսի ցանկում հայտնված հմտություններից բավականին կարևորվում է հարմարվողականությունը փոփոխություններին՝այսինքն լինել ճկուն ցանկացած փոփոխության հանդեպ: Ճկունությունը փոփոխությունների ադապտացման հարցում և քննադատական մտածողությունը հմտություններ են, որոնք կիրառվում են իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում են հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև հնարավորություն են տալիս իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները: Այս հմտությունները յուրաքանչյուր ընկերության ապագայի բանալին են, քանի որ հնարավորություն են տալիս ցանկացած փոփոխության հանգամանքներում հնարավորինս արդյունավետ որոշումներ կայացնել:

Որքանո՞վ են ՀՀ կրթական հաստատություններն ապահովում այս կարևորագույն հմտությունների ներդրումը յուրաքանչյուր անհատի մեջ: Այսօր ամենից կարևոր հմտություններից է համարվում քննադատական և վերլուծական մտածողությունը: ՀՀ կրթական համակարգը խնդիր ունի իր ուսումնական պլաններում ապահովել վերլուծությունների կարևորությունն ու ձևավորել իր ուսանողների շրջանում քննադատական մտածողություն: Պետք է մեծ ուշադրություն դարձվի ուսանողների կողմից կատարված հետազոտություններին, վերլուծություններին, մի շարք ծրագրերի և թրեյնինգների միջոցով զարգացվի նրանց մեջ գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններն ու հմտությունները, ապահովվի դիտողականություն: Իսկ որքանո՞վ են այսօր ՀՀ բուհերն ավարտած սաները պատրաստ որոշումների կայացման ու համալիր խնդիրների լուծման: Բացի տեսական մասից, որ այսօր դասավանդվում է մեր կրթական հաստատություններում մեծ կարևորություն պետք է տրվի անհատական մոտեցման սկզբունքի առկայությանը և յուրաքանյուր անձի համար պետք է ստեղծվեն ուսուցման ու զարգացման անհատական պլաններ: Մեր գնահատմամբ ՀՀ բուհերնն այսօր առավել ապահովում են կրթության տեսական մասն ու շատ ուսանողներ ավարտում են համալսարանն անգամ տարրական վերլուծական մտածողության բացակայությամբ:

Մեր երկրին բավական բնորոշ խնդիր է մասնագիտական կողմնորոշման հմտության բացակայությունը, քանզի շատ հաճախ հանդիպում ենք դեպքերի, երբ սովորողները ընտրում են մասնագիտություն, որով աշխատել հետագայում չեն ցանկանում, կամ որը չի համապատասխանում իրենց ունակություններին: Հայաստանում այս առումով ունենք բավական լուրջ խնդիրներ: Մեր երկրում շատ հաճախ ծնողները հաշվի չեն առնում երեխաների նախասիրություններն ու անձնային որակները, ինչպես նաև թյուր կարծիք ունեն միջին մասնագիտական կրթության մասին: Շատ հաճախ ծնողները մտածում են, որ կրթությունն ամփոփված է միայն բարձրագույն կրթություն հասկացության մեջ, և ցանկանում են, որ իրենց երեխաները անպայման ստանան բարձրագույն կրթություն ու աշխատեն որևէ գրասենյակում: Հենց այս պարագայում էլ ավարտելուց հետո անհատը չի կարողանում կողմնորոշվել, թե որտե՞ղ և ի՞նչ է ուզում աշխատել: Սա բաց է, որը բերում է գործազրկության և մարդկանց բարեկեցության անկման: Այս ամենի արդյունքում 2019թ.-ի դրությամբ աշխատանք փնտրողների թիվը կազմել է 82825 անձ, որը տարվա սկզբի համեմատ աճել է 1142-ով, իսկ գործազուրկների թիվը 2019թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 64128 անձ, որը տարվա սկզբի համեմատ աճել է 515-ով: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ շարունակում է բարձր մնալ գործազուրկ կանանց թիվը, որը կազմում է գործազուրկների ընդհանուր թվի 66, 6%-ը կամ 42716 անձ, ինչը տարվա սկզբի համեմատ նվազել է 431-ով: Ուշագրավ է այն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ կազմում են գործազուրկների միայն 3.9%-ը (2481 անձ)[115]:Այսինքն գործազուրկ է համարվում մեր երկրի աշխատունակ բնակչության մի ստվար զանգվածը, ինչը իհարկե բերում է սոցիալական անապահովության ու աղքատության մակարդակի բարձրացման: Այս առումով անհրաժեշտ է երկրում իրականացնել մի շարք ծրագրեր, որոնք կբարձրացնեն հասարակությունում կրթության ձևերի վերաբերյալ իրազեկվածությունը, կխթանեն ոչ ֆորմալ կրթության զարգացումը և կնպաստեն գործազրկության մակարդակի անկման: 21-րդ դարը հայտնի է իր աննախադեպ առաջընթացով, ուստի ՀՀ կրթական համակարգի առջև ծառացած է խնդիր

[115]Տե՛ս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Զբաղվածության ոլորտի վիճակագրություն»,URL:http://www.mlsa.am/?page_id=1430

պատրաստել կադրեր, որոնք յուրաքանչյուր իրավիճակում պատրաստ են ընդունել մաքսիմալ արդյունավետ որոշումներ: Աշխարհն այժմ գնում է պահանջված կարողությունների հետևից, այլ ոչ թե՝ պահանջված մասնագիտությունների, քանի որ այդ պահանջված մասնագիտությունները շատ արագ կարող են հնանալ: Մեզ մոտ տեղեկացվածության պակաս կա, մասնագիտական կողմնորոշվածության վերաբերյալ, և այն տրամադրել է պետք դեռ դպրոցից սկսած:

Այս հատվածում կվերլուծենք նաև Մարդկային զարգացման համաթիվը (Human Development Index): Մարդկային զարգացման համաթիվը(այսուհետ ՄԶՀ) ստեղծվել է շեշտադրելու այն հանգամանքը, որ մարդիկ և նրանց հնարավորությունները պետք է լինեն մարդկանց զարգացումը գնահատելու վերջնական չափանիշներ, և ոչ միայն երկրի տնտեսական աճը: Այս համաթիվը կարող է կասկածի տակ առնել նաև պետությունների ազգային քաղաքականության ընտրությունը, ուշադրությունը սևեռելով այն հանգամանքի վրա, թե ինչպես, երկրները, որոնք ունեն բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նույն մակարդակը, կարող են տարբերվել զարգացման արդյունքներով: Այս հակասությունները բերում են քննարկումների՝ կապված կառավարության կողմից իրականացվող քաղաքականության առաջնահերթությունների հետ: Մարդկային զարգացման համաթիվը չափում է մարդկանց զարգացման առաջնային հարթություններում նրանց միջին ձեռքբերումները: Այդ ցուցիչներն են՝ ապրել երկար և առողջ կյանք, լինել կրթված և բանիմաց, ունենալ կյանքի պատշաճ մակարդակ:




**Գծ.5 Մարդկային զարգացման համաթվի կառուցվածքը**

Ինչ է իրենից ներկայացնում մարդկային զարգացումը, և որն է մարդկային կապիտալի կարևորությունը: 1990թ.-ին Մարդկային զարգացման առաջին զեկույցը ներկայացրեց նոր մոտեցում մարդկային բարեկեցության զարգացման համար: Մարդկային զարգացումը կամ մարդկային զարգացման տեսությունը վերաբերում է մարդու կյանքի որակի բարելավմանը, այլ ոչ թե միայն այն տնտեսության զարգացմանը, որում մարդն ապրում է: Մարդկային զարգացումը կենտրոնանում է մարդկանց կյանքի բարելավման վրա, այլ ոչ թե ենթադրությունների, որ տնտեսական աճը ավտոմատ կերպով կբերի ավելի բարեկեցության բոլորի համար: Եկամուտների աճը դիտվում է որպես զարգացման միջոց[116]: Մարդկային զարգացումը մարդկանց ավելի շատ ազատություն է տալիս իրենց բարեկեցիկ կյանքն ապրելու համար: Իրականում այն նշանակում է զարգացնել մարդկանց կարողությունները և հնարավորություն տալ նրանց օգտագործել դրանք: Օրինակ աղջկան կրթության տալը կկառուցի նրա հմտությունները, բայց այն շատ քիչ օգտակար կլինի, եթե աշխատաշուկայում աղջկան մերժեն: Մարդու զարգացման համար անհրաժեշտ են երեք հիմքեր՝ ապրել երկար, առողջ ու ստեղծագործ կյանք, լինել կրթված, բանիմաց և ունենալ բարեկեցիկ կյանքի համար անհրաժեշտ ռեսուրսներ: Այլ չափազանց կարևոր հիմքեր ևս առկա են մարդկային զարգացումն ապահովելու համար: Երբ մարդկային զարգացման այս ասպեկտները նվաճված են, սրանք կյանքի այլ ոլորտներում առաջընթացի հնարավորություններ են բացում: Մարդկային զարգացումը, սկզբունքորեն, ավելի շատ ընտրության մասին է: Խոսքը գնում է մարդկանց հնարավորություններ ընձեռելու մասին, չպնդելով, որ նրանք դրանից օգտվեն: Ոչ ոք չի կարող երաշխավորել մարդկային երջանկությունը, և մարդիկ իրենք պետք է կայացնեն իրենց կյանքի որոշումներն ու ընտրությունները: Մարդկային զարգացման գործընթացը՝ մարդկային զարգացումը, պետք է գոնե մարդկանց համար անհատապես և հավաքականորեն ստեղծի միջավայր՝ զարգացնելու իրենց ամբողջ ներուժը, և ունենալու ողջամիտ հնարավորություն՝ բարեկեցիկ, արտադրողական և ստեղծագործական կյանք վարելու համար: Քանի որ միջազգային հանրությունը

[116]Տե՛ս United Nations Development Programme, Human Development Reports, About Human Development, URL:http://hdr.undp.org/en/humandev

շարժվում է 2030 թվականի օրակարգի իրագործման և դիտանցման ուղղությամբ, մարդկային զարգացման մոտեցումը մնում է օգտակար և արդյունավետ, զարգացնելու և իրագործելու 2030 թվականի օրակարգի նպատակները՝ բարելավելով մարդկանց բարեկեցությունը՝ կառուցելով արդար, կայուն ու հաստատուն մոլորակ:

Հայաստանը այս ինդեքսում զբաղեցնում է 81-րդ տեղը: 2018 թվականի դրությամբ Հայաստանի ցուցանիշը 0.760 է, և նախորդ տարիների համեմատությամբ առաջընթացի միտում է գրանցվում[117]: Մեր հարևանները այս սանդղակում համեմատաբար ավելի բարձր տեղեր են զբաղեցնում Հայաստանի համեմատությամբ՝ բացառությամբ Ադրբեջանի: Թուրքիան այս սանդղակում 2018 թվականի դրությամբ 59-րդն է՝ 0.807 գործակցով, Իրանը 65-րդ տեղում է իր 0.797 գործակցով, Վրաստանը 70-րդն է 0.786 գործակցով, իսկ Ադրբեջանը զիջում է իր դիրքերը Հայաստանին, այն սանդղակում 87-րդն է 0.754 գործակցով: Միաժամանակ ցածր ցուցանիշներ են գրանցել Չադը, որը սանդղակում 187-րդ է իր 0.401 գործակցով, Կոնգոն, որը 179-րդն է իր 0.459 գործակցով, Աֆղանստանը 170-րդն է իր 0.496 գործակցով, Եմենը 177-րդն է 0.463 գործակցով, իսկ Աֆրիկայի Կենտրոնական Հանրապետությունը 188-րդն է՝ 0.381 գործակցով: Լավագույն եռյակի երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Իռլանդիան՝ 0.942 գործակցով, 2-րդ հորիզոնականում Շվեյցարիան է՝ 0.946 գործակցով, իսկ առաջատարը Նորվեգիան է՝ 0.954 գործակցով, որը տարեցտարի բարելավում է իր վարկանիշը: Մի քանի երկրների տվյալներ ևս ներկայացնենք: Ֆինլանդիան այս սանդղակում զբաղեցնում է 12-րդը՝ Ֆինլանդիայի ցուցանիշը կազմում է 0.925, Ավստրալիան և Իսլանդիան ունեն նույն ցուցանիշը և կիսում են 6-րդ հորիզոնականը՝ 0.938 գործակցով, իսկ Գերմանիան և Չինաստանը կիսում են միևնույն ցուցանիշն արդեն 4-րդ հորիզոնականում՝ 0.939 գործակցով: Սինգապուրը սանդղակի 9-րդ հորիզոնականում է՝ 0.935 գործակցով: Երկրների տվյալները նշված են 1990 թվականից մինչև 2018 թվականը: Նշենք, որ 1990 թվականին Հայաստանի ցուցանիշը այս սանդղակում կազմել է 0.633: 1991 թվականից մինչև 1997 թվականը այս ցուցանիշը անկում է ապրել հասնելով մինչև 0.585-ի: Սկսած 1998 թվականից, երբ

[117]Տե՛ս Human Development Report 2019, Beyond income, beyond averages, beyond today:Inequalities in human development in the 21st century,Published for the United Nations Development Programme (UNDP), page 305

ցուցանիշը հասել է 0.637-ի, այն սկսել է աճ ապրել, 2006 թվականից հատելով 0.7-ի շեմը և 2018 թվականին հասնելով արդեն 0.760-ի: Մարդկային կապիտալի զարգացման ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունը պետք է ձգտի բարելավել իր ցուցանիշը այս սանդղակում՝ կրթության որակի ապահովման ու կրթական մակարդակի արդիականացման շնորհիվ:

Այսպիսով, աղքատությունը, սեռով, հաշմանդամությամբ, էթնիկ ծագումով պայմանավորված խտրականությունը կամ ուսման լեզուն և դպրոցի հեռավորությունը, ինչպես նաև վատ ենթակառուցվածքները այն խնդիրներից են, որ շարունակում են խոչընդոտել ամենաաղքատ երեխաներին որակյալ կրթություն ստանալ: Կրթության որևէ փուլում չներգրավվելը խթանում է աղքատության շարունակելիությունն ու հանդիսանում համաշխարհային կրթական ճգնաժամի հիմնական շարժիչը: Ի մի բերելով աղքատության և կրթության կապը նշենք, որ աղքատությունը խոչընդոտում է մարդկանց կրթություն ստանալուն: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուսումնասիրությունների ամբողջ աշխարհում ամենաաղքատ տնային տնտեսություններում ապրող դեռահաս աղջիկների յուրաքանչյուր 3-ից 1-ը երբևիցե դպրոց չի հաճախել: Կրթության որևէ փուլում չներգրավվելը խթանում է աղքատության շարունակելիությունն ու հանդիսանում համաշխարհային կրթական ճգնաժամի հիմնական շարժիչը[118]: Ուսումնասիրությունը, որ կոչվում է «Կրթական ճգնաժամի լուծումները. ամենաաղքատ երեխաների կրթության ֆինանսավորման սուր անհրաժեշտություն», անդրադառնում է կրթական ծախսերի բաշխման հիմնական անհամամասնություններին: Սահմանափակ և անարդար կերպով բաշխված ֆինանսավորումը դասարաններում մեծաթիվ աշակերտների, անբավարար պրոֆեսիոնալիզմ ունեցող ուսուցիչների, կրթական նյութերի պակասի և դպրոցների վատ ենթակառուցվածքների պատճառ է դառնում: Սա իր հերթին բացասաբար է անդրադառնում հաճախելիության, դպրոցներում ընդգրկվածության, ինչպես նաև՝ առաջադիմության վրա: ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրեն Հենրիետա Ֆորը իր զեկույցում մասնավորապես նշում է. «Աշխարհում ամենուրեք պետությունները

---

[118]Տե՛ս United NationsArmenia, URL:https://www.un.am/hy/news/933?fbclid=IwAR1ahNZ8iNUCK6r0UBxXdHhnFXzLAR1C3rTTg5pFZ_hJ4VOSegNbSs7VxRM

ձախողում են աջակցություն ցուցաբերել ամենաաղքատ երեխաներին, դրանով իսկ ձախողելով իրենք իրենց, քանի դեռ կրթական բնագավառում հանրային ծախսերը անհամամասնորեն ուղղվում են ամենահարուստ տնային տնտեսությունների երեխաներին, ամենաաղքատներն աղքատությունից դուրս գալու, անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու, մրցակցելու, այսօրվա աշխարհում հաջողության հասնելու և իրենց երկրների զարգացմանը նպաստելու շատ քիչ հնարավորություն ունեն»: 42 երկրներից հավաքագրված տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ամենահարուստ 20 տոկոս տնային տնտեսությունների երեխաների կրթական ծախսերին տրամադրվում է գրեթե կրկնակի ֆինանսավորում, քան ամենաաղքատ 20 տոկոս տնային տնտեսություններում ապրող երեխաներին: Բարբադոսը, Դանիան, Իռլանդիան, Նորվեգիան և Շվեդիան ուսումնասիրության մեջ ներառված այն եզակի երկրներից են, որ հավասարապես են բաշխում կրթական ֆինանսավորումը ամենահարուստ և ամենաաղքատ քվինտիլների միջև:

Հայաստանի Հանրապետության պարագայում այսօր խնդիր է զրոյից հինգ տարեկան երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում, ինչը կազմել է 33%. քաղաքներում՝ 38%, գյուղերում՝ 23%: Ինչ վերաբերում է Հայաստանում ծայրահեղ աղքատության մեջ ապրող երեխաներին, ապա մինչև վեց տարեկան ծայրահեղ աղքատության մեջ ապրող երեխաների 0%-ն է հաճախում նախադպրոցական հաստատություն՝ մանկապարտեզ կամ նման կենտրոն: Ծայրահեղ աղքատության մեջ ապրող երեխաների 11%-ը տարրական դպրոց, 48%-ը՝ ավագ դպրոց չի հաճախում, ավելին՝ նրանց 100%-ը կրթությունը չի շարունակում ԲՈՒՀ-ում: Բարձրագույն կրթական հաստատություններում սովորում են ոչ աղքատ ընտանիքներում ապրող երեխաների 39%-ը, աղքատ ընտանիքներում ապրող երեխաների՝ 26% և ծայրահեղ աղքատ ընտանիքների երեխաների 0%-ը[119]: Սրանք մտահոգիչ արդյունքներ են և ՀՀ կառավարության ջանքերը պետք է ուղղվեն աղքատության կրճատմանը, ծայրահեղ աղքատության վերացմանը, իսկ այսպիսի տնային տնտեսություններում ապրող երեխաների համար պետք է ստեղծվեն հնարավորություններ զարգացնելու իրենց ներուժը, լիարժեք ընդգրկվելու ուսումնական

[119]Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018թթ.», էջ 171

գործընթացին ու հետագայում, որպես կայուն ու կիրթ քաղաքացիներ՝ ճեղքելով աղքատության շղթան, բացելու նոր դռներ ու նոր հեռանկարներ Հայաստանի Հանրապետության զարգացման ու բարեկեցության համար:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կրթական համակարգի կատարելագործումը՝ որպես աղքատության հաղթահարման հիմնական գործոն» (ՀՀ օրինակով) մագիստրոսական թեզի թեմայի շրջանակներում՝ համաձայն առաջադրված նպատակների և խնդիրների, վեր են հանվել աղքատության հասկացության էությունը, աղքատության պատկերը և միտումները Հայաստանի Հանրապետությունում, աղքատության հաղթահարման բնագավառում միջազգային փորձը, կրթության էությունն ու կարևորությունը, Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը, ՀՀ կրթական համակարգի մարտահրավերները, առկա բացերն ու հեռանկարները: Ինչպես նաև ուսումնասիրվել է կրթության ազդեցությունը աղքատության հաղթահարման գործում ու կրթություն-աղքատություն պատճառահետևանքային կապը:

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը և անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները՝ եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Աղքատությունը բնորոշ է բոլոր հասարակություններին, և աղքատության հիմնախնդրի ընկալման ու սահմանման մեջ դեռևս գիտնականները չեն եկել ընդհանուր հայտարարի: Ընդհանուր առմամբ աղքատությունը կարող ենք բնորոշել որպես իրավիճակ, երբ մարդ որևէ պատճառով չի կարողանում հոգալ ու բարելավել իր կենսական կարիքները:
- Աղքատության բերող գործոնները զարգացող երկրներում հիմնականում ունեն ներքին և արտաքին բնույթ: Ներքին գործոնների մեջ առանձնացվում է կրթական գործոնը, որը անմիջականորեն կապված է աղքատության հետ ու դրա բացակայությունը համարվում է աղքատածին գործոն:
- Այսօր արդեն, աղքատության ժամանակակից սահմանումները աղքատությունը դիտում են որպես բազմաչափ երևույթ: Հայաստանում բազմաչափ աղքատության ձևավորման վրա ազդող կարևոր ցուցանիշներ են համարվում առողջապահության և կրթության բաղադրիչները:
- 2018թ.-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում աղքատության մակարդակը կազմել է 23.5%: Նախորդ տարվա դրությամբ նկատվում է աղքատության մակարդակի նվազում: Նույնը նաև նկատվում է ծայրահեղ

աղքատության հարցում: ՀՀ կառավարությունը նպատակադրվել է մինչև 2023 թվականը էապես նվազեցնել աղքատությունն ու վերացնել ծայրահեղ աղքատությունը: Այս նպատակադրման իրատեսականությունը կառավարությունը տեսնում է բնակչության աղքատ խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջալերման, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացման մեջ:

•Ուսումնասիրելով Բանգլադեշի աղքատության հաղթահարման փորձը՝ երևան է գալիս այն, որ այս երկրում աղքատության հաղթահարման գործում մեծ է մարդկային կապիտալի զարգացման դերը: Այստեղ հետևողականորեն իրականացվում է վերապատրաստման ուսուցողական ծրագրերի ներդրում, ինչպես նաև երկրի 130 համալսարաններում հմտությունների խորացման մասնագիտացված լաբորատորիաների հիմնում:

•Հայաստանի Հանրապետությունում սահմանադրորեն ամրագրված է յուրաքանչյուրի կրթության իրավունքը: Կրթական ոլորտը անչափ կարևորվում է, թե՛ որպես երկրի կայուն զարգացման, թե՛ մարդկային կապիտալի զարգացման, թե՛ ազգի վերարտադրության նախապայմաններից մեկը: Իսկ մարդկային զարգացման քաղաքականության հիմնական գերակայություններից են կրթության որակի, մատչելիության, արդյունավետության ապահովումը:

•Կրթությունը մեծ դեր ունի լուծելու և կայունացնելու պետության ռազմավարական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կայուն տնտեսական զարգացումը, աղքատության հաղթահարումը, ազգային անվտանգությունը, ժողովրդավարական հասարակության ստեղծումը, և գիտելիքահեն հասարակության կայացումը:

•Ուսումնասիրելով մեր կողմից կատարված սոցիալական հարցման արդյունքները՝ ի հայտ է գալիս մեր հանրապետությունում միջին մասնագիտական կրթության և բարձրագույն կրթության ու աշխատաշուկայի միջև առկա տարանջատվածությունը:

•Մեր հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը գրագետ է: Մեր հարցման արդյունքներում հարցվածների մեծամասնությունը կարևորում էր կրթությունը՝ որպես բարեկեցության նվաճման գործոն:

•Անկախ միջնակարգ կրթության անվճարությանը՝ շատ աղքատ տնային տնտեսությունների երեխաների համար շարունակում է դժվար մնալ կրթությանը լիովին ինտեգրվածությունը՝ լրացուցիչ ծախսերի պատճառով:

•Մեր հանրապետությունում առկա է ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ ինֆորմացված լինելու պակաս: Բնակչության մի ստվար զանգված կրթություն ասելով հասկանում է միայն բարձրագույն կրթությունը:

•Մեր երկրում առկա է մասնագիտական կողմնորոշվածության բացը, ինչը բերում է մարդկանց սխալ մասնագիտական ընտրությանն ու հետագայում աշխատաշուկայում ոչ մրցունակ լինելուն:

Կրթական համակարգի կատարելագործման ուղղությամբ(որպես աղքատության հաղթահարման գործոն) ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները՝

- Հանրապետությունում բարձրացնել միջին մասնագիտական կրթության և բարձրագույն կրթության որակը և համապատասխանեցնել այն աշխատաշուկայի պահանջներին:
- Առաջարկում ենք ՀՀ կառավարությանը վերանայել կրթության ոլորտում իրականացվող ՀՀ պետբյուջեի ծախսերն ու դրանց ավելացմամբ դարձնել կրթությունը՝ հատկապես բարձրագույն կրթությունը, հասանելի ֆինանսական տեսանկյունից (հատկապես աղքատ տնային տնտեսությունների անձանց համար):
- Հանրակրթության ոլորտում առաջարկում ենք առարկաների շրջանակներում խթանել մասնագիտական կողմնորոշվածության զարգացմանը և յուրաքանչյուր առարկայի պարագայում շեշտել դրա կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ անձի հետագա զարգացման ու բարեկեցության գործում:

- Հանրակրթական ծրագրում կատարել փոփոխություններ և ներդրումներ, որի արդյունքում հանրակրթությունը հիմնված կլինի վստահության, պրակտիկության, հավասարության, ինքնուրույնության, կամավորության, անհատական մոտեցման սկզբունքների հիման վրա:
- Առաջարկում ենք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին և բարձրագույն ուսումնական հաստատություններին մշակել արդյունավետ մեխանիզմներ՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո ստուգելու, թե որքա՞ն են հստակ չափելի ուսանողների հմտություններն ու վերլուծական կարողությունները:
- Առաջարկում ենք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին և բարձրագույն ուսումնական հաստատություններին ստեղծել գործատուների հետ փոխգործակցության շրջանակներ՝ կրթական կառուցվածքը կառուցելով գործատուների պահանջները հաշվի առնելով:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության «Ազգային անվտագության ռազմավարության» մեջ, մեր հանրապետության համար սպառնալիք է համարվում «ուղեղների արտահոսքը»՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը առաջարկում ենք նպաստել բարձր որակավորում ունեցող կադրերի թվաճին ու «ուղեղների ներհոսքին»:
- ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը առաջարկում ենք կրթական որակի բարձրացման միջոցով խթանել ուսանողների շարժունակությանն ու ՀՀ կրթական համակարգի գրավչությանը:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## Օրենքներ և այլ իրավական ակտեր


1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 06.12.2015 փոփոխություններով
2. Հայաստանի Հանրապետության «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՕ-18 օրենք, 07.11.1995թ.
3. Հայաստանի Հանրապետության կառավարության «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N 994-Ն որոշում, 08.08.2003թ.
4. Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին» ՀՕ-297 օրենքը,14.04.1999թ.
5. Հայաստանի Հանրապետության «Նախադպրոցական կրթության մասին» ՀՕ-236-Ն օրենք, 15.11.2005թ.
6. Հայաստանը Հանրապետության «Հանրակրթության մասին» ՀՕ-160-Ն օրենք, 10.07.2009թ.
7. Հայաստանի Հանրապետության ՀՕ-164-Ն օրենքը «Նախնական մասնագիտական(արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին»,08.07.2005թ.
8. Հայաստանի Հանրապետության ՀՕ-62-Ն օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», 14.12.2004թ.
9. Հայաստանի Հանրապետության ՀՕ-52 օրենքը «Լեզվի մասին», 30.03.1993թ.
10. Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը «Ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՆՀ-37-Ն, 07.02.2007
11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշում, Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր

12. «ՀՀ կառավարության ծրագիր»՝ հաստատված ՀՀ կառավարության 08.02.2019թ. №65-Ա որոշմամբ
13. Հավելված ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման, «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ծրագիր»,
14. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության հայեցակարգին հավանություն տալու մասին, 15.10.2009 N43
15. «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման եվ իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ եվ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման եվ ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշում

***Գրականություն***


16. Թադևոսյան Ա., «Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում»-Եր. 2018թ., 43 էջ:
17. ՅՈՒՆԻՍԵՖ, «Մանկական աղքատությունը Հայաստանում»,2016թ., 74 էջ:
18. Մանասյան Հ., Աբգարյան Ռ. «Գիտակրթական և մշակութային քաղաքականության դերը աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում», Եր. ՄԻԺԻ-ի հրատարակություն, 2002թ., 44 էջ:
19. Ջրբաշյան Տ., Մելիքյան Ն. «Ներդրումային քաղաքականության ուղղվածության հիմնահարցը աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում» Եր. ՄԻԺԻ-ի հրատարակություն, 36 էջ:
20. Տ.Աճեմօղլի, Ջ.Ա.Ռոբինսոն «Ինչու՞ են ձախողվում պետությունները»,Եր. «Անտարես», 2018թ., 687էջ:
21. Օրդյան Է., Մանուկյան Հ. «Աղքատության նվազեցման հիմնախնդիրները ՀՀ համայնքներում», Եր. ՄԻԺԻ-ի հրատարակություն, 2001թ., 40 էջ:
22. Медведев Д., Черчилль. Биография. Оратор. Историк. Публицист. Амбициозное начало 1874-1929, Москва 2016, С. 877

23. Радионова Л.А., Социология: Учебно-Методическое Пособие, ХАРЬКОВ, 2006, С. 123

24. Сычева В. С. Бедность и ее измерение // Социология: методология, методы, математическое моделирование, Москва 2002. С. 187

25. Colin Ernesto, "Indigenous Education through Dance and Ceremony": A Mexica Palimpsest: New York: Palgrave Macmillan: 2014, 251 p.

26. Global Multidimensional Poverty Index 2019, Illuminating Inequalities, Printed in the US, 2019, 26 p.

27. León-Portilla Miguel, "Aztec Thought and Culture: A Study of the Ancient Nahuatl Mind" Norman: University of Oklahoma Press: 1963, 272 p.

28. Human Development Report 2019, Beyond income, beyond averages, beyond today: Inequalities in human development in the 21st century, Published for the United Nations Development Programme (UNDP), 366 p.

29. Human Development Report 2019, Inequalities in Human Development in the 21st Century, Briefing note for countries on the 2019 Human Development Report, Armenia,10 p.

30. Public Papers of the Presidents of the United States, Federal Register Division, National Archives and Records Service, General Services Administration, 2002, 1095 p.

31. Ramon C. Cabag, "Nonformal Education", pub. at Quezon city, 1999, 220p.

32. Richard R. Verdugo, "Educational Reform in Europe: History, Culture, and Ideology, printed in the USA, Information age publishing 2014, 188p.

33. Sharon K. Vaughan, Poverty, Justice, and Western Political Thought, Lexington Books, 2009, 234 p.

34. The Global Talent Competitiveness Index 2019, Entrepreneurial Talent and Global Competitiveness, pp.324

35. The Inclusive Development Index 2018 Summary and Data Highlights, World Economic Forum, p. 25

36. UNICEF, The State of The World's Children 2016, A fair chance for every child, 184 p.
37. Value Education and Education for Human Rights, V.C. Pandey, press 2005, 312p.
38. World development report 2015, Mind, society, and behavior, Word bank group, Washington, 217 p.

***Վիճակագրական տեղեկագրեր և համացանցային աղբյուրներ***

39. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018թթ.», URL:file:///C:/Users/Admin/Downloads/poverty_2019_a_2%20(5).pdf
40. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2011թթ».,,URL: https://www.armstat.am/file/article/poverty_2012a_2.pdf:
41. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, URL:http://www.mlsa.am/?p=22979:
42. Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, «Կրթության իրավունքի հասանելիության և հավասարության հիմնախնդիները ՀՀ հանրակրթության ոլորտում», 2017 թ., էջ 3, URL:http://www.osf.am/wpcontent/uploads/2017/09/Educ_Equity_MainData_PPT.pdf:
43. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության ոլորտի վիճակագրություն», URL:http://www.mlsa.am/?page_id=1430
44. World Vision Armenia,Աղքատության փուլային հաղթահարում,URL:https://www.wvi.org/hy/publications/brochure/armenia/agkatowtyan-powlayin-hagtaharowm
45. Раунтри Б.С., Бедность: исследование городской жизни,URL: https://studopedia.org/3-85137.html
46. Ишмуратова В. Г. Содержание категории «бедность» в новейшей истории России. «Проблемы современной экономики». Санкт-Петербург, 2010г. С.

75,URL: https://cyberleninka.ru/article/n/soderzhanie-kategorii-bednost-v-noveyshey-istorii-rossii/viewer

47. Грехнев В. С., Философия и общество. Ценностные основания процессов образования и образованности людей в современном обществе, Выпуск №3(59)/2010,URL: https://www.socionauki.ru/journal/articles/128783/
48. Ю. С. Дерябин,Педагогика Школьная ,Финляндия - Один Из Мировых Лидеров В Образовании, №1193231451, URL:https://portalus.ru/modules/shkola/rus_readme.php?subaction=showfull&id=1193231451&archive=1195596940&start_from=&ucat=&
49. Macroeconomic Policy and Poverty Reduction, PRSP Sourcebook Chapter 6, April 2, 2001, URL:https://www.imf.org/external/np/prsp/source/2001/eng/chap6.pdf
50. The World Bank, Understanding Poverty, URL:https://www.worldbank.org/en/topic/poverty
51. What is Poverty? The Definitions of Poverty, URL:https://www.compassionuk.org/blogs/poverty-101-whaispoverty/fbclid=IwAR0KmBlINIXGTMAdZGRDV7gJo5Mr9goTX1VaPprFrzSkJnbslyXP9akpabs
52. United Nations Armenia, Sustainable Development Goals, URL:http://un.am/en/p/sustainabledevelopmentgoals
53. United Nations, Sustainable Development Goals, URL:https://www.un.org/sustainabledevelopment/sustainable-development-goals/
54. United Nations Armenia, Sustainable Development Goal 1.,End Poverty In All Its Forms Everywhere, URL:http://un.am/en/p/sustainable-development-goal-1
55. World Bank Blogs, Half of the world’s poor live in just 5 countries, URL:https://blogs.worldbank.org/opendata/half-world-s-poorlivejust5countriesfbclid=IwAR0CFsWZZecv70NKjeBqJljuiGuG8fEy5_q64BDfIQv4M1nbi6vgJ89orGU

56. Turning Promises into Action, Gender Equality in the 2030 Agenda For Sustainable Development, URL:https://www.undp.org/content/dam/argentina/Publications/G%c3%a9nero/PNUDArgent-LAC-FactSheet.pdf

57. Macroeconomic Policy and Poverty Reduction, PRSP Sourcebook Chapter 6, April 2, 2001, URL:https://www.imf.org/external/np/prsp/source/2001/eng/chap6.pdf

58. The World Bank, Understanding Poverty, URL:https://www.worldbank.org/en/topic/poverty

59. United Nations Armenia, Sustainable Development Goals, URL:http://un.am/en/p/sustainabledevelopmentgoals

60. United Nations, Sustainable Development Goals,URL:https://www.un.org/sustainabledevelopment/sustainable-development-goals/

61. United Nations Armenia, Sustainable Development Goal 1, End Poverty In All Its Forms Everywhere, URL:http://un.am/en/p/sustainable-development-goal-1

62. World Bank Blogs, Half of the world's poor live in just 5 countries, URL:https://blogs.worldbank.org/opendata/half-world-s-poorlivejust5countriesfbclid=IwAR0CFsWZZecv70NKjeBqJljuiGuG8fEy5_q64BDfIQv4M1nbi6vgJ89orGU

63. Turning Promises into Action, Gender Equality in the 2030 Agenda For Sustainable Development, URL:https://www.undp.org/content/dam/argentina/Publications/G%c3%a9nero/PNUDArgent-LAC-FactSheet.pdf

64. United Nations Development Programme, New data challenges traditional notions of 'rich' and 'poor', URL:http://hdr.undp.org/sites/default/files/2019_mpi_press_release_en.pdf

65. SAWAB, Poverty Alleviation Program,URL:https://sawabbd.org/story/poverty-alleviation-program/

66. World Poverty Clock, URL:https://worldpoverty.io/map

67. Palak, Z. A., State for Information and Communication Technology, Ministry of Post, & Information Technology. (n.d.). By 2030, Bangladesh will be the 24th largest economy. Here's how ICT is driving that growth. Retrieved from https://www.weforum.org/agenda/2019/10/bangladesh-ict-development-economic-growth?utm_source=Facebook Videos&utm_medium=Facebook Videos&utm_campaign=Facebook Video Blogs

68. Oxford Internet Institute, University of Oxford, Where are online workers located? The international division of digital gig work, URL:https://www.oii.ox.ac.uk/blog/where-are-online-workers-located-the-international-division-of-digital-gig-work/

69. http://www3.weforum.org/docs/WEF_Forum_IncGrwth_2018.pdf

70. Encyclopedia Britannica/Plato, URL:https://www.britannica.com/biography/Plato

71. Encyclopedia Britannica/Library of Alexandria, URL:https://www.britannica.com/topic/Library-of-Alexandria

72. UN official page, Sustainable Development Goals, 4. Quality Education URL:https://www.un.org/sustainabledevelopment/education/

73. UN, Quality Education: Why It Matters, URL:https://www.un.org/sustainabledevelopment/wp-content/uploads/2017/02/4.pdf

74. UNESCO, official page, Collection of Lifelong Learning Policies and Strategies, URL:https://uil.unesco.org/lifelong-learning/lifelong-learning-policies

75. OECD official page, Inclusive growth, URL:https://www.oecd.org/inclusive-growth/#inequality-puts-our-world-at-risk

76. World Bank official page, Inclusive Growth vs. Household Finance: A False Choice, URL:https://cgap.org/blog/inclusive-growth-vs-household-finance-false-choice

77. World Economic Forum, The Inclusive Development Index 2018, Summary and Data Highlights, page 3, URL:http://www3.weforum.org/docs/WEF_Forum_IncGrwth_2018.pdf

78. International Monetary Fund, Country Report No. 17/227, URL: file:///C:/Users/Admin/Downloads/cr17227%20(2).pdf
79. The World Bank, Literacy rate, adult total (% of people ages 15 and above) - Armenia, URL:https://data.worldbank.org/indicator/SE.ADT.LITR.ZS?locations=AM
80. OECD, Country Note, Sweden, URL:http://www.oecd.org/education/Sweden-EAG2014-Country-Note.pdf
81. ChildFund International, Poverty and Education, URL:https://www.childfund.org/poverty-and-education/
82. UNESCO, Functional literacy, Definition, URL:http://uis.unesco.org/node/334638
83. ChildFund International, Helping Kenyan Families Build a Future Beyond HIV, URL:https://www.childfund.org/Content/NewsDetail/2147487936/
84. United Nations, Sustainable Development Goals, Goal 5: Achieve gender equality and empower all women and girls, URL:https://www.un.org/sustainabledevelopment/gender-equality/
85. ChildFund International, The Health Impact of Gender Inequality, URL:https://www.childfund.org/Content/NewsDetail/2147489157/
86. Education lifted Finland out of poverty, says professor Kirsti Lonka. (2020, February 19). Retrieved from URL:https://www.helsinki.fi/en/news/education-news/kirsti-lonka-education-lifted-finland-out-of-poverty-but-we-need-to-keep-developing-to-remain-at-the-cutting-edge
87. Centre for Public Impact, A BCG foundation, Education reform in Finland and the comprehensive school system, URL:https://www.centreforpublicimpact.org/case-study/education-policy-in-finland/
88. The World Bank, GDP growth (annual %)-Finland, URL:https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=FI&view=chart

89. The World Bank, Government expenditure on education, total (% of GDP) - Sri Lanka, Finland, URL:https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?locations=LK-FI
90. Big Think, 10 reasons why Finland's education system is the best, URL:https://bigthink.com/mike-colagrossi/no-standardized-tests-no-private-schools-no-stress-10-reasons-why-finlands-education-system-in-the-best-in-the-
91. 10 Top Soft Skills for 2020: What They Are and How To Train Them, URL:https://www.game-learn.com/top-soft-skills-2020-how-to-train-them/
92. United Nations Development Programme, Human Development Reports, About Human Development, URL:http://hdr.undp.org/en/humandev
93. United Nations Armenia, URL:https://www.un.am/hy/news/933?fbclid=IwAR1ahNZ8iNUCK6r0UBxXdHhnFXzLAR1C3rTTg5pFZ_hJ4VOSegNbSs7VxRM

### *Համացանցային կայքեր*

94. https://www.arlis.am/ (Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ), (հասանելի էր 14.04.2020):
95. http://www.osf.am/ (Open Society Foundations Armenia), (հասանելի էր 14.04.2020)
96. https://www.irtek.am/ (Իրավական Տեղեկատվական Կենտրոն), (հասանելի էր 14.04.2020)
97. https://www.gov.am/am/ (Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջ), (հասանելի էր 14.04.2020)
98. http://escs.am/am (ՀՀ կրթության,գիտության,մշակույթի,սպորտի նախարարության պաշտոնական կայքէջ), (հասանելի էր 14.04.2020)
99. http://www.mlsa.am/ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջ), (հասանելի էր 14.04.2020թ.)

100. https://www.armstat.am/am/ (ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ), (հասանելի էր 14.04.2020)

101. http://un.am/ (ՄԱԿ-ի հայաստանյան պաշտոնական կայքէջ, հասանելի էր 14.04.2020)

102. https://portalus.ru/ (Порталус, հասանելի էր 14.04.2020)

103. https://cyberleninka.ru/ (Научная Электронная Библиотека «Киберленинка», հասանելի էր 14.04.2020)

104. https://www.socionauki.ru/ (Соционауки, հասանելի էր 14.04.2020)

105. https://studopedia.org/ (Студопедия, հասանելի էր 14.04.2020)

106. https://www.britannica.com/ (Encyclopedia Britannica), (հասանելի էր 14.04.2020)

107. https://www.un.org/ (United Nations, հասանելի էր 14.04.2020)

108. https://www.worldbank.org/ (The World Bank, հասանելի էր 14.04.2020)

109. https://www.childfund.org/ (ChildFund, հասանելի էր 14.04.2020)

110. http://hdr.undp.org/ (United Nations Development Programme, հասանելի էր 14.04.2020)

111. https://www.game-learn.com/ (Game Learn, հասանելի էր 14.04.2020)

112. https://sawabbd.org/ (SAWAB, հասանելի էր 14.04.2020)

113. https://worldpoverty.io/map (World Poverty Map, հասանելի էր 14.04.2020)

114. https://www.oii.ox.ac.uk/ (Oxford Internet Institute, հասանելի էր 14.04.2020)

115. https://www.wvi.org/armenia (World Vision Armenia, հասանելի էր 14.04.2020)

116. https://unesdoc.unesco.org/ (UNESCO, հասանելի էր 14.04.2020)

117. http://www.oecd.org/ (OECD, հասանելի էր 14.04.2020)

118. https://www.imf.org/ (International Monetary Fund, հասանելի էր 14.04.2020)

# ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարց 1. Նշեք Ձեր տարիքը

- ✓ 18-22
- ✓ 22-30
- ✓ 30 և բարձր

Հարց 2. Նշեք Ձեր սեռը

- ✓ արական
- ✓ իգական

Հարց 3. Նշեք Ձեր կրթությունը

- ✓ միջնակարգ
- ✓ բարձրագույն
- ✓ կրթություն չունեմ

Հարց 4. Աշխատու՞մ եք՝

- ✓ Այո
- ✓ Ոչ

Հարց 5. Ձեր ամսական աշխատավարձի չափը

- ✓ մինչև 68 հզ ՀՀ դրամ
- ✓ 68-200 հզ ՀՀ դրամ
- ✓ 200 հզ ՀՀ դրամ

Հարց 6. Արդյո՞ք աշխատում եք Ձեր մասնագիտությամբ՝

- ✓ Այո
- ✓ Ոչ

Հարց 7. Ձեր աշխատավարձը Ձեզ բավարարում է

- ✓ Այո, լիովին
- ✓ Մասամբ
- ✓ Ոչ, չի բավարարում

Հարց 8. Նշեք Ձեր մասնագիտությունը ( որևէ մասնագիտություն չունենալու դեպքում նշել՝ չունեմ)______________________________________________

Հարց 9. Որքանո՞վ եք կարևորում կրթությունը

- ✓ Շատ եմ կարևորում
- ✓ Բավականին կարևորում եմ
- ✓ Չեմ կարևորում

Հարց 10. Արդյո՞ք Ձեր կատարած ներդրումները կրթություն ստանալիս՝ այսօր արդարացված եք համարում

- ✓ Լիովին
- ✓ Մասամբ
- ✓ Արդարացված չեն
- ✓ Այլ

Հարց 11. Արդյո՞ք կարծում եք, որ ավելի լավ կրթության ու ավելի բարձր կրթական մակարդակ ունենալու դեպքում ավելի շատ եկամուտներ կունենայիք

- ✓ Այո, վստահ եմ
- ✓ Ոչ, չեմ կարծում

Այլ

Հարց 12. Արդյո՞ք կարծում եք, որ առանց կրթության կարող եք մրցունակ լինել շուկայում

- ✓ Այո
- ✓ Ոչ
- ✓ Այլ

Հարց 13. Որքանո՞վ եք Ձեր մասնագիտությամբ աշխատանք փնտրելիս բախվել դժվարությունների՝ մասնագիտության պահանջվածությամբ պայմանավորված

- ✓ Բավականաչափ դժվար է եղել աշխատանք գտնելը
- ✓ Չեմ բախվել
- ✓ Այլ

Հարց 14. Նշեք Ձեր մարզը, քաղաքը

____________________________________________________________